

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(2) 2020

Երևան

ԵՊՀ հրատարակչություն

2021

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ս. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, Ալեք
Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության
ֆակուլտետ:
Հեռ.՝ 060-71-02-43

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուրյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Էլ. կայք՝ publications.yysu.am
publishing.yysu.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@yysu.am
Տպագրական 12.25 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.04.2021
Հանձնված է տպագրության՝
11.11.2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գոհար Գրիգորյան	
ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ	
ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	5
Լարիսա Բաղդասարյան	
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ	
ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՏԵՍԱԿ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ	17
Հրանտ Զիլավյան	
ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ	
ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ.....	38
Գայանե Մելիքյան	
ՀՀ ՏԱՐԱԾՔ ԱՊՕՐԻՆԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ	
ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԿԱՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԵԼԸ՝	
ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍՏԱՆԶԱԾ	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ	52
Արման Բաբախանյան	
«ՔՐԵԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ	
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼԸ ԿԱՄ ՍՏԱՆԱԼԸ ԿԱՄ ՊԱՀՊԱՆԵԼԸ»	
ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ	61
Հայկ Ավետյան	
ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝	
ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔ.....	82
Նորայր Ավագյան	
ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ	
ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ	107
Անահիտ Գալստյան	
ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ	
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	117

Վիկտորյա Հակոբջանյան	
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	137
Քրիստինե Ալեքսանյան	
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱՎԱԼԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	154

**ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲՆՈՒՑԹՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ
ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գոհար Գրիգորյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
գիտական դեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան*

Մնանկությունը պարտապանի անվճարունակության փաստի իրավական ամրագրումն է: Այդ գործընթացը սկսվում է ինչպես սեփական նախաձեռնությամբ՝ կամավոր սնանկության դիմումի հիման վրա, այնպես էլ պարտատիրոջ պահանջով՝ հարկադիրված սնանկության դիմումի հիման վրա: Վերջին տարիներին, հատկապես 2019 թվականին, «Մնանկության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարվել են ծավալուն փոփոխություններ, որոնք ուղղված էին սնանկության գործընթացը առավել թափանցիկ և արդյունավետ դարձնելուն, ինչպես նաև Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) զեկույցում Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը: Ավելին, Կառավարության կողմից 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշման երրորդ հավելվածի տասնչորսերորդ կետով որպես ռազմավարական նպատակ առանձնացվել է «Մնանկության համակարգի արդյունավետության բարձրացումը», իսկ դրա շրջանակում, ի թիվս ռազմավարական այլ ուղղությունների, ներառված է նաև սնանկության ունիվերսալ օրենսդրության մշակման ռազմավարական ուղղությունը: Նշված ռազմավարական ուղղության շրջանակում որպես ռազմավարական գործողություն նախատեսվել է «Մնանկության օրենսգրքի» նախագծի մշակումը:

Միջազգային առևտրի աճը և օտարերկրյա ներդրումների խրախուսման քաղաքականությունը պահանջում են անվճարունակության արդյունավետ գործընթացների իրականացում ինչպես առանձին պետության սահմանների ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Օրենսդրությամբ արդյունավետ, համագործակցային և ճկուն մեխանիզմների բացակայությունը գործընթացը դարձնում է տևական, դժվար և բարդ, ինչն էլ իր հերթին պահանջում է առավել շատ ռեսուրսների ներդրում ցանկալի արդյունքին հասնելու համար: Բացի այդ, սնանկության մասին օրենքներով օտարերկրյա տարրով սնանկության հարաբերությունները կարգավորող դրույթների բացակայությունը պրակտիկայում առաջացնում է իրավական անորոշություն, քանի որ մի քանի պետությունների տարածքում կարող են հարուցվել մեկից ավելի սնանկության վարույթներ այն պարտապանի նկատմամբ, որը գույք ունի այդ պետությունների տարածքում, մինչդեռ զուգահեռ ընթացող վարույթների փոխհարաբերակցության, դատարանների և սնանկության կառավարիչների համագործակցության, սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի ճանաչման և կատարման վերաբերյալ հստակ կարգավորումների բացակայությունը խոչընդոտում են ֆինանսական ծանր դրության մեջ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց ֆինանսական առողջացմանը ու որպես կենսունակ, մրցունակ սուբյեկտ տնտեսական հարաբերություններ վերադառնալուն:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ գտնում ենք, որ ներկայումս վերը նշված ռազմավարական գործողության շրջանակից չի կարող անմասն մնալ անդրսահմանային սնանկության վերաբերյալ օրենսդրական արդյունավետ, պարզեցված և ճկուն կարգավորումների ամրագրումը, այդպիսի հրամայականը բխում է ինչպես ներդրումային և շուկայական առևտրի ոլորտից, այնպես էլ իրավական գործընթացներից (դատական պրակտիկա, նախադեպային որոշումներ և միջազգային լավագույն փորձ):

Այսպիսով՝ անդրսահմանային սնանկության կարգավորումների անհրաժեշտությունը բխում է հետևյալ երկու հիմնական պատճառներից՝ միջազգային տնտեսական հարաբերությունների, առևտրի և ֆինանսների զարգացումը, որոնք արդեն վաղուց հատել են պետական սահմանները, և սնանկության մասին իրավական կարգավորումների անհամապատասխանություն դրանց զարգացման աստիճանին, որը պայմանավորված է ազգային տարբեր համակարգերում սնանկության մասին օրենքների տարբերություններով¹:

Անդրադառնալով միջազգային լավագույն փորձին և դրա շրջանակում միջազգային հայտնի փաստաթղթերին՝ հարկ է նշել հետևյալները՝ Եվրոպական Միության 2000 թ. մայիսի 29-ի սնանկության գործով վարույթի մասին N 1346/2000 Ռեգլամենտը, Սնանկության որոշ միջազգային հիմնախնդիրների մասին Եվրոպական կոնվենցիան (1990 թ.), Միջազգային մասնավոր իրավունքի մասին կոնվենցիան («Բուստամանտեի օրենսգիրքը», 1928 թ.), ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի կողմից ընդունված այնպիսի մոդելային օրենքները, ինչպիսիք են՝ «Անվճարունակության մասին օրենքի օրենսդրական ուղեցույցը», «Անդրսահմանային սնանկության մասին» (այսուհետ՝ Տիպային օրենք), «Անվճարունակության հետ կապված վճիռների ճանաչման և կատարման մասին»:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան իր 1997 թ. դեկտեմբերի 15-ի 52/158 բանաձևում, հիմնավորելով Տիպային օրենքի ընդունումը, ուղղակիորեն հայտարարել է այդ տեքստի ընդունման անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ը կարևորում է այն հանգամանքը, որ պետությունները միջազգային սնանկության ոլորտը կարգավորող օրենք ընդունելիս հնարավորինս չփոփոխեն Տիպային օրենքի դրույթները²: 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ

¹ St' u **Рягузов А. А.**, «Правовое регулирование трансграничной несостоятельности», диссерт., Москва, 2008, էջ 29:

² St' u **Ալեքսանյան Ք.**, «Միջազգային սնանկության իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում», ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (25), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 11:

յամբ Տիպային օրենքն ընդունվել է 51 իրավական համակարգերում, և որի հիմնական ուղղություններն են՝

1. օտարերկրյա ներկայացուցիչների համար դատարան ուղղակի հասանելիության ապահովումը,

2. ճանաչման սկզբունքները և ընթացակարգերը, օգնություն և աջակցության ցուցաբերումը,

3. դատարանների փոխգործակցության իրավական շրջանակները,

4. գուգահեռ ընթացող վարույթների փոխհարաբերակցությունը,

5. հարգել միջազգային ծագումը, աջակցել միասնականությանը և բարեխղճությանը³:

Գրականության մեջ հեղինակները ևս անդրադարձել են անդրսահմանային սնանկության հարցին՝ տալով ինչպես սնանկության հարաբերություններում օտարերկրյա տարրի որոշման և անդրսահմանային սնանկության սահմանազատման չափանիշները, այնպես էլ քննարկել տեսությանը հայտնի սկզբունքները (մեթոդները): Տեսաբանների մեծամասնությունը օտարերկրյա տարրի մասնակցությունը դիտարկում է մի կողմից օտարերկրյա պարտատերերի մասնակցությունը սնանկության վարույթին, մյուս կողմից երկու կամ ավելի պետությունների տարածքում պարտապանի գույք ունենալու դեպքը: Այս տեսակետը կիսում է, օրինակ, պրոֆեսոր Լ. Պ. Անուֆրիսովան⁴, իսկ Դ. Դոտչան և Ա. Համմերը իրենց աշխատանքներում նշել են, որ սնանկության հարաբերություններում օտարերկրյա տարրը բնութագրվում է հետևյալ երեք հնարավոր դեպքերում՝ պարտապան, պարտատեր և պարտապանի գույք⁵: Տեսաբան Ս. Ս. Տրուտնիկովն առաջարկում է օտարերկրյա տարրով սնանկության հարաբերությունների շարքում դիտարկել նաև՝ օտարերկրյա անձանց մաս-

³ Տե՛ս <https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/1997-model-law-insol-2013-guide-enactment-e.pdf>:

⁴ Տե՛ս **Мохова Е. В.**, «Доктрина основного производства при трансграничной несостоятельности юридических лиц», диссерт., Москва, 2009, էջ 25:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

նակցությունը, այդ թվում՝ պարտաբերերի կամ հիմնադիրների (մասնակիցների) մասնակցությունը, պարտապանի գույքային զանգվածը կազմող գույքային միավորները այն պետության սահմաններից դուրս գտնվելը, որի տարածքում հարուցվել է սնանկության վարույթը, ինչպես նաև պահանջների կարգավիճակի առանձնահատկությունները՝ օտարերկրյա իրավունքին համապատասխան⁶:

Քննարկվող ինստիտուտի շրջանակում հատկապես կարևոր է անդրադարձ կատարել իրավունքին հայտնի իրավական կարգավորման երկու հիմնական մոդելներին՝ ունիվերսալիզմ և տարածքայնություն:

Պատմականորեն ձևավորված առաջին մեթոդը տարածքայնությունն է, որը բնութագրվում է հետևյալով. տարբեր պետություններում պարտապանի նկատմամբ հարուցվում են մի քանի սնանկության վարույթներ, սակայն յուրաքանչյուրում իրավական կարգավորումը սահմանափակված է միայն ներպետական օրենսդրությամբ՝ անկախ անդրսահմանային սնանկությանը բնորոշ հատկանիշներից, որի արդյունքում պարտապանի՝ իրացման ենթակա և պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղվող գույքի կազմը ներառում է միայն այդ պետության տարածքում գտնվող պարտապանին պատկանող գույքը, և վերջապես, բացառվում է այլ վարույթների հետ փոխհարաբերակցությունը:

Իրավական կարգավորման այս մոդելը, սակայն, գտնում ենք, որ արդարացիորեն քննադատության է ենթարկվում, քանի որ այն, պարտապանի նկատմամբ զուգահեռ ընթացող վարույթների գոյությունը թույլ տալով, հանգեցնում է անդրսահմանային սնանկության իրավական կարգավորման մասնատվածությանը, պարտատերերին դնում անհավասար վիճակի մեջ և նվազեցնում ակտիվների արժեքը՝ միասնական ընթացակարգի շրջանակներում գնահատելու և դրանք իրացնելու անհնարինության պատճառով: Բացի այդ, տարածքայ-

⁶ St' u **Рягузов А. А.**, «Правовое регулирование трансграничной несостоятельности», диссерт., Москва, 2008, էջ 40:

նությունը մաքուր իմաստով հանգեցնում է «պարտատերերի մրցավազքի» (race of creditors): Այսպես, տարբեր իրավասություններում պարտատերերի միջև գույքի իրացումից ստացված միջոցների անհավասար բաշխումը կարող է հանգեցնել հետևյալին. մի պետության տարածքում, որտեղ պարտապանը կունենա շատ ակտիվներ, կարող են լինել քիչ պարտատերեր, և հակառակը՝ մի պետությունում, որտեղ պարտապանը կունենա քիչ ակտիվներ, կարող է վարույթին մասնակցեն շատ պարտատերեր, այդպիսի դեպքերից խուսափելու համար պարտատերերը կարող են ձգտել վարույթ հարուցել այն պետության տարածքում, որտեղ պարտապանի ակտիվները առավել շատ են՝ պահանջների առավել շատ չափով բավարարում ստանալու համար:

Եթե փորձենք հակիրճ բնութագրել ունիվերսալիզմի մոդելը, ապա պետք է մեջբերել Ֆ. Թանգի խոսքերը. «Մեկ իրավունք, մեկ դատարան»: Այսինքն՝ պարտապանի նկատմամբ հարուցվում է անվճարունակության մեկ վարույթ՝ նույն կանոնների հիման վրա, ինչը բացառում է գուգահեռ վարույթներ հարուցելու հնարավորությունը, սակայն մեկ վարույթում միավորում է պարտապանին պատկանող ողջ գույքը՝ անկախ դրանց գտնվելու վայրից՝ ապահովելով նաև իրավագոր դատարանի կողմից կայացված դատական ակտերի գործողությունը տվյալ տարածքից դուրս⁷: Ձ. Վեստֆրուկի գնահատմամբ՝ անվճարունակության ինստիտուտի բնույթն այնպիսին է, որ այն պետք է համապատասխանի շուկայի պայմաններին, և եթե շուկան դառնա գլոբալ, ապա անվճարունակության իրավական կարգավորումը նույնպես պետք է դառնա գլոբալ:

Այս մոդելը, սակայն, ևս զերծ չէ թերություններից, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

1) հիմնական թերությունը, որը հասարակական հարաբերությունների զարգացման այս փուլում անիրական է դարձնում վերջի-

⁷ St' u **Собина Л. Ю.**, «Признание иностранных банкротств в международном частном праве», диссерт., Москва, 2010, էջ 38-39, 44:

նիս գոյությունը, այն է, որ դժվար է որոշել այն միակ իրավասու երկիրը, որի սնանկության մասին օրենքը կիրառելի կլինի առաջացող հարաբերությունների նկատմամբ, և որի դատարանը իրավասու է քննել այդ սնանկության գործը: Մի կողմից, պետությունները չեն ցանկանում հրաժարվել իրենց տարածքային իրավասությունից՝ հոգուտ օտարերկրյա իրավասություն, մյուս կողմից, առանձին պետությունների օրենսդրություններում բացակայում են որոշակի հարցեր կարգավորող ինստիտուտներ⁸:

2) այս մոդելի շրջանակում միշտ չէ, որ հնարավոր է պատշաճ ապահովել պարտատերերի նկատմամբ հավասարության սկզբունքը. պարտատերերից ոմանք ստիպված են մասնակցել օտարերկրյա պետության տարածքում հարուցված սնանկության վարույթին, որը պահանջում է առավել մեծ ռեսուրսների ծախսում՝ ի տարբերության տվյալ պետության տարածքում գտնվող պարտատերերի⁹:

Ա. Բերենդսայի պնդմամբ՝ որևէ երկրում գործնականում չի ընդունվել տարածքայնության կամ ունիվերսալիզմի մոդելները մաքուր իմաստով: Նշված հանգամանքով պայմանավորված ներկայումս հայտնի են նաև վերը նշված մոդելների հետևյալ տարբերակները՝ համագործակցային տարածքայնություն և ձևափոխված ունիվերսալիզմ¹⁰:

Վերոգրյալի լույսի ներքո քննարկելով ներպետական օրենսդրական կարգավորումները՝ հարկ է նկատել, որ Օրենքում միայն մեկ տեղ է հիշատակված օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վարույթների քննության հնարավորության հարցը: Մասնավորապես, Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես պարտապան՝ օտարերկրյա կամ քաղաքացիություն չունեցող

⁸ Օրինակ՝ ՀՀ-ում բացակայում է կրկնակի լուծարման ինստիտուտը, որը, սակայն, գործում է օրինակ Ավստրիայում: Նման պայմաններում առաջանում են մի շարք խնդիրներ այդ ինստիտուտների կիրառման հարցում:

⁹ Տե՛ս **Карелина С. А.**, «Несостоятельность (банкротство)», учебный курс, Том 2, Москва, Статут, 2019, էջ 726-727:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 49, 51:

անձի մասնակցությամբ անվճարունակության (սնանկության) հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի դրույթները, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է դատական պրակտիկային, ապա հարկ է նկատել, որ օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության գործերը ՀՀ դատարաններում առավել մեծ թիվ են կազմում միայն վերջին երկու տարվա ընթացքում: Իսկ նախադեպային պրակտիկայում Վճռաբեկ դատարանը իր դիրքորոշումը հայտնել է միայն մեկ տարի առաջ՝ արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետության դատարանները կարող են քննել օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական՝ այդ թվում սնանկության գործեր, եթե օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում¹¹:

Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշման հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ ՀՀ Բարձրագույն դատական ատյանը ևս հնարավոր է դիտարկել օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի քննությունը Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից, այն է՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի ենթակայության հարցը:

Մյուս կողմից, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) գնահատմամբ՝ թեև օրենսդրությամբ որևէ արգելք նախատեսված չէ ՀՀ սնանկության դատարանի կողմից քննելու օտարերկրյա պարտատերերի կամ օտարերկրյա պետության տարածքում գույք ունեցող պարտապանի մասնակցությամբ սնանկության գործ, սակայն օտարերկրյա անձին սնակ ճանաչելու դեպքում անհնարին է սնանկության վարույթին բնորոշ գործո-

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0287/04/15 սնանկության գործով 30.04.2020 թվականի որոշումը, ինչպես նաև թիվ ԵԴ/0930/04/18 սնանկության գործով 29.01.2021 թվականի որոշումը:

դությունների կատարումն այլ երկրի տարածքում և յուրաքանչյուր գործառույթ իրականացնելու համար անհրաժեշտ կլինի այլ պետության հետ փոխադարձ համաձայնություն, այսինքն՝ ՀՀ սնանկության դատարանի կողմից դիմումի վարույթ ընդունելու պայմաններում անգամ, սնանկության վարույթի առանձնահատկություններով պայմանավորված, հնարավոր չի լինի իրականացնել դիմումի արդյունավետ քննություն և ապահովել սնանկության վարույթի շրջանակներում իրականացվող այլ գործողությունների պատշաճ կատարումը¹²:

Այլ կերպ ասած, թեև Վերաքննիչ դատարանը ևս չի բացառել օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության վեճերի ենթակայությունը Հայաստանի Հանրապետության դատարաններին, սակայն ընդգծելով սնանկության վարույթի առանձնահատկությունները, հատկապես՝ սնանկության վարույթին բնութագրական փուլայնությունը, այժմ բացառում է ներկայացված դիմումները վարույթ ընդունելու հնարավորությունը: Մասնավորապես, սնանկության վարույթը և պարտապանին սնանկ ճանաչելու գործընթացը բաղկացած են մի քանի փուլերից, որոնցից յուրաքանչյուրի շրջանակում իրականացվող գործողություններն իրենց բնույթով տարբերվում են քաղաքացիական կամ վարչական գործերից իրենց ընթացակարգով, դատական ակտերի կատարման հետ կապված գործողություններով: Նշված փուլերից յուրաքանչյուրը, որի շրջանակը կազմող գործողությունները իրականացվում են սնանկության գործով կառավարչի կողմից՝ ուղղված պահանջատերերի հայտնաբերմանը, պարտքերի հավաքագրմանը և այլն, ունի իր նպատակները, որոնք կոչված են լուծելու որոշակի խնդիրներ, սակայն որպես այդպիսին կարող են իրականացվել միայն ՀՀ տարածքում՝ հաշվի առնելով, որ Օրենքի կարգավորումների ուժով սնանկության գործով կառավարչի լիազորությունները կարող են ընդգրկել միայն ՀՀ տարածքը:

¹² Տե՛ս Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ՍՆԴ/0923/04/20 սնանկության գործով 27.05.2020 թվականի որոշումը:

Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, գրականության մեջ տեսաբանների արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև ներպետական օրենսդրական կարգավորումները՝ գտնում ենք, որ ՀՀ սնանկության դատարանը կարող է քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ սնանկության գործեր, սակայն գործնականում խնդիրներ կարող են առաջանալ սնանկության վարույթի այնպիսի փուլերի ընթացքում, ինչպիսիք են՝ պարտատերերի կողմից պահանջների ներկայացումը, դրանց գրանցումն ու հաստատումը դատարանում, տվյալ պետության սահմաններից դուրս պարտապանին սեփականության իրավունքով պատկանող և բռնագանձման ենթակա գույք ունենալու դեպքում դրա իրացման հնարավորությունը և ընթացակարգը, այդ թվում՝ աճուրդի կազմակերպումն ու իրականացումը, սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորությունը ՀՀ սահմաններից դուրս, ինչպես նաև գուգահեռ ընթացող վարույթների դեպքում թե՛ դատարանների, և թե՛ սնանկության գործերով կառավարիչների համագործակցությունը: Այլ կերպ ասած, Օրենքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ներդնելով արդյունավետ մեխանիզմներ և կառուցակարգեր նշված հարցերի լուծման և օտարերկրյա տարրով սնանկության իրավահարաբերությունների պատշաճ իրականացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ.

1. սնանկության իրավահարաբերությունը կարող է պարունակել օտարերկրյա տարրեր. «անդրսահմանային սնանկությունը» բնութագրվում է որպես անձի անվճարունակությունից բխող և օտարերկրյա տարրով ծանրաբեռնված իրավահարաբերություն, որն արտահայտվում, սակայն չի սպառվում հետևյալ դեպքերով՝ պարտապանի գույքի առկայությունը այլ պետությունում, օտարերկրյա պարտատերերի և պարտապանի մասնակցությունը իրավահարաբերությանը, ինչպես նաև երկու կամ ավելի պետության տարածքում

նույն պարտապանի նկատմամբ սնանկության վարույթների հարուցում,

2. պետության իրավական համակարգում պետք է սահմանված լինեն հստակ կանոններ՝ կապված իրավագործության, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման, տարբեր պետությունների դատարանների համագործակցության և կիրառելի իրավունքի ընտրության հարցերի վերաբերյալ, հակառակ պարագայում՝ հնարավոր չէ իրականացնել սնանկ ճանաչելու մասին դիմումի պատշաճ քննություն և ապահովել սնանկության վարույթի յուրաքանչյուր փուլի շրջանակում իրականացվող գործողությունների արդյունավետությունը:

ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И КРИТЕРИИ ОПРЕДЕЛЕНИЯ ТРАНСГРАНИЧНОЙ НЕСОСТОЯТЕЛЬНОСТИ

Григорян Гоар

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

В статье рассматривается проблемы правового характеристики трансграничной несостоятельности, представлены методы (теории) регулирования трансграничной несостоятельности, преимущества и недостатки методов территориальности и универсализма. В работе представлены основные положения правовых документов, принятых знаменитыми международными организациями.

LEGAL CHARACTERISTICS AND CRITERIA FOR DETERMINING CROSS- BORDER INSOLVENCY

Gohar Grigoryan

PhD student at YSU Chair of Civil Procedure

The article discusses the problems of the legal characteristics of cross-border insolvency, presents the methods (theories) of regulating cross-border insolvency, the advantages and disadvantages of the methods of territoriality and universalism. The article presents the main provisions of legal documents adopted by famous international organizations.

Բանալի բառեր - անդրասահմանային սնանկություն, ՅՈՒՆՍԻՏՐԱԼ, ունիվերսալիզմ, տարածքայնություն, օտարերկրյա քաղաքացի:

Ключевые слова: трансграничная несостоятельность, ЮНСИТРАЛ, универсализм, территориальность, иностранный гражданин.

Key words: cross-border insolvency, UNCITRAL, universalism, territorialism, foreign citizen.

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ
ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՏԵՍԱԿ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ**

Լարիսա Բաղդասարյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
գիտական դեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան*

Դատավարական բարեփոխումներից հետո 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով¹ (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), որպես հատուկ հայցային վարույթի տեսակ, նախատեսվեց կորպորատիվ վեճերով գործերի վարույթը, որով սահմանվեց այն գործերի շրջանակը, որոնք համարվում են կորպորատիվ վեճեր, ինչպես նաև այդ գործերի քննության դատական կարգը:

ՀՀ Սահմանադրության² 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն Օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

¹ Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

² Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

Մինչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կորպորատիվ վեճերով գործերի առանձին հատուկ հայցային վարույթ սահմանելը, նյութական իրավունքի նորմերով արդեն իսկ սահմանված էին ընկերության, ընկերության մասնակցի իրավունքների խախտմամբ կայացված գործողությունների վիճարկումը և դրանց իրացման կանոնները, ընդ որում, որոշակի դեպքերում նյութական իրավունքի նորմերով սահմանված են իմպերատիվ կանոններ, որոնց պահպանման առկայության դեպքում միայն անձը կարող է համարվել շահագրգիռ անձ: Մասնավորապես՝ նշված իրավակարգավորումները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով³, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով⁴, «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով⁵, «Բանկերի և փոխկալին գործունեության մասին» օրենքով⁶, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով⁷ և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով⁸: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ կորպորատիվ վեճերով շահագրգիռ անձինք են կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտները՝ կորպորացիան, կորպորացիայի մասնակիցները: Սակայն կորպորատիվ վեճերի սուբյեկտներ են դիտարկվում նաև կորպորացիայի կառավարման մարմինները ևս: Մասնավորապես՝ օրինակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խորհրդի անդամները, բաժնետիրական ընկերության տնօրեն-

³ Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

⁴ Ընդունվել է 25.09.2001 թ., ուժի մեջ է մտել 06.12.2001 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:

⁵ Ընդունվել է 24.10.2001 թ., ուժի մեջ է մտել 07.12.2001 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

⁶ Ընդունվել է 30.06.1996 թ., ուժի մեջ է մտել 29.08.1996 թ.: Տե՛ս ՀՀԱԺՏ 1996/12:

⁷ Ընդունվել է 26.12.2002 թ., ուժի մեջ է մտել 22.02.2003 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2003.02.12/9(244) Հոդ.155:

⁸ Ընդունվել է 16.12.2016 թ., ուժի մեջ է մտել 04.02.2017 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) Հոդ.58:

նը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար: Նմանատիպ կարգավորում է նախատեսված «Մասնականափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նույնպես (46-րդ հոդված): Ուստի՝ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների կառավարման մարմինները (տնօրենների խորհուրդ, ընդհանուր ժողով, գործադիր մարմին) ևս ինքնուրույն սուբյեկտներ են կորպորատիվ վեճերով: Իրավաբանական գրականության մեջ կա նաև կարծիք, որ լայն իմաստով կորպորատիվ վեճերի մասնակիցներ կարող են լինել այլ անձինք ևս: Օրինակ՝ անձինք, ովքեր ունեն հանրային շահ տվյալ կորպորատիվ վեճով (պաշտոնատար անձինք, իրավապահ մարմիններ, կորպորացիայի գործընկերները, պարտատերերը և այլն)⁹: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ կորպորատիվ վեճերով որպես գործին մասնակցող անձինք կարող են հանդես գալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձանց մասնակիցները, խորհրդի անդամները, տնօրենը, վարչության և տնօրինության անդամները, կառավարիչը, դուստր կամ կախյալ ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մարմինները՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորը և օրենքով նախատեսված այլ անձինք:

Գոյություն ունեն դատավարագետների՝ հայցերի դասակարգման տարբեր տեսակետներ, որոնց գերակշիռ մասն են կազմում հետևյալ հայցի տեսակները: Ըստ Ռ. Գ. Պետրոսյանի՝ հայցերը բաժանվում են երկու տեսակի՝ վճռող և ճանաչողական հայցերի: Վճռող

⁹ См. у Даниельян А. А., Корпорация и корпоративные конфликты. М. 2007, էջ 79-80:

հայցերը ընդգրկում են դատական պաշտպանության բոլոր եղանակները և առավել տարածված են դատական պրակտիկայում: Այս հայցերում հայցվորը խնդրում է ա) ճանաչել իր վիճելի իրավունքը, բացի այդ բ) պարտավորեցնել պատասխանողին իր օգտին կատարելու վիճելի իրավահարաբերությունից բխող որոշակի գործողություններ («կատարողական հայց») կամ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից («արգելող հայց»): Ճանաչողական հայցերը դեռևս չխախտված իրավունքները հնարավոր խախտումներից պաշտպանելուն, այսինքն՝ իրավունքի վիճելիությունը կամ անորոշությունը վերացնելուն ուղղված հայցերն են: Ճանաչողական հայցերը բաժանվում են դրական հայցերի և բացասական հայցերի¹⁰: Իրավաբանական գրականության մեջ կա նաև կարծիք, որ գոյություն ունեն փոխակերպիչ կամ կոնստիտուտիվ հայցեր, որոնք ուղղված են իրավահարաբերություններ ստեղծելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն¹¹: Որպես քաղաքացիադատավարական հայցային վարույթի տարբերակված ձև հանդիսանում են խմբային հայցերը: Դատավարական բարեփոխումներից հետո այս ինստիտուտը ևս ներդրվեց ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում:

Մասնավոր իրավահարաբերությունների առաջացումը հիմք դրեց մասնավոր ձեռնարկատիրությունների առաջացմանը, իսկ կորպորացիայի մասնակիցների շահերը ոչ միշտ էին համապատասխանում կորպորացիայի շահերին, որն էլ պրակտիկորեն զարկ տվեց «անուղղակի հայցերի» առաջացմանը: Որպես անուղղակի հայցի տեսակ են համարվում կորպորատիվ վեճերից բխող հայցերի գերակշիռ մասը: Անուղղակի հայցերի առանձնահատկությունը այն է, որ հայցվորը իր շահերը պաշտպանում է ոչ թե անմիջականորեն,

¹⁰ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատարակություն, Երևան, «Ոսկան Երևանցի» տպագրատուն, 2012, էջ 241-242:

¹¹ Տե՛ս **Гурвич М. А.**, Судебное решение. М. 1976, էջ 32 // Гурвич М.А., Учение об иске состав виды М. 1981, էջ 21 // Мясникова Н.К. Виды исков в гражданском судопроизводстве: Учебное пособие. Саратов. 2002, էջ 49:

այլ՝ միջնորդավորված՝ ներկայացնելով հայց ի պաշտպանություն այլ անձանց իրավունքների: Օրինակ՝ բաժնետերերը բաժնետիրական ընկերության շահերի պաշտպանության հայց են ներկայացնում դատարան ընդդեմ կառավարման մարմնի: Սա բաժնետիրական ընկերության իրավունքների պաշտպանության հայցի տեսակ է, որտեղ հայցվորները բաժնետերերն են, իսկ ղեկավար մարմինը՝ պատասխանողը: Հայցվորները պետք է ապացուցեն, որ կառավարման մարմնի գործողությունները վնաս են պատճառում ընկերության գործունեությանը: Անուղղակի հայցերով վճիռը կայացվում է իրավունքների պաշտպանության: Վնասների հատուցումից հետո բարձրանում է բաժնետոմսի շուկայական արժեքը, որի արդյունքում, փաստորեն, բաժնետերերը անուղղակիորեն ստանում են օգուտ: Իսկ երբ բաժնետերերը փորձում են պաշտպանել իրենց իսկ շահերը և ոչ՝ կորպորացիայի, այդ դեպքում հայցն անուղղակի չէ: Այդպիսի հայցերը կարող են վերաբերել բաժնետերերի շահութաբաժինների վճարմանը, իրենց պատճառված վնասի հատուցմանը և այլն¹²: Անուղղակի հայցերը, որպես դատավարական ինստիտուտ, իրենց ժամանակակից տեսքով առաջացել են 20-րդ դարում անգլո-սաքսոնական իրավական համակարգում: Այս դատավարական ինստիտուտն առաջացել է դեռևս մինչ առաջին իրավաբանական անձանց ի հայտ գալը և կապված է տրաստների ստեղծման հետ: Գ. Թոմասը և Ա. Հադսոնը պնդում են, որ ժամանակակից իրավաբանական անձանց մասին օրենսդրական պատկերացումները ստեղծվել են տրաստի պայմանագրի հիման վրա (հավատարմագրային կառավարման պայմանագիր)¹³: Է.Ջենկսը տրաստի պայմանագիրը բնութագրում է որպես ինքնակամ և բարեխղճորեն կատարվող պարտականություն, որը սահմանված է օրենքով, որի հիմքով նման պարտականություն ստանձնող անձը պարտավորվում է իրեն հանձնված գույքը բա-

¹² См у **Мясникова Н. К.**, Виды исков в гражданском судопроизводстве: Учебное пособие. Саратов. 2002, էջ 72:

¹³ См у **Tomas G., Hudson A.**, The Law of Trusts. N.Y. 2004, էջ 935:

րելիզճորեն կառավարել ի շահ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց¹⁴: Ընկերությունները, որպես իրավաբանական անձ, բավականին հազվադեպ էին ստեղծվում, քանի որ դրանք պետք է ստեղծվեին թագավորի հրամանագրով: Այդ պատճառով էլ ընկերությունները, հիմնականում բարեգործական ընկերությունները, ստեղծվում էին ոչ թե իրավաբանական անձի կարգավիճակով, այլ՝ տրաստի պայմանագրի հիման վրա: Դա հանգեցրեց նրան, որ տնօրենը հանդես էր գալիս որպես հավատարմագրային կառավարիչ, ով պետք է բարելիզճորեն կառավարեր ընկերությունը՝ ի շահ բենեֆիցիարների՝ մասնակիցների¹⁵: Տնօրենի՝ որպես հավատարմագրային կառավարչի և բենեֆիցիարների՝ որպես ընկերության փայտատերերի, բաժնետերերի հանդիսանալը պահպանվել է անգլիական և ամերիկյան դատական նախադեպերում: Այդպիսի տեսակետ կարելի է տեսնել Ռոբինսոնը ընդդեմ Սմիթի 1832 ամերիկյան առաջին դատական գործով, որտեղ դատավորը թույլ էր տվել ընկերության բաժնետերերին իրենց իսկ անունից ներկայացնել ներկայացուցչական հայց ընդդեմ կորպորացիայի գործադիր մարմնի ղեկավարի¹⁶:

Անգլո-սաքսոնական իրավական համակարգերում գործնականում բավականին զարգացած է անուղղակի հայցերերով գործերի քննությունը: Հիմնականում նման գործերով վեճի առարկա են հանդիսանում կորպորացիայի ոչ պատշաճ պարտականությունների կատարումը: Երբեմն, օրինակ, տնօրենների խորհրդի դիրքորոշումները համընկնում են բաժնետերերի տեսակետների հետ, երբեմն՝ ոչ, և անուղղակի հայցը միակ միջոցն է դատարան հայց ներկայացնելու համար¹⁷: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ֆեդերալ

¹⁴ Տե՛ս **Дженкс Э.**, Английское право (Источники права. Судостроительство. Судопроизводство. Уголовное право. Гражданское право). М. 1947, էջ 318:

¹⁵ Տե՛ս **Турьшев П. В.**, Траст и договор доверительного управления имуществом: Дис... к. ю. н. М., 1997, էջ 34-35:

¹⁶ Տե՛ս **Васильева Т. А.**, Косвенный иск в цивилистическом процессе (сравнительно-правовое исследование). М. 2015, էջ 10 // Robinson v. Smith, 3 Paige Ch. 231 /N.Y. Ch. 1832/:

¹⁷ Տե՛ս **Мясникова Н. К.**, Виды исков в гражданском судопроизводстве: Учебное

օրենսդրության համաձայն՝ կորպորացիան կառավարման մարմինների միջոցով հայց ներկայացնելու իրավունք չունի, սակայն բաժնետերերի միջոցով անուղղակի հայց ներկայացնել թույլատրվում է: ԱՄՆ-ում, որտեղ բավականին հաճախ են հանդիպում խմբային և ներկայացուցչական հայցերը, մինչև 1996 թվականը ներկայացուցչական հայցերը խմբային հայցերի տարատեսակ էին, այնուհետև օրենսդրական բարեփոխումները բերեցին նրան, որ վերջինս առանձնացավ: ԱՄՆ ֆեդերալ դատարանների քաղաքացիական դատավարության օրենսդրության համաձայն՝ դատարաններին ենթակա են քննության այն ներկայացուցչական հայցերը, որոնք ներկայացվել են բաժնետերերի կողմից ընդդեմ կառավարման մարմինների՝ պարտավորեցնելով կորպորացիային կատարելու որոշակի գործողություններ, ինչպես նաև վնասների հատուցման պահանջով, որոնք պատճառվել են կառավարման մարմինների կողմից (fiduciary duties): Հայցվորը պետք է ապացուցի, որ գործարքի կնքման ժամանակ հանդիսացել է կորպորացիայի մասնակից կամ էլ տվյալ ժամանակահատվածում բաժնետոմսերը իր կողմից ձեռք են բերվել օրինական կերպով¹⁸: Անգլիայում ևս կոլեկտիվ շահերի պաշտպանության համար օգտվում են խմբային և ներկայացուցչական հայցերից¹⁹: Սակայն իրավաբանական գրականության մեջ անուղղակի հայցերը հայցերի դասակարգման մեջ իրենց ուրույն տեղն ունեն և տարբերվում են խմբային և ներկայացուցչական հայցերից: Այսպես, ներկայացուցչական և խմբային հայցերը, Ն. Էնդրյուսի կարծիքով, անգլիական իրավական համակարգում բնութագրվում է որպես բազմակողմ դատավարության տեսակ:²⁰ Ներկայացուցչական հայցերով անհրա-

пособие. Саратов. 2002, էջ 74:

¹⁸ St' u Federal Rules of Civil Procedure. United States. Supreme Court. 1992-1993 educational edition. West Publishing Co. St. Paul Minn. 1992, էջ 70:

¹⁹ St' u **Малешин Д. Я.**, Гражданская процессуальная система России. М. Статут, 2011, էջ 203-226:

²⁰ St' u **Andrews N.**, Multi-party proceedings in England: representative and group actions // Duke Journal of comparative and international law. 2001. Vol. 11, էջ 250:

Ժեշտ է ընդհանուր շահ (հայցվորի սուբյեկտիվ իրավունքը նույնպես պետք է խախտված լինի), բանավոր դատական քննության բացակայություն (ընդ որում նման կարգ սահմանված է նաև խմբային և կորպորատիվ հայցերով), յուրաքանչյուր կողմի առանձին դիրքորոշում հայտնելու իրավունք, անձը, ով չի հանդիսանում գործին մասնակցող անձ դատարանի որոշմամբ կարող է պատասխանողից պահանջել դատական ակտի կատարում: Մյուս առանձնահատկությունը ներկայացուցչական հայցային վարույթի այն է, որ այն կրում է դեկլարատիվ բնույթ: Հայցվորները հայցի հետ միաժամանակ պետք է ներկայացնեն միջնորդություն ներկայացուցչական վարույթ հարուցելու և իրենց որպես տուժող ճանաչելու մասին, այնուհետև դատարանի որոշման հիման վրա գործի քննությունը տեղափոխվում է երկրորդ փուլ, որտեղ հայցվորները պետք է ապացուցեն, որ վնաս են կրել: Մինչդեռ անուղղակի հայցերով նման կարգ սահմանված չէ: Բացի այդ՝ կորպորացիայի մասնակիցը հայց է ներկայացնում կորպորացիայի անունից և ոչ նմանատիպ շահ ունեցող անձանց խմբի անունից²¹:

Իսկ խմբային հայցերի առանձնահատկությունն այն է, որ խմբային հայցերով վերջնական որոշումը պարտադիր է դառնում նաև այն անձանց համար, ովքեր նույն կարգավիճակում են գտնվում հայց ներկայացնողների հետ²²:

Այսպիսով, կորպորատիվ վեճերով ներկայացվող հայցերի գերակշիռ մասը հանդիսանում են անուղղակի հայցեր, որտեղ կորպորացիայի մասնակիցներն իրավունքների խախտման փաստի առնչությամբ ներկայացնում են հայց, որն ուղղված է կորպորացիայի գործունեության կարգավորմանը, որտեղ հայցվորները չունեն գույքային և ոչ գույքային անմիջական շահ, մինչդեռ նման շահի առկա-

²¹ St' u **Васильева Т. А.**, Косвенный иск в цивилистическом процессе (сравнительноправовое исследование). М. 2015 // <https://docplayer.ru/40665073--Kosvennyy-isk-v-civilisticheskom-processe.html> (12.04.2021):

²² St' u **Вафин Я.**, Особенности судопроизводства по групповым искам. Арбитражный и гражданский процесс, 2009. N 9, էջ 34:

յության պայմաններում հայցը կդադարի *անուղղակի հայց* լինելուց, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ այն հայցերը, որոնք ուղղված չեն կորպորացիայի կազմակերպչիրավական հարցերի լուծմանը և նպատակ են հետապնդում ուղղակիորեն պաշտպանելու կորպորացիայի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքները, չեն հանդիսանում անուղղակի հայցեր:

Անդրադառնանք կորպորատիվ իրավահարաբերություններից բխող վեճերի առարկային:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածը սահմանում է այն գործերը, որոնք համարվում են կորպորատիվ վեճեր: Նշված հոդվածի լույսի ներքո կարող ենք առանձնացնել կորպորատիվ վեճերի առարկան: Դրանք իրավաբանական անձի ստեղծման, կառավարման և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության) հետ կապված իրավահարաբերություններից բխող հետևյալ վեճերն են.

- իրավաբանական անձի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման հետ կապված վեճերը,

- բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի, կոոպերատիվի անդամների փայերի պատկանելության, դրանց նկատմամբ սահմանափակումների և այդ սահմանափակումներից բխող իրավունքների իրականացման հետ կապված վեճերը, ներառյալ՝ բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի, կոոպերատիվի անդամների փայերի կապակցությամբ կնքված գործարքներից բխող, այդ գործարքներն անվավեր ճանաչելու և/կամ

- անվավերության հետևանքները կիրառելու, բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի վրա բռնագանձում տարածելու հետ կապված վեճերը, բացառությամբ բաժնետոմսեր, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասեր, կոոպերատիվի անդամի փայեր ներառող ժառանգություն-

նը կամ ամուսինների ընդհանուր սեփականությունը բաժանելու հետ կապված վեճերի,

- իրավաբանական անձի հիմնադիրների, մասնակիցների կամ անդամների՝ իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու, իրավաբանական անձի կնքած գործարքն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքները կիրառելու վերաբերյալ պահանջների հետ կապված վեճերը,

- իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների ձևավորման կամ դրանց կազմում ընդգրկված անձանց նշանակելու (ընտրելու), այդ անձանց լիազորությունները դադարեցնելու, կասեցնելու, իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների կազմում ընդգրկված կամ նախկինում ընդգրկված անձանց պատասխանատվության հետ կապված վեճերը,

- արժեթղթերի թողարկման, ներառյալ՝ թողարկողի կառավարման մարմինների որոշումների իրավաչափության և արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքները վիճարկելու հետ կապված վեճերը,

- արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությունից բխող այն վեճերը, որոնք կապված են բաժնետոմսերի և այլ արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման (գրանցման), ինչպես նաև արժեթղթերի տեղաբաշխման և/կամ շրջանառության կապակցությամբ օրենքով նախատեսված այլ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման հետ,

- իրավաբանական անձի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման հետ կապված վեճերը,

- իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումների իրավաչափության հետ կապված վեճերը,

- իրավաբանական անձի մասնակցի (անդամի)՝ իրավաբանական անձից դուրս գալու և հեռացնելու հետ կապված վեճերը,

- իրավաբանական անձի մասնակցի (անդամի)՝ օրենքով նախատեսված իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման հետ կապված վեճերը:

Վերը հիշատակված իրավանորմի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ներպետական օրենսդրությամբ ամրագրված անուղղակի հայցերը: Դրանք այն գործերն են, որոնցով (1) վիճարկվում է իրավաբանական անձի կնքած գործարքները և դրանց անվավերության հետևանքները, (2) իրավաբանական անձի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումների իրավաչափությունը, (3) իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումների իրավաչափությունը, (4) քննվում է իրավաբանական անձի մասնակցի (անդամի)՝ իրավաբանական անձից դուրս գալու և հեռացնելու հետ կապված վեճերը, (5) իրավաբանական անձին պատճառված վնասի հատուցման հետ կապված վեճերը, (6) իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների ձևավորման կամ դրանց կազմում ընդգրկված անձանց նշանակելու (ընտրելու), այդ անձանց լիազորությունները դադարեցնելու, կասեցնելու, իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների կազմում ընդգրկված կամ նախկինում ընդգրկված անձանց պատասխանատվության հետ կապված վեճերը, (7) ինչպես նաև իրավաբանական անձի մասնակցի (անդամի)՝ օրենքով նախատեսված իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման հետ կապված այլ վեճերը: Ինչպես նկատում ենք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված իրավական վեճերի գերակշիռ մասն անուղղակի հայցերն են, այսինքն՝ շահագրգիռ անձի կողմից ներկայացված պահանջը վերաբերում է իրավաբանական անձի գույքային իրավունքների պաշտպանությանը, սակայն այն չի բացառում նաև շահագրգիռ անձի՝ գույքային իրավունքի պաշտպանությունը, քանի որ ի վերջո ցանկացած քաղաքացիաիրավական վեճ, որը վերաբերում է իրավաբանական անձի գույքային

իրավունքի պաշտպանությանը, ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում մասնակցի՝ շահութաբաժին ստանալու և առհասարակ մասնակցի՝ կանոնադրական կապիտալում իր անդամությունից բխող այլ իրավունքների իրացման հետ: Հետևապես՝ անվերապահորեն փաստել, որ մասնակիցը սույն դեպքերում չունի բացարձակապես գույքային շահ, գտնում ենք, արդարացված չէ և օբյեկտիվ հիմքից զուրկ է: Այնուամենայնիվ՝ անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ անուղղակի հայցերով էական տարբերակիչ հատկանիշն այլ տարբերակված քաղաքացիադատավարական վարույթներից կայանում է նրանում, որ շահագրգիռ անձին իրավունք է վերապահված հոգուտ իրավաբանական անձի եզրափակիչ դատական ակտի կատարում պահանջել:

Մինչ դատավարական նոր ինստիտուտի ներդրումը կորպորատիվ վեճերով հարուցված քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) կողմից արձանագրվել են մի շարք իրավական դիրքորոշումներ: *Օրինակ՝ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ անհրաժեշտ է նշել, որ մինչ դրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրումը Վճռաբեկ դատարանը մի շարք քաղաքացիական գործերով անդրադարձել է կորպորատիվ վեճերի օբյեկտային նախադրյալների առկայությանը, որոնցից մի քանիսը նշենք ստորև: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, **անդրադառնալով բաժնետիրոջ՝ իր նախապատվության իրավունքից օգտվելու վերաբերյալ պատշաճ ծանուցելու իրավակարգավորմանը**, արձանագրել է, որ ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը չի կարող պայմանավորվել ժողովների ընթացքում քվեարկելու իրավունքով, քանի որ քվեարկելու իրավունքը բաժնետիրոջ մեկ այլ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման միջոց է, իսկ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը և ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու*

իրավունքը զուգահեռ իրավունքներ են, որոնք ուղղված են բաժնետիրոջ հիմնական իրավունքի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու և շահույթից շահաբաժին ստանալու իրավունքի իրականացմանը: Այսինքն՝ առանց որևէ նախապայմանի բաժնետերն ունի կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք²³:

Մեկ այլ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը, **անդրադառնալով բաժնետիրական ընկերության կողմից կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքների վիճարկման առանձնահատկություններին**, եզրակացրել է, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքն օրենքի խախտումով կնքված լինելու հարցը պարզելու համար դատարանները պետք է պարզեն՝

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության կառավարման այն մարմնի կողմից, որի իրավասությանն է պատկանում նման որոշման ընդունումը,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության իրավասու մարմնի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է օրենքով սահմանված ձայների անհրաժեշտ քանակի համամասնությամբ,

- արդյո՞ք շահագրգռվածության առկայությամբ գործարքը միևնույն ժամանակ հանդիսանում է խոշոր գործարք, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն նշված հանգամանքները պարզելուց հետո հնարավոր կլինի պարզել գործարքի կնքման՝ օրենքով սահմանված ընթացակարգը պահպանված կամ խախտված լինելու հարցը²⁴:

²³ Տե՛ս **ՀՀ վճռաբեկ դատարանի** թիվ ԵԱՔԴ/1459/02/10 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշումը:

²⁴ Տե՛ս **ՀՀ վճռաբեկ դատարանի** թիվ ԼԴ/0678/02/12 քաղաքացիական գործով

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մասնակցի ընդհանուր ժողովի որոշումը վիճարկելու հարցին, արձանագրել է, որ այն պահից, երբ ընկերության մասնակիցը դիմում է ընկերությունից դուրս գալու համար, նրա բաժնեմասերն անցնում են ընկերությանը, իսկ այդ պահից սկսած վերջինս չի կարող ընկերության ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով դիմել դատարան, քանի որ վերջինս, այդ բաժնեմասերի նկատմամբ արդեն չունենալով սեփականության իրավունք, չի համարվում ընկերության մասնակից²⁵:

Ցանկանում ենք առանձնահատուկ անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածում նշված այն վեճերին, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց ստեղծմանը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից: Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերություններին մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված է, որ ընկերության պետական գրանցումը մերժելու մասին որոշումը դատարան կարող է բողոքարկվել երեք ամսվա ընթացքում, հակառակ պարագայում ընկերությունը համարվում է չկայացած: Հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի լույսի ներքո իրավաբանական անձի ստեղծման պահը համարվում է իրավաբանական անձի պետական գրանցման պահը: Ստացվում է, որ օրենսդրական նոր կարգավորումներով իրավաբանական անձի ստեղծման (պետական գրանցման) հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: Մինչդեռ առհասարակ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պետական գրանցամատյանում կատարված ցանկացած գրառում անվավեր ճանաչելու պահանջ ենթա-

08.05.2014 թվականի որոշումը:

²⁵ Տե՛ս **ՀՀ վճռաբեկ դատարանի** թիվ ԼԴ/0891/02/09 քաղաքացիական գործով 01.07.2011 թվականի որոշումը:

կա է ՀՀ վարչական դատարանի քննությանը²⁶ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի²⁷ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով,

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է,

²⁶ Տե՛ս թիվ ՎԴ/0727/05/17 վարչական գործով **ՀՀ վարչական դատարանի** 20.10.2015 թվականի վճիռը, թիվ ՎԴ/7025/05/15 վարչական գործով **ՀՀ վարչական դատարանի** 16.05.2016 թվականի վճիռը, թիվ ՎԴ/12752/05/17 վարչական գործով **ՀՀ վարչական դատարանի** 24.05.2018 թվականի վճիռը, թիվ ՎԴ/12388/05/17 վարչական գործով **ՀՀ վարչական դատարանի** 05.09.2018 թվականի վճիռը, թիվ ՎԴ/12128/05/17 վարչական գործով **ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի** 05.12.2018 թվականի որոշումը (www.datalex.am)(12.04.2021):

²⁷ Ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 07.01.2014 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

որ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային են այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում²⁸: Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ իր մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ հանրային իրավահարաբերությունների մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման մարմինների համար սահմանված լիազորությունների նպատակն այդ մարմինների կողմից իրենց վրա դրված հանրային պարտականությունների կատարումն է: Այդ պատճառով էլ հանրային իրավունքի նորմերը, որպես կանոն, սահմանում են, թե ինչպես պետք է իշխանական լիազորություններով օժտված մարմիններն օգտվեն իրենց լիազորություններից: Այլ կերպ ասած, հանրային իրավահարաբերությունում իշխանական լիազորություններով օժտված մարմինները գործում են օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում և պարտավոր են կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները²⁹:

Նշված դեպքում «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի³⁰ 7-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն իրականացնում է պետական ռե-

²⁸ Տե՛ս **ՀՀ վճռաբեկ դատարանի** թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով 03.12.2010 թվականի որոշումը:

²⁹ Տե՛ս **ՀՀ վճռաբեկ դատարանի** թիվ ՎԴ/12145/05/13 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշումը:

³⁰ Ընդունվել է 03.04.2001թ., ուժի մեջ է մտել 18.08.2001թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.05.18/14(146) Հոդ. 331:

գիստրը, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում: Ուստի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը գործադիր մարմնի մի մասն է, որն իրականացնում է վարչարարություն:

Բացի այդ՝ անհրաժեշտ է նաև անդրադառնալ իրավական հարցադրմանն առ այն՝ *արդյո՞ք իրավաբանական անձանց պետական գրանցման հետ կապված վեճերը ևս հանդիսանում են կորպորատիվ վեճեր*: Ինչպես նշվեց, իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, որ լայն իմաստով կորպորատիվ իրավահարաբերություններից բխող վեճերի սուբյեկտներ են դիտարկվում նաև պետական մարմինները ևս, որը թույլ է տալիս արձանագրել, որ պետական մարմինների և կորպորացիայի միջև առաջացող հանրային իրավական վեճերը լայն իմաստով ևս կարող են դիտարկվել կորպորատիվ վեճեր, որոնք առաջանում են կորպորացիայի և պետական մարմինների միջև հանրային-իրավական վեճերի քննության կապակցությամբ:

Վերոգրյալի լույսի ներքո գտնում ենք, որ ներկայումս գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ հակասություն է առաջանում երկու դատավարական օրենսդրությունների միջև և բացառվում է իրավաբանական անձանց գրանցման հետ կապված վեճերի քննությունը քաղաքացիադատավարական վարույթով, և կարծում ենք, որ Օրենսդիրը, իրավաբանական անձի ստեղծման հետ կապված վեճ ասելով, նկատի է ունեցել *մինչև* իրավաբանական անձի ստեղծվելը, իրավաբանական անձի ստեղծման կապակցությամբ ծագող կոնֆլիկտները, այսինքն՝ մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած վեճերը: Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով մինչև իրավաբանական անձի ստեղծվելը բազմաթիվ գործառնություններ են իրականացվում հիմնադիրների, բաժնետերերի կողմից: Օրինակ՝ ընդհանուր ժողովի հրավիրում, ընկերության ստեղծման մասին գրավոր պայ-

մանագրի կնքում (նույն օրենքի 10-րդ հոդված), բաժնետոմսերի տեղաբաշխում հիմնադիրների միջև, ընկերության հիմնադիր ժողովի հրավիրում, բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատում ժողովում, ընկերության հիմնադրման մասին որոշում, կանոնադրական կապիտալի չափի որոշում, կանոնադրության հաստատում, ընկերության խորհրդի ընտրում, ընկերության վերստուգող հանձնաժողովի ընտրում, գործադիր մարմնի ձևավորում, հիմնադիրների կամ նրանց լիազորված անձանց հաշվետվության ներկայացում (նույն օրենքի 12-րդ հոդված) և վերջում պետական գրանցում: Այսպիսով, վերը նշված գործողություններից բխող կոնֆլիկտներն են այն վեճերը (բաժնետիրական ընկերությունների օրինակով), որոնք ծագում են մինչև իրավաբանական անձի ստեղծվելը:

Ուստի՝ հակասություններից, տարակարծություններից խուսափելու նպատակով ցանկալի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հետևյալ պարբերության մեջ կատարել փոփոխություն, այն է՝ «Դատարանը հատուկ հայցալին վարույթի կարգով քննում է *իրավաբանական անձի ստեղծման*, կառավարման և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության) հետ կապված իրավահարաբերություններից բխող վեճերը, այդ թվում 1) *իրավաբանական անձի ստեղծման*, վերակազմակերպման և լուծարման հետ կապված վեճերը...» «իրավաբանական անձի ստեղծման» արտահայտությունը փոխարինել «մինչև իրավաբանական անձի ստեղծման» արտահայտությամբ:

Միաժամանակ առկա են կորպորատիվ իրավահարաբերություններից բխող որոշ գործեր, որտեղ հակադիր շահերով օժտված կողմեր առկա չեն: Մասնավորապես՝ ինչպես գիտենք Օրենսգիրքը կորպորատիվ վեճ է համարում նաև իրավաբանական անձի լուծարման հետ կապված վեճերը: «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել **միայն դատարանը**՝ շահագրգիռ

անձանց դիմումով: Նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4¹-րդ կետի համաձայն՝ հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: (..) Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

Թերևս այս առումով անհրաժեշտ է իրավական հստակեցում՝ արդյո՞ք տվյալ գործերը համարվում են կորպորատիվ և արդյո՞ք դրանք վեճեր են: Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նշված դիմումների քննության կապակցությամբ հատուկ վարույթ չի նախատեսվել, իսկ այն, որ տվյալ գործերը չեն կարող հանդիսանալ վեճեր, կարծում ենք, ակնհայտ է այն պարզ պատճառով, որ նշված իրավահարաբերություններում բացակայում են հակադիր շահերով օժտված կողմերը, միննույն ժամանակ Օրենսդիրը, կարելի է ասել, դատական վերահսկողություն է սահմանել հիմնադրամների լուծարման մասով, և տվյալ դեպքերում

փաստացի անհրաժեշտ է դատարանի հաստատված որոշումը հիմնադրամը լուծարելու և/կամ լուծարման հաշվեկշիռը հաստատելու կապակցությամբ:

Ուստի՝ դրանք ևս կորպորատիվ իրավահարաբերություններից բխող գործեր են, և ոչ՝ վեճեր, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նշված գործերի քննության կապակցությամբ անհրաժեշտ է սահմանել հատուկ կարգ և կատարել հետևյալ լրացումները. «առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ենթակա են նաև կորպորատիվ իրավահարաբերություններից բխող *այն գործերը*, որոնք առաջանում են՝ (1) շահագրգիռ անձանց, հոգաբարձուների խորհրդի կամ հիմնադրամի ժամանակավոր խորհրդի կողմից հիմնադրամների լուծարման պահանջ ներկայացնելու կապակցությամբ, ինչպես նաև (2) հոգաբարձուների խորհրդի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու պահանջ ներկայացնելու առնչությամբ»:

РАССМОТРЕНИЕ КОРПОРАТИВНЫХ СПОРОВ КАК ВИД СПЕЦИАЛЬНОГО ИСКОВОГО ПРОИЗВОДСТВА В ГРАЖДАНСКО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА

Лариса Багдасарян

Аспирант кафедры гражданского процесса ЕрГУ

После судебных реформ вошедшим в силу 09.04.2018г. гражданско-процессуальным кодексом РА был внедрен новый институт в виде специального искового производства, то есть производство по делам корпоративных споров, которым установлен круг дел, которые считаются корпоративными спорами и порядок их судебного рассмотрения. В результате исследования изучено рассмотрение дел по корпоративным спорам как вид специального искового производства, представлена судебная практика по спорам данных дел, до закрепления их как специального искового производства, в рамках исследовательский работ выявлен предмет споров вытекающих из корпоративных правоотношений, а также были отмечены косвенные иски.

THE EXAMINATION OF CORPORATE DISPUTES AS A TYPE OF SPECIAL LAWSUIT BY THE CIVIL PROCEDURE CODE OF THE RA

Larisa Baghdasaryan

PhD student at YSU Chair of Civil Procedure

After the judicial reforms, the Civil Procedure Code of the RA, which came into force on April 9, 2018, introduced a new judicial institute as a special type of litigation, i.e. corporate dispute proceedings, which specified the scope of cases that are considered as corporate disputes as well as the judicial procedure for those cases. As a result of the research, the examination of corporate dispute cases as a type of special lawsuit was investigated, the court practice was presented before the dispute cases were observed as a special lawsuit, within the framework of the research, the subject of disputes arising from corporate legal relations was revealed, as well as indirect lawsuits were referred to.

Բանալի բառեր - կորպորատիվ իրավահարաբերություններ, կորպորատիվ վեճեր, անուղղակի հայց, իրավաբանական անձ, բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, հիմնադրամ, արժեթուղթ, հիմնադրամի լուծարում:

Ключевые слова: корпоративные правоотношения, корпоративные споры, косвенный иск, юридическое лицо, акционерное общество, общество с ограниченной ответственностью, фонд, ценная бумага, ликвидация фонда.

Key words: corporate legal relations, corporate disputes, indirect claim, joint-stock company, limited liability company, fund, stock, dissolution of the fund.

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Հրանտ Զիլավյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի
ասպիրանտ, գիտական դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Սամվել Դիլբանդյան*

Քրեական դատավարության խնդիրների իրականացման համար, երբեմն, անհրաժեշտ է լինում սահմանափակել դատավարության սուբյեկտների իրավունքները¹։ Միննույն ժամանակ, դատավարության սուբյեկտների իրավունքների սահմանափակում և/կամ սահմանափակման անհրաժեշտությունն էլ իր հերթին հանգեցնում է պաշտպանության ենթակա մասնավոր և հանրային շահերի մրցակցության և այդ շահերի հավասարաչափ պաշտպանության անհրաժեշտության։

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման անհրաժեշտությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է եղել խափանման միջոցների կիրառումը կարգավորող քրեադատավարական կանոնների կատարելագործման անհրաժեշտությամբ²։ Այսինքն՝ Նախագծի ընդունմամբ, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդվում խափանման միջոցների կիրառումը կարգավորող դրույթները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին։ Նախագծի՝ խափանման միջոցներին վերաբերող դրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինիս բնութագրական հատկանիշներից է խափանման միջոցների շրջանակի ընդլայնումը։ Ինչպես նշվում է ՀՀ Կառավարության 2011 թ. մարտի 10-ի նիստի N 9 արձանագրային որոշմամբ հաստատված «Քրեական դատավարության նոր օրենսգրքի» Հայեցակարգում՝ նոր խափան-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն։ Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2000, էջ 342։

² Տե՛ս **Դ. Մելքոնյան**, «Պետություն և իրավունք» 2013 թ. թիվ 1(59) հրատարակություն, էջ 59։

ման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը (*հետագայում խմբագրվել է որպես վարչական հսկողություն*)), տնային կալանքը և այլն) սահմանումը, ինչպես նաև գրավը, որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը:

Անդրադառնալով տնային կալանքին՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի, պետք է նշել, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այն որպես խափանման միջոց, միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվեց, վերջինս ամրագրված է Նախագծով որպես նոր տեսակի խափանման միջոց, ինչպես նաև, այս խափանման միջոցի կիրառման դեպքում առաջացող հասարակական որոշ հարաբերությունների կարգավորում տրված է նաև այս պահին գործող «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում:

Նախքան տնային կալանք խափանման միջոցի Նախագծով սահմանված կարգավորումներին և դրանց կիրառման կապակցությամբ հնարավոր առաջացող հիմնահարցերին անդրադառնալով՝ հարկ ենք համարում վեր հանել տնային կալանքի՝ որպես ինքնուրույն խափանման միջոցի հասկացությունը, որը կբովանդակի դրա բոլոր էական հատկանիշները և կնպաստի տնային կալանքի էություն մասին համապարփակ պատկերացում կազմելուն:

Իրավաբանական գրականության մեջ այս խափանման միջոցի հասկացության վերաբերյալ առկա են տարբեր բնորոշումներ: Մասնավորապես, Վ. Ի. Դալը տնային կալանքը բնորոշում էր տանից դուրս չգալու կարգադրագիր կամ հրաման: Սակայն, ակնհայտ է, որ «տնային կալանք» հասկացության նման բնորոշումը չի արտացոլում այս խափանման միջոցի սահմանափակումների ամբողջական էությունը, դրա կիրառման նպատակները և վեր չի հանում տնային կալանքի բնորոշ հատկանիշները: Օ. Ի. Յոկոլովան գտնում է, որ տնային կալանքը խափանման միջոց է, որն արտահայտվում է մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակմամբ և այլ

անձանց հետ շփում և բանակցություններ ունենալու արգելքով: Գտնում ենք, որ առավել համապարփակ կերպով է արտահայտում տնային կալանքի էության, հատկանիշների և նպատակների մասին Յու. Գ. Օվչինիկովի կողմից տրված հասկացությունը, համաձայն որի՝ տնային կալանքը դատավարական հարկադրանքի միջոց է, որը նշանակվում է մեղադրյալի, բացառիկ դեպքերում՝ կասկածյալի նկատմամբ դատարանի որոշմամբ, այնպիսի հանցագործությունների կապակցությամբ, որի համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը գերազանցում է երկու տարին և ուղեկցվում է վերջինիս իրավունքների ու ազատությունների սահմանափակմամբ և արգելքով³:

«Տնային կալանք» հասկացության վերաբերյալ ներկայացված վերոշարադրյալ բնորոշումը՝ լինելով հնարավորինս համապարփակ, այնուամենայնիվ ավելի քան համապատասխանում է դրա՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով առկա իրավակարգավորմանը, քանի որ, ի տարբերություն ՌԴ քրեական դատավարության օրենսդրության՝ Նախագծով տնային կալանքի և ընդհանրապես խափանման միջոցների կիրառությունը թույլատրվում է բացառապես *մեղադրյալի* նկատմամբ (Նախագծի 115-րդ հոդվածի 2-րդ մաս), այսինքն՝ ի տարբերություն ՌԴ օրենսդրության, Նախագծով կասկածյալի նկատմամբ տնային կալանք խափանման միջոցի կիրառումը հնարավոր չէ: Բացի այդ, եթե ՌԴ օրենսդրությամբ սահմանված է որոշակի սահմանափակում, որով տնային կալանք խափանման միջոցը կարող է նշանակվել միայն այն հանցագործությունների համար, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը գերազանցում է երկու տարին, ապա Նախագծով նման սահմանափակումը բացակայում է:

Այսպիսով, ամփոփելով գտնում ենք, որ տնային կալանքի վերաբերյալ Նախագծում առկա կարգավորումների շրջանակում տնա-

³ См. у Ю. Г. Овчинников, Домашний арест как мера пресечения в уголовном процессе / Ю. Г. Овчинников. Афтореф. дис./ М., 2006 թ., էջ 9-10:

յին կալանքի առավել համընդգրկուն հասկացությունը կարող ենք ձևակերպել որպես *դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոց, որը ուղեկցվում է մեղադրյալի անձնական ազատության սահմանափակմամբ, նպատակ հետապնդելով կանխելու մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագիծը, որի ընթացքում կարող է սահմանվել որոշակի անձանց հետ շփվելու, նրանց իր բնակարանում հյուրընկալելու, նամակագրություն ստանալու կամ փոխանցելու, կապի ցանկացած միջոցներով բանակցություններ վարելու արգելք:*

Այժմ անդրադառնալով տնային կալանքի վերաբերյալ Նախագծի կարգավորումներին, նշենք, որ Նախագծի 123-րդ հոդվածի առաջին մասը տալիս է տնային կալանքի օրենսդրական սահմանումը. «Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված *բնակության տարածքը*»: Այսինքն՝ նշված կարգավորման բովանդակությունից նախևառաջ հետևում է, որ տնային կալանքի կիրառման նպատակն է մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովումը՝ նրան թողնելով մեկուսացման համեմատաբար մեղմ պայմաններում:

Բացի այդ, ինչպես տեսնում ենք, Նախագծի 123 հոդվածի 1-ին մասը՝ որպես մեղադրյալի նկատմամբ տնային կալանքի կրման վայր, սահմանում է «Դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածք» արտահայտությունը: Նախագծի նման ձևակերպումից կարելի է հետևություն անել այն մասին, որ վերջինս նկատի ունի ոչ միայն անձին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածությունը, այլ նաև ցանկացած այլ բնակելի տարածություն, որը կնշվի դատարանի որոշման մեջ: Նշվածի կապակցությամբ, գտնում ենք, որ նախագծային առկա կարգավորումը կարող է իրավակիրառման ընթացքում հանգեցնել որոշակի իրավական խնդիրների, նախ՝ «բնակության տարածք» եզրույթի մեկնաբանության, այնուհետև նաև այդ եզրույթի կիրառմամբ այլ անձանց իրավունքների

հետ հարաբերակցության տեսանկյունից: Նախ, հարկ է նկատել, որ Նախագիծը չի պարունակում իրավադրույթ, որով կբացահայտի «Բնակության տարածք» եզրույթի բովանդակությունը: Միննույն ժամանակ, մեր կարծիքով, նշված «Բնակության տարածք» եզրույթը չի կարելի նույնացնել (կամ վերջինիս վերագրել) քրեադատավարական իմաստով օգտագործվող «Բնակարան» հասկացության հետ, քանի որ ինչպես գործող օրենսդրությամբ, այնպես էլ Նախագծի 6-րդ հոդվածի 53-րդ կետով նախատեսվող կարգավորմամբ այն, ի թիվս այլնի, ներառում է նաև մասնավոր տրանսպորտային միջոցը, ինչպես նաև արվեստանոցը, ծառայողական աշխատասենյակը և ավտոմեքենան, որոնք իրենց բնույթով և նշանակությամբ չեն կարող հանդիսանալ տնային կալանքի կրման վայր, դրանից բացի, այդ տարածքների՝ քրեադատավարական իմաստով «Բնակարան» հասկացության ներառումը հետապնդում է այլ նպատակ, այն է՝ բնակարանի անձեռնմխելիության ապահովումը և ոչ թե տնային կալանքի կրման վայր սահմանելը:

Ավելին, նշված հարցի վերաբերյալ բացակայում է նաև իրավական կարգավորումը «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում, որը, թեև 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանում է պրոբացիայի ծառայողի՝ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում պրոբացիայի շահառուի **բնակության վայր** այցելելու, վերջինիս անձնական գործ կազմելու պարտականությունը, սակայն կրկին չի բացահայտում այս դեպքում օգտագործվող «Բնակության վայր» եզրույթի բովանդակությունը և վերջինիս մեջ ներառվող հնարավոր բնակության տարածքների շրջանակը:

Տնային կալանքի կրման վայրի վերաբերյալ իրավագետների կարծիքների ուսումնասիրությունից հետևում է, որ այն պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի գիտնականները գտնում են, որ տնային կալանքի վայրը պետք է սահմանվի ցանկացած տարածք, որտեղ անձը բնակվում է խափանման միջոց

ընտրելու ժամանակ⁴: Հաջորդ խմբի գիտնականների մոտեցումը հիմնված է տնային կալանքի նկատմամբ վերահսկողության ապահովման հնարավորության վրա, այդ իսկ պատճառով այս տեսակետի կողմնակիցները դեմ են խափանման միջոցի վայրը սահմանել *հանրակացարանները և բնակարանային այլ շինությունները*, քանի որ կբարդանա խափանման միջոցի վերահսկողական գործառույթը⁵:

Ամփոփելով նշված կարծիքները՝ գտնում ենք, որ տնային կալանքի կրման վայրի վերաբերյալ խնդրի լուծման ընդունելի տարբերակ կարելի է համարել հետևյալը. տնային կալանքի վայր սահմանել այն բնակարանը, որտեղ անձը փաստացի բնակվում է *իրավական հիմքերի առկայությամբ*, այսինքն՝ վերջինս իրավական տիտղոսի հիման վրա իրավունք ունի մշտական բնակություն հաստատել տվյալ բնակարանում: Մինևույն ժամանակ՝ այլ անձանց իրավունքների պաշտպանության նկատառումից ելնելով, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում քննարկման առարկա դարձնել տնային կալանքի կիրառմամբ այլ անձանց իրավունքների հնարավոր սահմանափակումները և նման ռիսկի առկայության դեպքում դատարանը տնային կալանքը կիրառելիս հաշվի առնի նաև այդ անձանց կարծիքը: Օրինակ՝ մեղադրյալի վարձակալությամբ բնակվելու դեպքում՝ անհրաժեշտ է հաշվի առնել վարձատուի համաձայնությունը, ավելին, գտնում ենք, այդ դեպքում վերջինիս համաձայնությունը պետք է համարվի տվյալ բնակարանում տնային կալանքի կիրառման համար պարտադիր պայման: Նախապես վարձատուի համաձայնության բացակայությունը և հետագայում վերջինիս կողմից վարձակալության պայմանագրի խզումը կարող են հանգեցնել ընտրված խափանման միջոցի կրման խոչընդոտների և որոշ բացառիկ դեպքերում, զուցե, նաև այդ խափանման միջոցի կիրառման անհնարի-

⁴ St' u **Цоколова О.И.**, Домашний арест: сущность и проблемы применения // Правовое и криминалистическое обеспечение управления органами расследования преступлений. М.: Академия управления МВД России, 2011, էջ 418–426:

⁵ St' u **Муртазин Р.М.**, Дискуссионные вопросы применения домашнего ареста // Вестник ОГУ. 2012, № 3, էջ 129–132:

նության: Բացի այդ, անձի նկատմամբ տնային կալանքի կիրառության դեպքում վարձակալի համաձայնությունը, գտնում ենք, կարևոր է նաև այն առումով, որ վերջինս քրեական վարույթի շրջանակում չունենալով որևէ դատավարական կարգավիճակ, այդ խափանման միջոցի կիրառությամբ կարող է միջամտություն լինել նաև վերջինիս իրավունքների նկատմամբ: Մասնավորապես, նախ տնային կալանքի նկատմամբ հսկողության շրջանակում իրավասու մարմինների կողմից այցելություններ վարձատուին սեփականության իրավունքով պատկանող բնակարան և եթե մեղադրյալի դեպքում, օրինակ, մասնավոր կյանքի գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կարող է լինել իրավաչափ, ապա վարձակալի դեպքում, որը որևէ առնչություն կամ դատավարական կարգավիճակ չունի քննվող քրեական գործի շրջանակում, նման սահմանափակումները կամ միջամտությունը անթույլատրելի է: Նշված խնդրի ակնառու դրսևորում կարող է լինել հատկապես այն դեպքերում, երբ վարձակալության պայմանագրով տրամադրված բնակարանում վարձակալի հետ համատեղ բնակվում է նաև վարձատուն: Այսպիսով, գտնում ենք, որ թե՛ տնային կալանքի խափանման միջոցի հետագա կիրառության ընթացքում խնդիրներից խուսափելու, և թե՛ վարձակալի իրավունքների անհամաչափ սահմանափակում թույլ չտալու նկատառումից ելնելով, անհրաժեշտ է մեղադրյալի՝ վարձակալությամբ բնակվելու դեպքում տնային կալանքը, որպես խափանման միջոց կիրառելիս ստանալ վարձակալի համաձայնությունը:

Միննույն ժամանակ՝ հաշվի առնելով տնային կալանքի կիրառման կարևորությունը՝ մեկուսացման համեմատաբար մեղմ պայմաններում մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով, գտնում ենք, որ այլ դեպքերում դատարանն ինքը պետք է գնահատի այլ անձանց կարծիքը կոնկրետ տվյալ դեպքում տնային կալանքի կիրառման նպատակահարմարության և խափանման միջոցի նպատակների իրագործման տեսանկյունից և օրենսդրությամբ

այլ անձանց կարծիքից տնային կալանքի կիրառումը ուղղակի իմ-
պերատիվ կախվածության մեջ չպետք է դրվի: Օրինակ՝ մեղադրյալի
հետ համատեղ ապրող անձանց կարծիքը չպետք է ուղղակիորեն
պայմանավորի տնային կալանքի կիրառումը, այնուհանդերձ, այն
կարող է գնահատվի դատարանի կողմից տվյալ խափանման միջոցի
ընտրության շրջանակում: Այլ հարց է, որ հանցագործությունների
որոշակի տեսակների պարագայում այն կարող է սկզբունքային
նշանակություն ունենալ պայմանավորված հանցագործության
բնույթով, օբյեկտով և այլ հանգամանքներով: Այսինքն՝ գտնում ենք,
որ այդ հանգամանքը յուրաքանչյուր դեպքում գնահատելու իրավա-
սությունը պետք է թողնել դատարանին:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ Նախագծով անհրաժեշտ է
սահմանվի որոշակի կատեգորիայի անձանց շրջանակ ում նկատ-
մամբ տվյալ խափանման միջոցը չի կարող կիրառվել՝ կապված
բնակության վայրի անորոշության հանգամանքով: Գտնում ենք, որ
այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ, մշտական բնակության
վայր չունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրացի քաղաքացիները
կամ քաղաքացիություն չունեցող անձինք:

Տնային կալանքի կիրառման վայրի հստակեցման կապակցությո-
ւյամբ տեսական գրականության մեջ առկա են նաև մի քանի այլ հար-
ցեր, մասնավորապես, այն դեպքերում, երբ անձը բնակվում է ոչ թե
բնակարանում, այլ առանձնատանը, արդյոք առանձնատան բակը
պետք է համարել բնակելի տարածք և չսահմանափակել անձի իրա-
վունքը տեղաշարժվելու առանձնատան բակում: Անձի ազատ տեղա-
շարժման սահմանափակումների շրջանակի հետ կապված հարց է
առաջանում նաև այն պարագայում, երբ առանձնատան կենցաղա-
յին կարիքների բավարարման համար նախատեսված հարմարու-
թյունները գտնվում են բակում: Արդյոք իրավաչափ կլինի այդ պարա-
գայում սահմանափակվել միայն առանձնատան տարածքով: Մակա-
րովայի կարծիքով արգելանքի տակ գտնվող կասկածյալի կամ մե-
ղադրյալի համար պետք է նախատեսվի նաև կենցաղային կարիքնե-

րի բավարարման համար նախատեսված հարմարություններ, ուստի առանձնատան պարագայում անձին, ում նկատմամբ կիրառվել է տնային կալանքը, անհրաժեշտ չէ ստանալ հատուկ թույլտվություն տան սահմաններից բակ դուրս գալու համար⁶:

Նախագծի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից,

2) շփվել որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

Հոդվածի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ նշված արգելքները սպառիչ բնույթ ունեն և դատարանի կողմից անձի նկատմամբ չեն կարող սահմանվել այլ սահմանափակումներ, քան հոդվածում նշվածները: Իհարկե, դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է որոշել կիրառել դրանցից որևէ մեկը կամ մի քանիսը կամ դրանք ընդհանրապես չկիրառել: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ Նախագծում առկա կարգավորումը ունի խիստ իմպերատիվ բնույթ և դրանից չի նախատեսվում որևէ բացառություն որոշակի իրավիճակներում այդ սահմանափակումների շեղվելու համար: Մինչդեռ, գտնում ենք, որ առկա կարգավորումը ունի որոշակի հստակեցման անհրաժեշտություն և նշված հոդվածով սահմանված սահմանափակումներից պետք է նախատեսվեն որոշակի բացառություններ: Որպես այդպիսի բացառություն կարող է հանդիսանալ ինչպես մեղադրյալի դատավարական իրավունքների իրացման անհրաժեշտությունը (օրինակ՝ անարգել տեսակցել պաշտպանի հետ, ծանոթանալ քրեական գործի նյութերին, դատական նիստերին ներկա գտնվելու և այլն), այնպես էլ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հիմնարար իրավունքների իրացման անհրաժեշտությո-

⁶ См. **С. А. Макарова**, Мера пресечения в виде домашнего ареста: проблемы теории и практики применения, Вестник ПАГС, 2013, № 48-52:

յունը, մասնավորապես՝ մեղադրյալի կողմից հեռախոսային կապի միջոցից օգտվելու անհրաժեշտությամբ պայմանավորված վարույթն իրականացնող մարմնի հետ կապ հաստատել կամ շտապ օգնություն կանչել:

Քննարկման ենթակա հաջորդ հարցն այն է, թե ում նկատմամբ կարող է նշանակվել տնային կալանքը որպես խափանման միջոց: Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, որ այդ անձանց շրջանակ պետք է ներառվեն հղի կամ անչափահաս երեխաներ ունեցող կանայք, ծերերը, անչափահասները: Վ. Վ. Կլիմովի կարծիքով տնային կալանքի կիրառումը անմիջականորեն կախված է մեղադրյալի (կասկածյալի) անձը բնութագրող հանգամանքներից և պետք է կիրառվի որպես կալանավորման այլընտրանք՝ ծերերի, հաշմանդամների կամ այն անձանց նկատմամբ, ում առողջական վիճակը անհնարին կամ աննպատակահարմար է դարձնում կալանքի կիրառումը, միայնակ մայրերի կամ բազմազավակ ծնողների, իրենց խնամքի տակ հիվանդ ընտանիքի անդամներ ունեցող անձանց, հղի կամ նորածին երեխաներ ունեցող կանանց նկատմամբ⁷:

Համակարծիք լինելով նշված մոտեցմանը, որ որոշակի կատեգորիայի անձանց նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց պետք է կիրառվի առաջնահերթորեն, նշենք, որ Նախագծի 116-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող *բոլոր հնարավոր հանգամանքները*: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև մեղադրյալի անձը բնութագրող հատկանիշները, սակայն չպետք է սահմանափակվել միայն վերը նշված խմբերին պատկանող անձանց շրջանակով: Դատարանը, հաշվի առնելով գործի այլ հանգամանքները, կարող է նպատակահարմար գտնել, որ անձի (վերը նշված խմբերին չպատկանող) պատշաճ վարքագիծը ապահովվելը հնարավոր է հենց տնա-

⁷ См. у В. В. Климов, Законность и обоснованность применения домашнего ареста в уголовном судопроизводстве России./Автореферат дис./ М., 2011 г., т. 22:

յին կալանքի կիրառմամբ (այսինքն՝ ավելի մեղմ մեկուսացման պայմաններում, քան կալանքի դեպքում է):

Կարծում ենք, այս հարցով Նախագծի կարգավորումը լիովին արդարացված է: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տնային կալանքի կիրառության հարցի լուծումը պետք է տրվի դատարանին և հաշվի առնվի ոչ թե անձի այս կամ այն խմբին պատկանելու հանգամանքը, այլ այն, թե տվյալ դեպքում որքանով է նպատակահարմար տվյալ խափանման միջոցի կիրառումը և որքանով այն կարող է ապահովել անձի պատշաճ վարքագիծը՝ հաշվի առնելով դրա համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները (այդ թվում անձը բնութագրող հատկանիշները):

Նախագծի 123-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները: Այս դրույթով Նախագիծը կիրառման հիմքերի և պայմանների առումով իրավացիորեն նույնացնում է կալանքն ու տնային կալանքը⁸: Նշված մոտեցումը ամբողջապես համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմանը⁹:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնային կալանքի կիրառումը հանգեցնում է մեղադրյալի մի շարք սահմանադրական իրավունքների ու ազատությունների, այդ թվում՝ ազատության իրավունքի սահմանափակման՝ Նախագծով որպես անձի իրավունքների ապահովման երաշխիք է նախատեսված տնային կալանքի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը: Մասնավորապես, 291-րդ հոդվածում ամրագրված է, որ կալանքը, ինչպես նաև տնային կալանքը և վարչական հսկողությունը

⁸ Տե՛ս **Դ. Մեքոնյան**, Խափանման միջոցների կիրառման առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի. /Պետ. և իրավ./ 1/59/ 2013 թ., էջ 59:

⁹ NC v. Italy Judgment of 18 December 2002, Nikolova v. Bulgaria Judgment of 25 March 1999, Darvas v. Hungary, Judgment of 11 January 2011:

կարող են կիրառվել բացառապես իրավասու դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Անդրադառնալով տնային կալանքի կիրառման պայմաններին՝ անհրաժեշտ է նախևառաջ ընդգծել, որ Նախագծով որպես ընդհանրապես խափանման միջոցի կիրառության, այդ թվում նաև տնային կալանքի կիրառման համար, պարտադիր և *հիմնական պայմանը հիմնավոր կասկածի առկայությունն է այն մասին, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցանքը* (Նախագծի 116-րդ հոդվածի 1-ին մաս): Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Նախագծում նախատեսված այս դրույթը բխում է ինչպես Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետից, այնպես էլ Եվրոպական դատարանի¹⁰ և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներից¹¹, որոնցում նրանք անդրադարձ են կատարել «հիմնավոր կասկած» հասկացությանը: Եվրոպական դատարանը մի շարք նախադեպային որոշումներով արձանագրել է, որ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ համոզմունք կձևավորեն առ այն, որ տվյալ անձը, հնարավոր է հանցանք գործած լինի:¹² Հիմնավոր կասկածի առկայությունից բացի, ինչպես արդեն վերը նշվեց, Նախագիծը 292 հոդվածի 3-րդ մասով որպես տնային կալանք խափանման միջոցի նշանակման համար անհրաժեշտ նախապայման է նախատեսել նաև հարուցված քրեական գործի առկայությունը, ինչպես նաև անձի՝ որպես մեղադրյալ ներգրավվելու մասին որոշման առկայությունը կամ նրան օրենքով սահմանված կարգով մեղադրանք առա-

¹⁰ Labita v. Italy Judgment of 6 April 2000, Mamedova v. Russia Judgment of 1 June 2006, Rudnichenko v. Ukraine Judgment of 11 July 2013:

¹¹ Տե՛ս «ՀՀ վճռաբեկ դատարանի Վ. Գևորգյանի գործով 2011 թ. փետրվարի 24-ին կայացրած թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում» և «ՀՀ վճռաբեկ դատարանի Հ. Խաչատրյանի գործով 2011 թ. դեկտեմբերի 22-ին կայացրած թիվ ՏԴ2/0009/06/11 որոշում»:

¹² Fox, Campbell and Hartley v. the United Kingdom Judgment of 30 August 1990:

ջադրված լինելը, ինչպես նաև միջնորդության հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի ներկայացվածությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով տնային կալանքի վերաբերյալ Նախագծի կարգավորումները, կարող ենք պնդել, որ թեև Նախագիծը ունի բավականին առաջադիմական կարգավորումներ հատկապես խափանման միջոցների տեսակների, կիրառման, սակայն Նախագծում տնային կալանքին վերաբերող մի շարք հարցեր ամբողջությամբ չեն կարգավորվել, մասնավորապես՝ Նախագծով բացակայում է տնային կալանքի հասկացությունը, դրա իրավական բնույթի բացահայտումը, այն անձի իրավունքներն ու պարտականությունները, որոնց նկատմամբ կիրառվում է նշված խափանման միջոցը, որոշակի առումներով հաշվի չի առնված կամ իրավակիրառ պրակտիկայի հայեցողությանն է թողնված տնային կալանքի կիրառման կապակցությամբ շոշափվող երրորդ անձանց իրավունքների պաշտպանության հարցը, Նախագծով հստակեցված չէ տնային կալանքի կիրառման վայրը, «բնակելի տարածություն» հասկացության բովանդակությունը բացահայտված չէ, ինչը, ևս կարող է հանգեցնել տարամեկնաբանությունների և այլն:

Այսպիսով, տնային կալանքի կիրառումը ևս հանգեցնում է անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման, ինչն էլ իր հերթին ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային մի շարք փաստաթղթերով ամրագրված հիմնարար իրավունք է: Մինևույն ժամանակ, քրեադատավարական օրենսդրության զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ պետք է լինի արդյունավետ երաշխիքների ստեղծումը՝ անձի հիմնարար իրավունքների, այդ թվում անձնական ազատության կամայական և անօրինական սահմանափակումները բացառելու նպատակով, ինչն էլ իր հերթին պետք է իրականացվի նաև այդ իրավունքը սահմանափակող խափանման միջոցների, այդ թվում՝ տնային կալանքի, օրենսդրական արդյունավետ կարգավորմամբ և դրանց ճիշտ կիրառմամբ:

ДОМАШНИЙ АРЕСТ КАК АЛЬТЕРНАТИВНАЯ МЕРА ПРЕСЕЧЕНИЯ

Грант Джилаван

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Проект нового Уголовно-процессуального кодекса предусматривает домашний арест в качестве альтернативной меры пресечения как прогрессивный шаг в борьбе с несоразмерными ограничениями права на свободу и безопасность. В то же время в конструктивных решениях используемый прогрессивный, гуманистический подход все еще требует значительного улучшения.

В рамках статьи автор попытался поднять понятие домашнего ареста, сославшись на условия применения данного вида меры пресечения, применяемые в нем ограничения, круг лиц, к которым применяется домашний арест, а также места, где должен быть проведен домашний арест.

HOUSE ARREST AS AN ALTERNATIVE MEASURE OF RESTRAINT

Hrant Jilavyan

PhD Student at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

The draft of the new Criminal Procedure Code provides for house arrest as an alternative measure of restraint as a progressive step in the fight against disproportionate restrictions on the right to liberty and security. At the same time, the progressive, humanistic approach used in design solutions still requires significant improvement.

Within the framework of the article, the author tried to raise the concept of house arrest, referring to the conditions for the application of this type of preventive measure, the restrictions applied in it, the circle of persons to whom house arrest is applied, as well as the places where house arrest should be carried out.

Բանալի բառեր - տնային կալանք, բնակության տարածք, խափանման միջոցներ, ազատության և անձեռնմխելիության իրավունք, սահմանափակումներ և արգելքներ, հիմնավոր կասկած, մեղադրյալ:

Ключевые слова: домашний арест, жилое помещение, меры пресечения, право на свободу и неприкосновенность, ограничения и запреты, обоснованное подозрение, обвиняемый.

Key words: house arrest, living quarter, preventive measures, the right of freedom and immunity, prohibitions and restrictions, reasonable suspicion, accused.

**ՀՀ ՏԱՐԱԾՔ ԱՊՕՐԻՆԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԿԱՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅԵԼԸ՝
ՈՐՈՒԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԽՈԶՆԴՈՏ**

Գայանե Մելիքյան

*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,
գիտական դեկավար՝ ի.գ.թ. դոցենտ Դ. Մ. Մելքոնյան*

ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորվում է միջազգային իրավական պաշտպանության այնպիսի միջոց, ինչպիսին ապաստան հայցելու իրավունքն է:

Առկա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում օրենքով նախատեսված կարգով անազատության մեջ հայտնված անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ՀՀ-ում ապաստան ստանալու իրավունքից օգտվելը դիտվում է որպես իրենց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված որոշակի սահմանափակումներից խուսափելու միջոց:

Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզման մեջ գտնվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց:

Այսպես՝ ՀՀ տարածք ապօրինի մուտք գործած անձանց կողմից հետազայում փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելն ընկալվում է որպես իրենց կողմից կատարված հանցագործության «արդարացում»:

Մինչդեռ հիշյալ հարցի կապակցությամբ «Փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1951թ. կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան տված երկրում անօրինական կարգով գտնվող փախստականների նկատմամբ պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում իրենց երկիր ապօրինի մուտքի կամ ներկայության համար, եթե փախստականները ուղղա-

կիրեն եկել են այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործել իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք **անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ¹:**

Նույնաբովանդակ դրույթ է ամրագրված նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածով², ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածում:

Սակայն, փորձը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելուց և այդ հանցավոր արարքը իրավապահների կողմից բացահայտվելուց տևական ժամանակ հետո այն կատարած անձինք դիմում են լիազոր պետական մարմնին՝ իրենց ՀՀ-ում փախստականի կարգավիճակ կամ ապաստան շնորհելու հայցով՝ այդպիսով նպատակ ունենալով խուսափել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից:

Մեկ այլ խնդրահարույց իրավիճակ է ստեղծվում օտարերկրյա պետությունների կողմից հետախուզման մեջ գտնվող անձանց կողմից ՀՀ տարածքում ձերբակալվելու և կալանավորվելուց հետո չվերադարձվելիության սկզբունքի ուժով փաստացի «հանձնման ան-

¹ Տե՛ս ավելին՝ «Փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1951թ. Կոնվենցիայի 31-րդ և 1-ին հոդվածներում:

² Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդված, համաձայն որի՝ 1. Ապաստան հայցողները և փախստականները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության: 2. Այն դեպքում, երբ ապաստան հայցողը դիտավորյալ չի համագործակցում սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուշացնում է անձը հաստատող վկայականի վավերականության ժամկետի երկարաձգումը կամ չի ենթարկվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղաշարժի սահմանափակումներին, ապա նա կարող է ենթարկվել պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ձեռնմխելիություն» ձեռք բերելու նպատակով փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի հայցով դիմելիս:

Նման պայմաններում երբեմն իրավապահ մարմիններն անձի հանձնումը թույլատրելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում փաստացի գրկված են լինում անձի հանձնումն իրականացնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված արգելքները:

Նման իրավիճակներում անձը գտնվում է կալանքի տակ (որի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 8 ամիսը) և հետախուզումը նախաձեռնող պետությանը հանձնվելուց խուսափելու կամ այդ գործընթացը հետաձգելու նպատակով դիմում է վերը նշված իրավական մեխանիզմներին՝ պատճառաբանելով, որ իր վերոգրյալ իրավունքը նախկինում իրեն պարզաբանված չի եղել: Նման իրավիճակներում անձի փաստացի հանձնումը հետաձգվում է՝ մինչև իր հայցի վերաբերյալ վերջնական որոշման, այդ թվում՝ դատական ատյանների բողոքարկման արդյունքում ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Ավելին, Օրենքում չկա որևէ դրույթ, որն անձին կարգելի նույն հիմքով կրկին դիմում ներկայացնել լիազոր մարմնին: Մինչդեռ ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված առավելագույն ժամկետի ավարտից հետո հանձնման նպատակով կալանավորված անձը ենթակա է անհապաղ ազատ արձակման, ինչը կարող է հետագա բարդությունների, այդ թվում՝ հանձնման անհնարինության հանգեցնել՝ վերջինիս ՀՀ-ում փախստականի կարգավիճակ կամ ապաստան շնորհելու հայցը մերժելու դեպքում:

Վերոգրյալի կապակցությամբ պետք է նշել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չեն անձի կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստանի հայցով դիմելու ժամկետներ, սակայն տվյալ խնդիրը բազմիցս քննադատության է արժանացել տարբեր մարմինների կողմից և ընդգծվել տվյալ ոլորտում իրավուն-

քի չարաշահման հնարավորության բացառման անհրաժեշտությունը:

Այսպես՝ փախստականների կարգավիճակի շնորհման և քննարկման գործընթացի նվազագույն ստանդարտների վերաբերյալ ԵՄ 2005/85/EC 01.12.2005թ. հրահանգի 23-րդ հոդվածի 4-րդ մասի «i» կետը, սահմանելով հայցի ուսումնասիրման ընթացակարգերը, ամրագրել է, որ հայցը պետք է արագացված կարգով քննարկվի, եթե հայցող անձը առանց որևէ հիմնավոր պատճառի իր հայցն առավել վաղ չի ներկայացրել՝ ունենալով այդպիսի հնարավորություն³:

Պետք է նշել, որ նույն հրահանգի 10-րդ հոդվածի 1-ին մասի «a» և 35-րդ հոդվածի 3-րդ մասի «b» կետերով սահմանված է ապաստանի հայցով դիմելու իրավունքը անձին «Ժամանակին» պարզաբանելու պետության պարտականությունը⁴:

Ռախիմովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում (91-րդ կետ) մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ անձի կողմից այլ պետության տարածք ժամանելիս ապաստանի հայցով անմիջապես չդիմելը էական է նրա պնդումների արժանահավատությունը գնահատելիս⁵:

Անդրադառնալով հիշյալ ոլորտում առկա մյուս խնդրին՝ փախստականի կարգավիճակ հայցելու կամ ապաստան հայցելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ իրականացվող վարչական վարույթների քննարկման ժամկետներին, հատկանշական է, որ Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման վարչական վարույթը կարող է իրականացվել սույն օրենքով սահմանված ընդհանուր կամ արագացված ընթացակարգերով: Ապաստան ստանալու մասին դիմումը լիազոր

³ St' u <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32005L0085-&from=EN>:

⁴ St' u նույն տեղում:

⁵ St' u <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22fulltext%22%3A%2250552%2F13%22%22%22docu-mentcollectionid%22%3A%22GRANDCHAMBER%22%22CHAMBER%22%22%22ite-mid%22%3A%222001-145366%22%22%7D>]

մարմինը քննարկում է դիմումը լիազոր մարմնում գրանցվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված արագացված ընթացակարգերի կիրառման դեպքի: Լիազոր մարմնի պատճառաբանված որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք ամիս ժամանակով, եթե առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարչական վարույթի ժամկետի երկարաձգման հիմքեր:

Նույն Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշում՝ դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած **30 օրվա ընթացքում:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալուց հետո ապաստան հայցողը 15 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապաստանի հայցի առնչությամբ լիազոր մարմնի կայացրած որոշման ընդունման մասին տեղեկանալու օրվանից սկսած **երեք ամսվա ընթացքում**, կարող է բողոք ներկայացնել դատարան:

Վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածն իր հերթին ամրագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն **ռոջամիտ ժամկետներում**⁶:

Նման պայմաններում ստեղծվում է իրավիճակ, երբ անձի հանձնումը թույլատրելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում անազատության մեջ գտնվող անձի կալանավորումը շարունակաբար երկարացվում է և նա փաստա-

⁶ Տե՛ս Վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածը, 07.01.2014 թ.:

ցի չի հանձնվում օտարերկրյա պետությանը՝ դատական ատյաններում իր բողոքի վերաբերյալ քննությանը նրա մասնակցությունն ապահովելու նպատակից ելնելով:

Նույն խնդիրն առկա է նաև ստորադաս դատական ատյանի որոշման դեմ վերադաս դատարան բողոք ներկայացնելու և այն դատարանի կողմից քննարկելու գործընթացներում:

Հետևաբար, անհրաժեշտություն կա հստակեցնել անազատության մեջ գտնվող անձի կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելու դիմումների քննարկման և դրանց կապակցությամբ ընդունված որոշումների բողոքարկման ընթացակարգերը՝ սահմանելով հստակ և կանխատեսելի ժամկետներ:

Թեև ՀՀ Կառավարության 14.06.2007թ. №818 որոշմամբ սահմանված է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը, սակայն նշված իրավունքների ցանկը չի ներառում անձի՝ փախստականի կարգավիճակ կամ ապաստանի հայցով դիմելու իրավունքը:

Հետևաբար՝ փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելու իրավունքի ներառումը անմիջապես ծանուցման ենթակա իրավունքների ցանկում կնպաստի վերը թվարկված իրավիճակներում միջազգային իրավունքի դրույթներով ամրագրված վերը նշված իրավունքի անթույլատրելի չարաշահման բացառմանը:

Առաջարկվող կարգավորման նպատակն է օրենքով սահմանված կարգով ազատությունը սահմանափակված օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի համար դիմելու, այդ թվում՝ Օրենքով նախատեսված իրավասու մարմնի կողմից կայացված բացասական որոշումը դատական կարգով բողոքարկելու ողջ ընթացակարգը ենթարկել ժամկետային կարգավորման, բացառել նույն հիմքով կրկին անգամ լիազոր մարմնին դիմելու պրակտիկան՝ ապահովելով իրավական որոշակիությունը, բացառելու իրավունքի չարաշահման հնարավորությունը և ապահովելու քրեադատավարական հարաբերությունների բնականոն ընթացքը:

Այսպես՝ առաջարկվում է.

➤ արգելանքի վերցված անձանց պարզաբանման ենթակա իրավունքների շարքում ներառել ծանուցման պահից 15 օրացուցային օրվա ընթացքում փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի համար դիմելու իրավունքը,

➤ սահմանել լիազոր պետական մարմնի կողմից հիշյալ խումբ անձանց ներկայացրած դիմումներն արագացված ընթացակարգով քննարկելու, որոշում կայացնելու և այդ մասին անհապաղ դիմումատուին տեղեկացնելու կարգ,

➤ օրենսդրորեն արգելել նույն հիմքով կրկին անգամ դիմումի ներկայացումը,

➤ սահմանել կայացված բացասական որոշումը վարչական դատարան բողոքարկելու 10-օրյա ժամկետ,

➤ սահմանել վարչական դատարանի կողմից հայցադիմումը քննության առնելու և համապատասխան դատական ակտ կայացնելու ու հրապարակելու 1-ամսյա ժամկետ,

➤ նախատեսել վարչական դատարանի կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ դատարան բողոքարկելու 10-օրյա ժամկետ,

➤ վերաքննիչ դատարանում գործի քննության, դատական ակտի կայացման ու հրապարակման 15-օրյա ժամկետ,

➤ վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու 5-օրյա ժամկետ,

➤ վճռաբեկ դատարանի կողմից բողոքի քննության և համապատասխան դատական ակտի կայացման ու հրապարակման 5-օրյա ժամկետ:

Հատկանշական է, որ նմանատիպ կարգավորում առկա է նաև Վրաստանի օրենսդրությամբ:

Նման կարգավորումներով կհստակեցվի օրենքով սահմանված կարգով ազատությունը սահմանափակված օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի համար դիմելու, այդ թվում՝ Օրենքով

նախատեսված իրավասու մարմնի կողմից կայացված բացասական որոշումը դատական կարգով բողոքարկելու ընթացակարգը՝ սահմանելով հստակ և կանխատեսելի ժամկետներ՝ ապահովելու համար իրավական որոշակիությունը, քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունը, քրեադատավարական հարաբերությունների բնականոն ընթացքը և բացառելով իրավունքի չափազանցական հնարավորությունը:

**ХОДАТАЙСТВО ЛИЦ, НЕЗАКОННО ПРОНИКШИХ НА ТЕРРИТОРИЮ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, О ПРЕДОСТАВЛЕНИИ СТАТУСА БЕЖЕНЦА
ИЛИ УБЕЖИЩА КАК ПРЕПЯТСТВИЕ ДЛЯ ВЫПОЛНЕНИЯ
ОБЯЗАТЕЛЬСТВ ПО МЕЖДУНАРОДНЫМ ДОГОВОРАМ**

Гаяне Меликян

*Аспирант кафедры уголовного судопроизводства и
криминалистики ЕГУ*

Статья посвящена проблемам, возникающим в связи с нечеткими нормами, установленными законодательством РА, в случае ходатайства лиц, незаконно проникших на территорию Республики Армения, о предоставлении статуса беженца или убежища; в ней проанализированы конкретные спорные ситуации, создающие препятствия при выполнении обязательств по международным договорам, а также сделаны предложения, направленные на решение возникших проблем.

**APPLICATION OF PERSONS WHO ILLEGALLY ENTERED THE TERRITORY
OF THE REPUBLIC OF ARMENIA ON THE PROVISION OF REFUGEE STATUS
OR ASYLUM AS AN OBSTACLE TO
THE FULFILLMENT OF OBLIGATIONS UNDER
INTERNATIONAL TREATIES**

Gayane Melikyan

*PhD student at YSU Chair of Criminal
Procedure and Criminalistics*

The article is devoted to the problems arising in connection with the unclear norms set by the legislation of the Republic of Armenia, in the case of applications of persons who have illegally entered the territory of the Republic of Armenia for the provision of refugee status or asylum; it analyzes the specific controversial

situations that create obstacles in the fulfillment of obligations under international treaties, and also makes proposals aimed at the solution of the problems that have arisen.

Բանալի բառեր - փախստական, ապաստան, օրենք, կոնվենցիա, միջազգային պայմանագիր:

Ключевые слова: беженец, убежище, закон, конвенция, международный договор.

Key words: refugee, asylum, law, convention, international treaty.

**«ՔՐԵԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼԸ ԿԱՄ ՍՏԱՆԱԼԸ ԿԱՄ ՊԱՀՊԱՆԵԼԸ»
ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Արման Բաբախանյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,
գլխական ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Տ. Վ. Միմոնյան*

Քրեական ենթամշակույթ երևույթի գոյությունը բացառելու ուղղությամբ առավել արդյունավետ, լիարժեք և վճռական պայքար մղելու հնարավորություն ստեղծելու և այդպիսով հասարակական անվտանգությունն ու պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանումը ապահովելու նպատակով¹ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հանցակազմերով:

Չնայած վերոնշյալ օրենսդրական փոփոխություններն ունեն էական նշանակություն քրեական ենթամշակույթի դեմ պայքարի գործում և կարող են նպաստել այդ երևույթի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն, սակայն պետք է փաստել, որ

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) հիմնավորումը, http://www.parliament.am/draft_docs/7/K-288_himnavorum.pdf:

քննարկվող իրավական նորմերը պարունակում են որոշակի թերություններ և խնդրահարույց մոտեցումներ:

Սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածով սահմանված հանցակազմի սուբյեկտի՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հասկացության հետ կապված որոշ խնդիրներ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ գլխի իմաստով («Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները») քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, որը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կա՛մ մասնակցում է դրանց, կա՛մ կազմակերպում, կա՛մ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կա՛մ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը, կա՛մ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ²:

² Նույն կարգավորումները նախատեսված են նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 308-րդ հոդվածի 2-րդ մասում, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11-680&Reading=1>:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հասկացությունը սահմանելիս օրենսդիրը թույլ է տվել օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտում, որի հետևանքով վերոնշյալ սահմանումը փաստացի իր մեջ, բացի քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողներից, ընդգրկում է նաև քրեական աստիճանակարգության ավելի ցածր աստիճանի վրա գտնվող սուբյեկտների՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ»:

Օրենսդրական տեխնիկայի վերոնշյալ կանոնի լույսի ներքո՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի հասկացությունը մեկնաբանելու պարագայում ստացվում է, որ անձը կհամարվի քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, եթե՝

ա) քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն՝ համարվում է հեղինակություն և դրա հետ միաժամանակ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, կամ

բ) կատարում է ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «ինչպես նաև» շաղկապից հետո, թվարկված արարքներից որևէ մեկն՝ անկախ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, հեղինակություն համարվելու հանգամանքից:

Նման կարգավորումների պայմաններում կարող է առաջանալ խնդրահարույց իրավիճակ, երբ օրինակ՝ քրեական ենթամշակույթ

կրող խմբավորման հիերարխիայում միջին կամ նույնիսկ ցածր կարգավիճակ ունեցող անձը դրամական միջոցների հավաքագրում իրականացնելու փաստի ուժով միայն կընկալվի որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող և քրեական օրենսդրության տեսանկյունից կհավասարեցվի քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն հեղինակություն համարվող այնպիսի սուբյեկտին, ինչպիսին է «օրենքով գողը»:

Բացի այդ, հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «ինչպես նաև» շաղկապից հետո, թվարկված արարքները նկարագրված են քրեական ենթամշակույթին վերաբերող այլ հանցակազմերով, որոնցով էլ քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեն քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հիերարխիայում միջին կամ ցածր կարգավիճակ ունեցող անձինք: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223.3-րդ հոդվածի (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավվելը) 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը, նույնպես կարող է դրսևորվել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու ձևով, որով էլ պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն վերոնշյալ սուբյեկտները նման արարքներ կատարելու դեպքում:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հասկացության կիրառումը միայն քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, հեղինակություն համարվող անձանց՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ ունեցողների նկատմամբ երաշխավորելու համար անհրաժեշտ է սույն հասկացությունում «ինչպես նաև» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով: Նման պարագայում, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ

օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները³, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող կոդիտարկվի այն անձը, որը քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն՝ կհամարվի հեղինակություն և դրա հետ միաժամանակ կկատարի տվյալ իրավանորմով սահմանված արարքներից որևէ մեկը:

Հատկանշական է, որ օրենսդրական տեխնիկայի կանոնների վերոնշյալ խախտումը փաստվել է նաև մինչ Նախագծի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնի կողմից⁴: Սակայն քննարկվող խնդիրը լուծելու համար վերջիններիս ներկայացված առաջարկը՝ «ինչպես նաև» շաղկապը «և» շաղկապով կամ ստորակետով փոխարինելու վերաբերյալ, ընդունելի չէ այն պատճառաբանությամբ, որ նման պարագայում, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող կոդիտարկվի այն անձը, որը քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն՝ կհամարվի հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար կտա հրահանգներ և միաժամանակ կկատարի տվյալ իրավանորմով սահմանված մյուս արարքներ:

³ Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կա՛մ «և», կա՛մ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կա՛մ «և», կա՛մ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

⁴ Տե՛ս Նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնի եզրակացությունը, http://www.parliament.am/draft_history.php?do=showdivaval&Div=5&ID=10777:

րից որևէ մեկը: Այս առումով, հարկ է նշել, որ չնայած հրահանգներ տալը քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի «գործառնություններից» մեկն է, սակայն դրա կատարումը պարտադիր պայման չէ անձի մոտ այդպիսի կարգավիճակի առկայությունը հավաստելու համար: Հետևաբար, վերոնշյալ արարքի կատարումը, ի տարբերություն քննարկվող նորմում թվարկված մյուս արարքների, դիտարկել որպես պարտադիր պայման՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունենալու համար, ընդունելի չէ և չունի որևէ օբյեկտիվ հիմնավորում: Այսպես, օրինակ՝ անձը կարող է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվելով հեղինակություն՝ լինելով «օրենքով գող», անձամբ տնօրինել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը, ինչն արդեն իսկ բավարար է վերջինիս՝ որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, դիտարկելու համար՝ անկախ նրա կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար հրահանգներ տալու հանգամանքից:

Բացի այդ, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար հրահանգներ տալը քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունենալու պարտադիր հատկանիշ դիտարկելը կհանգեցնի նաև քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետության նվազեցման, քանզի վարույթն իրականացնող մարմինը հարկադրված կլինի յուրաքանչյուր դեպքում ապացուցել նաև այդ հանգամանքը, ինչն իրենից որոշակի դժվարություն է ներկայացնում՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների անդամների գաղտնապահությունը: Օրինակ՝ նման մոտեցման պարագայում անձի՝ «օրենքով գող» լինելու և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքին՝ «սխողկային», մասնակցելու հանգա-

մանքները վարույթն իրականացնող մարմնի կողմից ապացուցելը դեռևս բավարար չի լինի անձին որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկելու համար: Նման դեպքում, վարույթն իրականացնող մարմինը պարտադիր պետք է վերոնշյալ հանգամանքներից բացի ապացուցի նաև, որ անձը քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ: Այդպիսի մոտեցումն ընդունելի չէ և հանգեցնելու է քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետության նվազեցման:

Սույն գիտական հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել նաև այն հարցը, թե ՀՀ օրենսդրի կողմից ո՞վ է դիտարկվում որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ:

Մինչ վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ ներպետական իրավակարգավորումներին անդրադառնալը հարկ ենք համարում քննարկման առարկա դարձնել այլ երկրներում գործող իրավակարգավորումները:

Այսպես, Վրաստանի քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում «գողական համագործակցությունում» անդամակցության համար և անձի կողմից «օրենքով գողի» կարգավիճակում լինելու համար⁵: Միննույն ժամանակ, «Կազմակերպված հանցավորության և շոթման մասին» Վրաստանի օրենքում բացահայտված է «գողական համագործակցության» անդամ, «օրենքով գող» հասկացությունների բովանդակությունը⁶:

Վրաստանի քրեական օրենսգրքում առկա, քրեական ենթամշակույթին վերաբերող կարգավորումներին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այուհետ նաև՝ ՄԻԵԴ) անդրադարձել է Աշլարբայի գործով և հատուկ ընգծել, որ վրաց օրենսդիրը վերոնշյալ

⁵ <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=229>:

⁶ <https://matsne.gov.ge/ru/document/view/27814?publication=1>:

հանցանքների իրավական ամրագրման համար նախընտրել է պահպանել խոսակցական լեզուն, ինչը, ըստ ՄԻԵԴ-ի, ակնհայտորեն արվել է նրա համար, որպեսզի հասարակության կողմից ավելի հեշտ ընկալվի նոր քրեականացված արարքների էությունը⁷: Հարկ է փաստել, որ սույն գործով ՄԻԵԴ-ը չի արձանագրել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում, այլ կերպ, ըստ ՄԻԵԴ-ի, վրացական իրավակարգավորումները համապատասխանել են իրավական որոշակիության սկզբունքին:

Անդրադառնալով քննարկվող հարցի վերաբերյալ ուկրաինական փորձին՝ հարկ է նշել, որ Ուկրաինայի քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածում (հանցավոր համագործակցություն կամ հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ դեկավարելը, ինչպես նաև դրան մասնակցելը) որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է արարքի կատարումը անձի կողմից, որը իրականացնում է հանցավոր ազդեցություն կամ որը գտնվում է բարձր հանցավոր ազդեցության սուբյեկտի կարգավիճակում, այդ թվում՝ «օրենքով գողի» կարգավիճակում: Նույն հոդվածի ծանոթագրություններում ամրագրված է վերոնշյալ հասկացությունների բովանդակությունը, ըստ որի՝ այդպիսին է այն անձը, որը իր հեղինակության, այլ անձնական հատկությունների և հնարավորությունների շնորհիվ կատարում է տվյալ ծանոթագրություններում թվարկված արարքները⁸: Ստացվում է, որ Ուկրաինայում օրենսդրական մակարդակում տրված է բարձր հանցավոր ազդեցության սուբյեկտի կարգավիճակում գտնվող անձանց ոչ սպառնիչ ցանկ, որում ուղղակիորեն ամրագրված է միայն, որ այդպիսին է «օրենքով գողը»: Այլ կերպ, օրենսդիրը չի պարզաբանել, թե բացի «օրենքով գողից», քրեական ենթամշակույթ կրող խմբավորումներում այլ կարգավիճակ ունեցող անձանցից կոնկրետ ո՞ւմ պետք է

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Աշլաբբան ընդդեմ Վրաստանի գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ 45554/08, 38-րդ կետ, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-145572>:

⁸ <https://megot.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/razdel-1-9/>:

դիտել որպես բարձր հանցավոր ազդեցության սուբյեկտի կարգավիճակում գտնվող անձ՝ վերոնշյալ հարցի պարզաբանումը, ըստ էության, վերապահելով իրավակիրառ մարմիններին:

Վրաստանում և Ուկրաինայում առկա իրավակարգավորումներից էականորեն տարբերվող մոտեցում է որդեգրվել քրեական ենթամշակույթի դեմ պայքարի առնչությամբ Ռուսաստանի Դաշնությունում:

Այսպես, քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումներ սահմանելիս ՌԴ օրենսդրի կողմից որդեգրված մոտեցումից բխում է, որ վերջինիս համար ընդունելի չէ օրենսդրական մակարդակում քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների ներկայացուցիչների կարգավիճակը բնութագրող տերմինների օգտագործումը՝ նույնիսկ նվազագույն ծավալներով:

ՌԴ-ում 2009 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածը (հանցավոր համագործակցություն (հանցավոր կազմակերպություն) կազմակերպելը կամ դրան մասնակցելը), լրացվեց նոր ծանրացնող հանգամանքով, այն է՝ արարքի կատարումը հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի կողմից⁹: Այսպիսով, ՌԴ օրենսդիրը քրեական օրենսդրությունում խուսափեց հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձանց բնութագրող հատուկ տերմիններ (օրենքով գող և այլն) կիրառելուց: Նույն մոտեցումը դրսևորեց նաև ՌԴ Գերագույն դատարանի պլենումը, որը չնայած ընդհանրական կերպով սահմանեց հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի հատկանիշները, սակայն չպարզաբանեց, թե ի վերջո հանցավոր հիերարխիայում ի՞նչ կարգավիճակ (տիտղոս) զբաղեց-

⁹ St' u Федеральный закон от 03.11.2009 N 245-ФЗ "О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации и в статью 100 Уголовно-процессуального кодекса Российской Федерации", http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_93373/3d0cac60971a511280cbb229d9b6329c07731f7/#dst100018:

նող անձինք են հանդիսանում հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող¹⁰:

Նույնիսկ այն դեպքում, երբ ՌԴ քրեական օրենսգրքում 2019 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնելը նախատեսվեց որպես ինքնուրույն հանցակազմ (ՌԴ քրեական օրենսգրքի 210.1-րդ հոդված)¹¹, օրենսդրական մակարդակում կրկին չպարզաբանվեց, թե ո՞վ է հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող հանցակազմի սուբյեկտը: Նույնիսկ տվյալ օրենքի նախագծի հիմնավորման մեջ, որում ներկայացված էին նոր հանցակազմը նախատեսելու անհրաժեշտության վերաբերյալ փաստարկները, քննարկվող հարցին պատասխան չտրվեց¹²: Այս առումով ուշագրավ է, որ ՌԴ Պետդումայում ՌԴ Նախագահի լիազոր ներկայացուցիչ Գ.Մինխը 2019 թվականին կատարված վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների նախագծի քննարկման ժամանակ՝ անդրադառնալով հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձանց բնութագրող հատուկ տերմինների օրենսդրական ամրագրման անհնարինությանը հայտնել է, որ Ռուսաստանը ղեկավարվում է «այլ տրամաբանությամբ», քան Վրանստանը¹³: Հարկ է նշել, որ նման մոտեցումն ընդունելի համար-

¹⁰ Ст'а Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 "О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участия в нем (ней)", 24-րդ կետ, <https://rg.ru/2010/06/17/prest-org-dok.html>:

¹¹ Ст'а Федеральный закон от 01.04.2019 N 46-ФЗ "О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации и Уголовно-процессуальный кодекс Российской Федерации в части противодействия организованной преступности", http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_321411/3d0cac60971a511280cbb a229d9b6329c07731f7/#dst100030:

¹² Ст'а Пояснительная записка к проекту федерального закона "О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации и Уголовнопроцессуальный кодекс Российской Федерации (в части противодействия организованной преступности)", <https://sozd.duma.gov.ru/bill/645492-7>:

¹³ <https://www.rosbalt.ru/russia/2019/02/21/1765534.html>:

վեց նաև քրեական իրավունքի տեսության որոշ ներկայացուցիչների կողմից: Օրինակ, ըստ Յու. Վ. Գոլիկի՝ նման հասկացությունների կիրառումը վիրավորական է ամբողջ հասարակության և երկրի բնակչության համար¹⁴:

Փաստորեն, ՌԴ օրենսդիրը և Գերագույն դատարանի պլենումը, ըստ էության, հստակ չտվեցին պատասխան այն հարցին, թե հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող ո՞ւմ պետք է դիտել. միայն «օրենքով գողերի՞ն», թե՞ հանցավոր հիերարխիայում այլ կարգավիճակ (տիտղոս) ունեցող անձանց ևս:

Նման կարգավորումների պատճառով էլ քրեական իրավունքի տեսության մեջ արտահայտվեցին միմյանցից էականորեն տարբերվող կարծիքներ հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձանց շրջանակի վերաբերյալ:

Այսպես, ըստ Վ. Վ. Ագիլդինի, ՌԴ քրեական օրենսգրքի 210.1-րդ հոդվածի իմաստով հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնելը անձի գտնվելն է ամենաբարձր աստիճանի վրա, որը ենթադրում է Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում պրոֆեսիոնալ հանցավոր միջավայրի ղեկավարում¹⁵:

Կ. Ա. Մաքսիմովը, իր հերթին, գտնում է, որ նման սուբյեկտ պետք է լինեն հենց «օրենքով գողերը»: Մնացած բոլոր անձինք, որոնք կոչվում են «պալաժենեց» (положенец) և «նայողներ» (смотрящий), քրեական հեղինակություն (որպես հավաքական հասկացություն), «օրենքով գողի» թեկնածու, անձինք, ովքեր մոտ են գտնվում «օրենքով գողերին» և օգտագործում են հանցավոր միջավայրում նրանց վստահությունը և հեղինակությունը, ինչպես նաև անձինք, որոնք «օրենքով գողի» կողմից ժամանակավորապես լիազորված են իրականացնել հանցավոր հիերարխիայում բարձրագույն

¹⁴ См. у **Голик Ю. В.**, «Вор в законе», или Закон «по понятиям». Уголовный кодекс не должен переходить на язык «уголовников» // Российский криминологический взгляд. 2009. № 4. С. 187-188:

¹⁵ См. у **Агильдин В. В.**, Высшее положение в преступной иерархии: проблемы толкования и реализации// Young Scientist, 2019, N 24 (262), С. 167:

կարգավիճակ զբաղեցնող անձի գործառույթները, չպետք է դիտարկվեն որպես քննարկվող կատեգորիայի անձ¹⁶:

Ս. Բելոցերկովսկին գտնում է, որ «պալաժենեցը» (положенец) և «նայողը» (смотрящий) ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ սուբյեկտ են, իսկ «օրենքով գողը» ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հատուկ սուբյեկտ է¹⁷:

Դ. Գրիգորևը և Վ. Մորոզովը ընդունելով հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի հասկացության գնահատողական բնույթը՝ միաժամանակ առաջարկում են չափանիշներ, որոնք կնպաստեն անձի այդպիսի կարգավիճակի հաստատմանը: Այդպիսի չափանիշներն են անձի հանցավոր կոչման առկայությունը (օրինակ՝ «օրենքով գող», «պալաժենեց» (положенец), «նայող» (смотрящий)), «օբյեկտը» տիրապետողի կոչման առկայությունը, ինչպես նաև անձի՝ միջազգային հանցավոր կապերի հետ առնչության առկայությունը¹⁸:

Ինչ վերաբերում է ՀՀ ներպետական իրավակարգավորումներին, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ օրենսդիրը որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող է դիտարկում «օրենքով գողերին» և «քրեական հեղինակություններին»: Պետք է նշել, որ ի սկզբանե Նախագծում քրեական աստիճանակարգության բարձրագույն

¹⁶ Տե՛ս **Максимова К. А.**, К вопросу о содержании понятия «лицо, занимающее высшее положение в преступной иерархии», используемого законодателем в ч. 4 ст. 210 УК РФ // Вопросы юридической науки: взгляд молодых ученых: сборник статей, посвященный 20-летию Алтайской академии экономики и права. Барнаул: Изд-во ААЭП, 2013, էջ 81:

¹⁷ Տե՛ս **Белоцерковский С.**, Новый Федеральный закон об усилении борьбы с преступными сообществами: комментарий и проблемы применения // Уголовное право, 2010, N 2, էջ 13:

¹⁸ Տե՛ս **Григорьев Д.А., Морозов В.И.**, Как определить лицо, занимающее высшее положение в преступной иерархии?, Юридическая наука и правоохранительная практика 4 (30), 2014, էջ 56 <https://cyberleninka.ru/article/n/kak-opredelit-litso-zanimayuschee-vysshee-polozhenie-v-prestupnoy-ierarhii>:

կարգավիճակ ունեցող անձի հասկացության մեջ վերոնշյալ երկու տերմինները չէին կիրառվում և օրենսդրական մակարդակում բացահայտված չէր, թե անձի որ կարգավիճակի (տիտղոսի) առկայությունը պետք է դիտարկվեր որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող¹⁹: «Օրենքով գող» և «քրեական հեղինակություն» տերմինները Նախագծում ընգրկվեցին միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից այն առաջին ընթերցմամբ ընդունելուց հետո²⁰:

ՀՀ ներպետական իրավակարգավորումների առնչությամբ նախ հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե օրենսդրական մակարդակում արդյո՞ք ընդունելի է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների կարգավիճակը բնութագրող տերմինների օգտագործումը:

Այսպես, եթե ՀՀ օրենսդիրն ընդունելի չհամարեր օրենսդրական մակարդակում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների կարգավիճակը բնութագրող տերմինոլոգիայի կիրառումը և փոխարենը կիրառեր միայն «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ» տերմինը, ինչին նմանվող մոտեցում է որդեգրվել ՌԴ-ում, ապա նույնիսկ այդ սուբյեկտի հիմնական հատկանիշները թվարկելու միջոցով այդ սուբյեկտի հասկացությունը օրենսդրորեն ամրագրելու դեպքում իրավակիրառ պրակտիկայում կառաջանար խնդրահարույց իրավիճակ: Նման պայմաններում իրավակիրառ մարմինների համար միանշանակ ընկալելի չէր լինի, թե «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ» տերմինի ներքո ում պետք է դիտարկել միայն այն անձի՞ն, ով պրոֆեսիոնալ հանցավոր միջավայրի ամբողջ

¹⁹ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված Նախագծի տարբերակը, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1077-7&Reading=1>:

²⁰ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված Նախագծի տարբերակը, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10777&Reading=3>:

ղեկավարում է իրականացնում, թե՞ «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող բոլոր անձանց, թե՞ բացի վերոնշյալներից նաև հանցավոր այլ կարգավիճակ (տիտղոս) ունեցողներին՝ «պալաժենեց» (поло-женеи), «նայող» (смотрящий) և այլն:

Հետևաբար, գտնում ենք, որ ՀՀ օրենսդիրը, իրավացիորեն ընդունելի համարելով օրենսդրական մակարդակում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների կարգավիճակը բնութագրող տերմինոլոգիայի կիրառումը, փորձել է հնարավորինս ընդգծել այն անձանց շրջանակը, ում իրավակիրառ մարմինները պետք է դիտարկեն որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ: Հաշվի առնելով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, գտնում ենք, որ ՀՀ օրենսդրի կողմից նման մոտեցում որդեգրելը նաև լրացուցիչ երաշխիք է ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցում:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրի կողմից որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ դիտարկվող սուբյեկտների շրջանակի հետ կապված առկա են որոշակի խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել իրավակիրառ հակասական պրակտիկայի առաջացման:

Այսպես, օրենսդիրը որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող է դիտարկում «օրենքով գողերին» և «քրեական հեղինակություններին»: Այս առումով, պետք է նշել, որ, ի տարբերություն վրացական իրավակարգավորումների, որոնցով առանձին հանցակազմ է հանդիսանում միայն անձի կողմից «օրենքով գողի» կարգավիճակում լինելը, ՀՀ օրենսդիրը «օրենքով գողերի» հետ միասին առանձնացրել է և որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող է դիտարկել նաև քրեական հեղինակություններին:

ՀՀ ներպետական վերոնշյալ իրավակարգավորումների առնչությամբ հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ

Կ. Ա. Բիշարյանի կողմից արտահայտվել է տեսակետ առ այն, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողներ են, ըստ կարգավիճակի նվազման՝ ա) օրենքով գող, բ) քրեական հեղինակություն, այդ թվում՝ զոն նայող, գ) 2-րդ ցուցակ (անձ, որն օբյեկտի վերաբերյալ վարում է 2-րդ ցուցակը):

Միննույն ժամանակ, քրեական աստիճանակարգության պայմանականորեն միջին կարգավիճակ ունեցողներ են՝ ա) կամեր նայողներ, բ) բարաք նայողներ (անկյունային քնողներ, ուզլավիկ կամ պերվի պրախող): Փակ և կիսափակ տիպի հիմնարկներում, հատուկ քանակակազմի պահման խցերում, կան, այսպես կոչված, կամեր նայողներ, որոնք քրեական հեղինակություններ կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման այլ անդամներ են: Քրեական աստիճանակարգության պայմանականորեն ստորին կարգավիճակ ունեցողներ են հանդիսանում ճուտը, գլազը²¹: Հարկ է փաստել, որ Կ. Ա. Բիշարյանի կողմից իրավացիորեն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող են դիտարկվել ոչ բոլոր անձինք, որոնք ունեն «նայողի» (смотрящий) կարգավիճակ: Վերջինս «կամեր նայողներին» և «բարաք նայողներին» իրավացիորեն չի դիտարկում որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող: Կարծում ենք, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս «իրավագործությունը» տարածվում է բավականին նեղ շրջանակի անձանց վրա և չնայած նրանք համարվում են քրեական հեղինակություն, սակայն չեն պատկանում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց դասին:

Հարկ է փաստել, որ եթե «օրենքով գող» տերմինի բովանդակության բացահայտումը իրավակիրառ պրակտիկայում չի առաջացնի լուրջ խնդիրներ՝ հաշվի առնելով այդ սուբյեկտի գործառույթների,

²¹ Տե՛ս Կ. Ա. Բիշարյան, Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), Երևան 2020, էջ 23-25, <http://www.justiceacademy.am/#1954>:

այդ կարգավիճակը տալու, ստանալու վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները²², ապա նույնը հնարավոր չէ ասել «քրեական հեղինակություն» տերմինի վերաբերյալ:

Նախ պետք է նշել, որ, ի տարբերություն «օրենքով գող» եզրույթի «քրեական հեղինակություն» եզրույթը գնահատողական հասկացություն է, որի պայմաններում ստացվում է, որ, փաստացի, օրենսդիրը քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ գնահատողական հասկացությունը փորձել է բացահայտել մեկ այլ գնահատողական հասկացության՝ «քրեական հեղինակություն» տերմինի միջոցով: Նման մոտեցման պարագայում ստացվում է, որ, ըստ օրենսդրի, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող է համարվում քրեական հեղինակությունը, որը քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվում է հեղինակություն: Գտնում ենք, որ վերոնշյալը չի կարող դիտարկվել որպես ընդունելի և իրավակիրառ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող մոտեցում:

Բացի այդ, հարկ է նշել, որ որպես քրեական հեղինակություն են հանդես գալիս ոչ միայն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողները (օրինակ՝ «պալաժենեց» (положенец), «զոն նայող»), այլ նաև վերջիններիս համեմատ քրեական աստիճանակարգությունում ավելի ցածր մակարդակի վրա գտնվող սուբյեկտները (կամեր նայող, բարաք նայող և այլն), որոնք չնայած նույնպես համարվում են հեղինակություն, սակայն նրանց «իրավագործությունը» տարածվում է բավականին նեղ շրջանակի անձանց վրա: Նման պայմաններում ստացվում է, որ օրենսդիրը ՀՀ

²² Տե՛ս, օրինակ՝ **Կ. Ա. Բիշարյան**, Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործական մեկնաբանություններ), Երևան 2020, էջ 8-14, 24-25, ՄԻԵԴ-ի Աշխարհան ընդդեմ Վրաստանի գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռը, զանգատ 45554/08, <http://hudoc.echr.coe.int/-eng?i=001-145572>:

քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածով նպատակ ունենալով քրեական պատասխանատվություն նախատեսել քրեական աստիճանակարգության միայն **բարձրագույն** կարգավիճակ ունեցող անձանց համար, «քրեական հեղինակություն» եզրույթը կիրառելու հետևանքով փաստացի տվյալ հանցակազմի սուբյեկտների շրջանակը սահմանել է ավելի լայն՝ հնարավորություն տալով իրավակիրառ մարմիններին որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկել նաև այդ աստիճանակարգությունում ոչ թե բարձրագույն, այլ ավելի ցածր կարգավիճակ ունեցող, բայց քրեական հեղինակություն համարվող անձանց, ինչպիսի մոտեցումն ընդունելի չէ: Հետևաբար, գտնում ենք, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հասկացությունը սահմանելիս օրենսդիրը պետք է հրաժարվի «քրեական հեղինակություն» եզրույթը կիրառելուց:

Նման պայմաններում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ օբյեկտիվորեն հնարավոր չէ օրենսդրական մակարդակում սպառնիչ սահմանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող բոլոր սուբյեկտներին՝ գտնում ենք, որ օրենսդիրը պետք է սահմանի այդպիսի սուբյեկտների ոչ սպառնիչ ցանկ:

Սուբյեկտների ոչ սպառնիչ ցանկ՝ սուբյեկտների շրջանակի բաց թվարկում, սահմանելու դեպքում իրավակիրառ մարմինները տվյալ ցանկում ուղղակիորեն չընդգրկված սուբյեկտների շրջանակը բացահայտելու համար կոդեկավարվեն մեկնաբանման *ejusdem generis* հանրաճանաչ կանոնով, համաձայն որի՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին²³:

²³ Տե՛ս, *mutatis mutandis*, Անդրիաս Ղուկասյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը:

Գարծում ենք, որ օրենսդիրը քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ոչ սպառիչ ցանկ սահմանելիս կարող է ընտրություն կատարել ներքոշարադրյալ երկու մոտեցումների միջև:

Առաջին մոտեցման համաձայն՝ օրենսդիրը կարող է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ոչ սպառիչ ցանկում ներառել միայն օրենքով գողերին, ինչպիսի մոտեցում դրսևորվել է Ուկրաինայի քրեական օրենսգրքում: Նման պայմաններում այլ կարգավիճակ (տիտղոս) ունեցող անձանց որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկելու հարցի լուծումը ամբողջությամբ կվերապահվի իրավակիրառ մարմիններին: Այս մոտեցման թերությունը այն է, որ օրենսդիրը ոչ սպառիչ ցանկում ներառելով միայն օրենքով գողերին, չի ստեղծում օրենսդրական բավարար հիմք իրավակիրառ մարմինների կողմից *ejusdem generis* կանոնի իրավաչափ կիրառումը երաշխավորելու համար և նման մոտեցումը կարող է հանգեցնել իրավակիրառ մարմինների կողմից իրենց հայեցողական լիազորությունների չարաշահման, որի արդյունքում իրավակիրառ մարմինները կարող են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց շրջանակը մեկնաբանել բավականին նեղ՝ չընդգրկելով օրինակ՝ զոն նայողին, քաղաքի առանձին շրջանը նայողին, կամ էլ մեկնաբանել բավականին լայն՝ դրա մեջ ընդգրկելով քրեական աստիճանակարգության միջին կամ ցածր կարգավիճակ ունեցողներին (օրինակ՝ կամեր նայող, բարաք նայող):

Մյուս մոտեցման համաձայն՝ օրենսդիրը սահմանելով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ոչ սպառիչ ցանկ դրա մեջ պետք է ներառի ոչ միայն «օրենքով գողերին», այլ նաև քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող այլ սուբյեկտների ևս, այդպիսի մոտեցումը, մեր կարծիքով, առավել ընդունելի է: Առաջարկում ենք, «օրենքով գողերի» հետ միասին, այդ ցանկում նաև ներառել առնվազն «պալաժե-

նեցի» (положенеи)²⁴ և «զոն նայողի» կարգավիճակ ունեցողներին: Վերոնշյալ կարգավիճակների նախատեսման պարագայում, կիրառելով *ejusdem generis* կանոնը, ի տարբերություն ներկայիս կարգավորումների, հնարավոր կլինի իրավացիորեն որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող չդիտարկել օրինակ՝ այնպիսի սուբյեկտներին, ինչպիսիք են «կամեր նայողը», «բարաք նայողը», ում «իրավագորությունների» շրջանակը անհամեմատ ավելի նվազ է, քան թե «օրենքով գողինը», «պալաժենեցինը» (положенеи) կամ «զոն նայողինը»: Միևնույն ժամանակ, կիրառելով վերոնշյալ կանոնը իրավակիրառ մարմինները կկարողանան որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկել այն անձանց, ովքեր չնայած չունեն «օրենքով գողի», «պալաժենեցի» (положенеи) կամ «զոն նայողի» կարգավիճակ (տիտղոս), սակայն քրեական ենթամշակույթ կրող խմբավորման շրջանակներում ունեն հեղինակություն և փաստացի օժտված են նույն կամ հավասարաթեք «իրավագորությամբ», ինչ-որ վերոնշյալ սուբյեկտները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև» շաղկապն անհրաժեշտ է փոխարինել «կամ» շաղկապով, որի պայմաններում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, հեղինակություն համարվելը պարտադիր պայման կհանդիսանա անձին՝ որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկելու համար ոչ միայն վերջինիս կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրա-

²⁴ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտերում (...) թարգմանության ոչ ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները (եզրույթները) գրվում են հայերեն տառադարձությամբ: Անհրաժեշտության դեպքերում հայերեն հապավումների կամ տերմինների հետ փակագծերում կարող են կիրառվել նաև լատիներեն կամ օտարալեզու հապավումներ կամ տերմիններ»:

կանացման համար հրահանգներ տալու դեպքում, այլ նաև քննարկ-վող իրավանորմում թվարկված մյուս արարքները կատարելու դեպքում ևս: Բացի այդ, օրենսդիրը պետք է հրաժարվի քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի հասկացության մեջ «քրեական հեղինակություն» տերմինը կիրառելուց և այդ հասկացությունում ամրագրի այն սուբյեկտների ոչ սպառիչ ցանկը, որոնք, ըստ օրենսդրի, հանդիսանում են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող՝ ցանկում ներառելով առնվազն «օրենքով գողի», պալաժենեցի (положенец) և «զոն նայողի» կարգավիճակները (տիտղոսները):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ «ПРЕДОСТАВЛЕНИЯ, ПОЛУЧЕНИЯ ИЛИ ПОДДЕРЖАНИЯ ВЫШЕГО СТАТУСА В КРИМИНАЛЬНОЙ ИЕРАРХИИ»

Арман Бабахян

Аспирант кафедры уголовного права ЕГУ

Статья посвящена некоторым вопросам присвоения, получения или поддержания высшего статуса криминальной иерархии. В частности, автор статьи затронул проблемы в правовых нормах части 2 статьи 223.1 Уголовного кодекса РА, в результате автор представил соответствующие предложения с учетом опыта зарубежных стран, правовой позиции Европейского суда по правам человека и Кассационного суда РА, в целях совершенствования этих правовых норм.

SOME ISSUES OF "GRANTING, OBTAINING OR MAINTAINING THE HIGHEST STATUS IN THE CRIMINAL HIERARCHY"

Arman Babakhanyan

PhD Student at YSU Chair of Criminal Law

The article covers some issues of assigning, obtaining or maintaining the highest status of the criminal hierarchy. In particular, the author of the article touched upon the problems in the legal norms of Part 2 of Article 223.1 of the RA Criminal Code, as a result the author presented relevant proposals considering the experience of foreign countries, the legal position of the European Court of Human Rights and the Court of Cassation of the RA in order to improve these legal norms.

Բանալի բառեր - քրեական ենթամշակույթ, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում, գողական աշխարհ, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ, օրենքով գող, քրեական հեղինակություն:

Ключевые слова: криминальная субкультура, криминальная субкультурная группа, воровской мир, лицо с высшим статусом криминальной иерархии, вор в законе, криминальный авторитет.

Key words: criminal subculture, criminal subcultural group, thieves' world, a person with the highest status of the criminal hierarchy, thief in law, criminal authority.

**ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ
ՄԿՋԲՈՒՆՔ**

Հայկ Ավետյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ դատախազության
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության
դատախազ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր՝ Ա. Հ. Գաբուզյան*

I. Ներածություն

Քրեական իրավունքը խարսխված է մի շարք առանցքային սկզբունքների վրա, որոնց շարքում իբրև անձանց իրավաչափ ակնկալիքի և որոշակիության երաշխիք հանդես է գալիս ժամանակի ընթացքում օրենքի գործողության սկզբունքը:

Այս սկզբունքի կարևորությունն ու դերն ընդգծելու համար անհրաժեշտ է նշել, որ անտիկ ժամանակներում՝ հանցագործությունների հստակ սահմանումների բացակայության պայմաններում՝ անձինք ենթարկվում էին քրեական պատասխանատվության զուտ իշխողի կամ արքայի կամքով: Այդպիսի իրավիճակն առաջացնում էր անարդարության և կամայականության քառսային իրադրություն, երբ մարդիկ ապրում էին «ստրկացած»՝ իշխողի քմահաճույքի ճիւղաններում: Աստիճանաբար, անձի՝ սեփական անհատականության և կարևորության գիտակցմանը զուգընթաց առաջ եկավ միայն օրենքի հիման վրա քրեական պատասխանատվության ենթարկվելու սկզբունքը՝ **“nullum crimen, nulla poena sine lege”** - **«չկա հանցանք, չկա պատիժ՝ առանց օրենքի»:**

Որոշ հեղինակների պնդմամբ այս սկզբունքն առաջին անգամ արտացոլվել է 1215 թվականի անգլիական «Ազատությունների մեծ խարտիայում»,¹ որի 39-րդ հոդվածը նշում էր, որ ոչ մի ազատ մարդ

¹ **Stefan G.**, Journal of Comparative Legislation and International Law, Vol.24, No.1, Cambridge University Press, 1942, p. 29.

չի կարող ձերբակալվել, դատապարտվել առանց բարոնների օրինական դատի կամ առանց օրենքի²: Մյուս հեղինակների կարծիքով սկզբունքն իր ժամանակակից իմաստով ծագում է ֆրանսիական մեծ հեղափոխությունից, որը հաստատեց անհատի գերակայությունը սոցիումի նկատմամբ:³

Համաձայն վերոգրյալ սկզբունքի՝ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն, եթե իր արարքը համարվում է հանցանք՝ գրված օրենքով:

Քննարկվող սկզբունքն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեց 1787 թվականին Ավստրիայում⁴: Ներկայումս այն միջազգային և ներպետական մի շարք հիմնարար իրավական փաստաթղթերի անքակտելի մասն է:

II. Օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. Ընդհանուր կանոնը

“Nullum crimen sine lege” սկզբունքն ամրագրված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»*:

² «Օրինականություն հանդես» (Ավետյան Հ., Օրենքի հետադարձ ուժի արգելքը “Nullum Crimen Sine Lege” սկզբունքի համատեքստում), Երևան, 2019, էջ 25:

³ Առաքելյան Ս., Գաբուզյան Ա. և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ. 2012թ., էջ 83:

⁴ «Օրինականություն հանդես» (Ավետյան Հ., Օրենքի հետադարձ ուժի արգելքը “Nullum Crimen Sine Lege” սկզբունքի համատեքստում), Երևան, 2019, էջ 25:

Համանման ձևակերպմամբ այս սկզբունքն ամրագրված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասում և «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 11-րդ հոդվածի 2-րդ մասում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի՝ *«ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի եղել»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածում նշված է, որ *«արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:*

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ յուրաքանչյուր անձ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն այն քրեական օրենքով, որը գործել է նրա կողմից հանցանքը կատարելու ժամանակ: Եվ հակառակը՝ անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե արարքը չի համարվել հանցագործություն այն կատարելու ժամանակ գործող օրենքով⁵:

Այսպիսով, որոշելու համար, թե կոնկրետ դեպքում ո՞ր օրենքն է ենթակա կիրառման՝ անհրաժեշտ է հստակեցնել 2 հարց՝

- ո՞րն է քրեական օրենքի գործողության ժամանակը,
- ո՞րն է հանցագործության կատարման ժամանակը:

ա) քրեական օրենքի գործողության ժամանակը

Իրավանորմերի ստեղծումը պետք է տարանջատել դրանց՝ ուժի մեջ մտնելուց: Իրավանորմերը ստեղծվում են իրավաստեղծման գործընթացում⁶: Հետևաբար նորմը գոյություն ունի, երբ ավարտվել է դրա ստեղծման համար անհրաժեշտ գործընթացը⁷: Իրավաստեղծ-

⁵ Առաքելյան Ս., Գաբուզյան Ա. և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 46:

⁶ Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան 2020, էջ 156:

⁷ Տե՛ս նույն տեղում:

ման գործընթացն ավարտվում է իրավական ակտը դրա հրապարակման համար նախատեսված պաշտոնական պարբերականում հրապարակելու պահից, քանի որ այդ գործողությամբ ավարտվում է իրավաստեղծման գործընթացի բոլոր մասնակիցների գործունեությունը⁸: **Նորմի ուժի մեջ մտնելը**, սակայն, նրա գոյության համար անհրաժեշտ չէ:⁹

Այս տարանջատումը կարևոր է օրենքի գործողության հստակ պահն ամրագրելու համար: Հաճախ, օրենքներն ուժի մեջ են մտնում ոչ թե հրապարակման պահից, այլ այդ օրենքում նշված՝ ուժի մեջ մտնելու պահից և հենց այդ պահից էլ այդ օրենքի կոնկրետ իրավանորմերը սկսում են գործել և կիրառվել: **Հետևաբար, քրեական օրենքի գործողության ժամանակն այդ օրենքն ուժի մեջ մտնելու պահն է:**

Մինչև 2020 թ. հուլիսի 1-ն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացվում էր համապատասխան տեղեկագրում («ՀՀ պաշտոնական տեղեկագիր» և «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր») պարբերական հրատարակությունների միջոցով (նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասություն): 2020 թ. հուլիսի 1-ից հետո ընդունված նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացվում է արդարադատության նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակելու միջոցով (նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս):

Քրեական օրենքը կորցնում է իր ուժը և նրա գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում.

1. **Քրեական օրենքի վերացումը:** Քրեական օրենքը վերացվում է օրենսդիր մարմնի, ՀՀ Ազգային ժողովի կողմից¹⁰:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ **Առաքելյան Ս., Գաբուզյան Ա.** և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր

2. Քրեական օրենքի փոխարինումը քրեական նոր օրենքով: Այդպիսի փոխարինումը կարող է տեղի ունենալ՝ ա) քրեական նոր օրենքում նշելով նախկին օրենքի վերացման մասին, բ) առանց այդ մասին նշելու: Վերջին դեպքում քրեական նոր օրենքը ուժի մեջ մտնելու պահից նախկին օրենքը դադարեցնում է իր գործողությունը և կորցնում ուժը¹¹:

3. Քրեական օրենքում նշված այն ժամկետն անցնելը, որի ընթացքում պետք է գործեր այդ քրեական օրենքը: Քրեական օրենքը կարող է ընդունվել որոշակի ժամանակահատվածի համար, պետությունում տեղի ունեցող որոշակի արտակարգ հանգամանքներով պայմանավորված:¹²

4. Սահմանադրական դատարանի կողմից քրեական օրենքի որևէ նորմի հակասահմանադրական ճանաչելը: Այս դեպքում կոնկրետ նորմը, որը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող, ուժը կորցնում է:

б) Հանցագործության կատարման ժամանակը

Ինչպես արդեն նշվեց, արարքի հանցավորությունն ու պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, հետևաբար պետք է պարզել, թե որն է արարքը կատարելու ժամանակը:

Ձևական հանցակազմերի պարագայում, երբ վտանգավոր հետևանքների առաջացումը հանցակազմի պարտադիր հատկանիշ չէ, կամ նյութական հանցակազմերի դեպքում, երբ արարքի և վտանգավոր հետևանքի միջև ժամանակային խզում չկա կամ այն չնչին է (օրինակ՝ երբ հանցանք կատարող անձը հրազենով կրակում է տուժողին, և վերջինս տեղում մահանում է), հանցանքի կատարման պահի հետ կապված որևէ խնդիր չի կարող ծագել: Սակայն, երբ ա-

մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 47:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս նույն տեղում:

րարքի և վտանգավոր հետևանքի միջև որոշակի ժամանակահատված է անցնում (օրինակ՝ երբ հանցանք կատարող անձը հրազենով կրակում է տուժողին, սակայն վերջինս մահանում է հիվանդանոցում մի քանի օր անց), հանցանքի կատարման պահի հետ կապված գիտնականներն ունեն տարբերվող կարծիքներ:

Մասնավորապես, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Դուրմանովը նշում էր, որ նյութական հանցակազմերի դեպքում, երբ վտանգավոր հետևանքները նախատեսվում են օրենքով, որպես տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, հանցագործության կատարման ժամանակ պետք է համարել այդ վտանգավոր հետևանքների առաջացման ժամանակը¹³: Նյութական հանցակազմերի դեպքում վտանգավոր արարքի կատարումը, որը հետևանքներ չի առաջացրել, որակվում է որպես հանցափորձ: Այդ պատճառով, որոշ գիտնականներ կարծում են, որ օրենքի այն ցուցումը, թե հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել արարքը կատարելու ժամանակը հակասում է քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածին, ըստ որի հանցանքն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Ստացվում է, որ ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն ժամանակ, երբ դրա համար չկան քրեական օրենսգրքով նախատեսված հիմքեր: Ըստ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանի՝ *«ավելի ճիշտ կլիներ նշել, ոչ թե այն հանգամանքը, որ անձը ավարտված հանցագործության համար կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել այն ժամանակ, երբ դրա համար չկան քրեական օրենսգրքով նախատեսված հիմքեր, այլ որ ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը, փաստորեն, կարող է վրա հասնել այն օրենքով, որի*

¹³ Дурманов Н. Д., Советский уголовный закон. издательство московского университета, Москва 1967, с. 261.

գործողության ժամանակ հանցագործությունը դեռևս ավարտված չէր»¹⁴:

Այնուամենայնիվ՝ ՀՀ քրեական օրենսգիրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:*

Փաստորեն օրենքը հանցանքը կատարելու ժամանակը կապում է բացառապես արարքը կատարելու պահի հետ: Իհարկե, ինչպես վերը նշվեց, այս մոտեցումը վիճելի է, սակայն այդ է օրենքը:

Հանցանք է համարվում ոչ միայն ավարտված հանցագործությունը, այլ նաև հանցափորձն ու հանցագործության նախապատրաստությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:*

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի՝ *«հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով»:*

Ինչպես երևում է վերը նշված նորմերի ձևակերպումներից՝ թե՛ հանցափորձի, և թե՛ հանցագործության նախապատրաստության դեպքում հանցանքը կատարելու ժամանակը՝ հոդվածներում նկարագրված արարքները կատարելու պահն է:

¹⁴ Առաքելյան Ս., Գաբրուզյան Ա. և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 49:

Քրեական իրավունքի գիտությունը տարբերակում է նաև տևող և շարունակվող հանցագործություններ:

Տևող է այն հանցագործությունը, որի դեպքում հանրորեն վտանգավոր գործողությունը կամ անգործությունը իրականացվում է տևականորեն: Այդպիսի հանցագործությունները բնութագրվում են որոշակի հանցակազմի անընդհատ կատարմամբ¹⁵: Օրինակ, ապօրինի զենք կրելը, դասալքությունը, թմրամիջոցներ ապօրինի պահելը և այլն:

Տևող հանցագործությունների դեպքում հանցանքը համարվում է ավարտված հանցավորի բռնվելու կամ մեղայականող ներկայանալու պահից կամ այլ հանգամանքների ուժով:

Այս հարցի շուրջ ևս տեսակետները տարբերվում են: Որոշ գիտնականներ կարծում են, որ տևող հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել հանցակազմի կազմող առաջին գործողության կամ անգործության ժամանակը¹⁶, օրինակ՝ ապօրինի զենք կրելու դեպքում՝ զենքի կրումը սկսելու պահը:

Մյուս հեղինակների կարծիքով, տևող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել հանցավորի բռնվելու կամ մեղայականով ներկայանալու ժամանակը¹⁷: Քրեական իրավունքի գիտնականների մեծ մասը հենց այս մոտեցման կողմնակիցն է:

Շարունակվող է այն հանցագործությունը, որը բաղկացած է մեկից ավելի նույնական արարքներից, որոնց առանձին վերցրած թեկուզև հացակազմ կամ այլ իրավախախտում են, բայց ընդգրկված են միասնական դիտավորության մեջ և ունեն մեկ ընդհանուր նպա-

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 50:

¹⁶ **Блум М. И., Тилле А. А.**, Обратная сила закона. М., 1965. с. 48., Уголовное право России. Общая часть. Москва, 2007, с. 34.

¹⁷ **Галиакбаров Р. Р.**, Уголовное право. Общая часть. Краснодар, 1999, с. 53., **Առաքելյան Ս., Գաբուկյան Ա.** և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 50:

տակ, ուստի միասին դիտվում են մեկ հանցագործություն¹⁸: Օրինակ՝ հանցանք կատարողը ցանկանում է խոշոր չափերի գողություն կատարել, սակայն դա անում է ոչ թե միանգամից այլ մի քանի անգամ մանր կամ զգալի չափի գողություններ կատարելով:

Այս դեպքում ևս գիտնականներն ունեն տարբերակված մոտեցումներ: Մի մասը կարծում է, որ շարունակվող հանցագործության դեպքում հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել առաջին արարքը կատարելու ժամանակը¹⁹, իսկ գերիշխող կարծիքի համաձայն՝ շարունակվող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ է համարվում վերջին արարքը կատարելու ժամանակը:²⁰

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ կատարողից բացի հանցագործության մասնակիցներ են կազմակերպիչը դրդիչը և օժանդակողը: Վերջիններիս դեպքում հանցանքը կատարելու ժամանակ է համարվում նրանցից յուրաքանչյուրի կողմից իրենց արարքը կատարելու պահը²¹:

Այսինքն՝ հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվության ենթարկվի այն օրենքով, որի գործողության ժամանակ ինքն անձամբ կատարել է իր արարքը:

Այս առնչությամբ ևս իրավաբանական գրականության մեջ առկա է վերը նշվածին հակասող կարծիք: Մասնավորապես, նշվում է, որ հանցակիցների արարքը գոյություն չունի առանց կատարողի կողմից հանցանքի կատարման, հետևաբար ճիշտ կլինի մյուս հանցակիցների արարքի կատարման ժամանակը համարել հենց կատարողի՝ հանցանքը կատարելու պահը²²:

¹⁸ **Плотников А. И.**, Уголовное право России. Общая часть: учебник для бакалавров, Оренбург: ООО ИПК «Университет», 2016.

¹⁹ **Хаумова А. В.**, Комментарий к УК РФ, Москва., 1997, с. 55.

²⁰ **Անարեղյան Ս., Գաբրույան Ա.** և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2012 թ., էջ 51:

²¹ **Лебедев В. М.**, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. Ред. 8-е изд., перераб. И доп. – М.: Юрайт-Издат, 2008, с. 39.

²² **Дурманов Н. Д.**, Советский уголовный закон., издательство московского

Այնուամենայնիվ գիտնականների գերիշխող կարծիքն այն է, որ յուրաքանչյուրի արարքի կատարման ժամանակը հենց իր արարքի կատարման պահն է:

Անդրադառնալով ժամանակի ընթացքում օրենքի գործողության հիմնախնդրին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, մասնավորապես նշելով՝ «Քրեական օրենքի իմաստով՝ հանցանքը կատարելու պահ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքների վրա հասնելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ»:²³

2) Ժամանակի ընթացքում օրենքի գործողության բացառությունը՝ քրեական օրենքի հետադարձ ուժը

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածն ամրագրում է՝

«1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝

университета, Москва 1967, с. 262.

²³ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գրիգոր Վարդանյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍՂ/0020/01/17 որոշման 13-րդ կետ:

«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Այսպիսով, եթե ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության քրեական այն օրենքով, որի գործողության ժամանակ կատարել է հանցավոր արարքը, ապա վերև նշված վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքը, որպես ընդհանուր կանոնից բացառություն, արգելում է անձին ենթարկել պատասխանատվության այն օրենքով, որը գործել է իր արարքի կատարման պահին, եթե նոր օրենքը անձի վիճակը բարելավող է:

Ընդ որում, քրեական նոր օրենքին հետադարձ ուժ է տրվում հետևյալ դեպքերում.

1. Եթե նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը՝ ապաքրեականացում:

Քրեական նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե այդ օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որը նախկին օրենքով հանցագործություն էր (**լրիվ ապաքրեականացում**)²⁴:

²⁴ Առաքելյան Ս., Գաբուզյան Ա. և այլք, ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ., էջ 52:

Նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող նաև այն դեպքում, երբ արարքը չի դադարում հանցագործություն լինելուց և չի վերացվում, սակայն հանցակազմը ենթարկվում է այնպիսի փոփոխությունների, որ հանցավոր արարքների շրջանակը նեղանում է (**մասնակի ապաքրեականացում**):²⁵

Ընդ որում, արարքի հանցավորությունը կարող է վերացվել նաև քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների փոփոխության միջոցով, օրինակ՝ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը կարող է փոփոխվել, ինչի հետևանքով անձը կարող է դադարել քրեական պատասխանատվության սուբյեկտ լինելուց:

2. Եթե նոր օրենքը մեղմացնում է պատիժը:

Քրեական նոր օրենքը համարվում է պատիժը մեղմացնող, եթե ա) նորմի սանկցիայում նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն չափերը միաժամանակ իջեցվում են, բ) նվազագույն չափը մնում է նույնը, առավելագույնն իջեցվում է, գ) առավելագույնը թողնվում է նույնը, նվազագույնն իջեցվում է, դ) սանկցիայում նախատեսված պատժատեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ե) սանկցիայում նախատեսված պարտադիր լրացուցիչ պատժատեսակը վերացվում է կամ վերածվում է ֆակուլտատիվի, զ) նոր օրենքով նախատեսվում է երկընտրելի առավել մեղմ պատժատեսակ:

3. Եթե նոր օրենքն այլ կերպ բարելավում է անձի վիճակը:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն այն օրենքն է, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի և պայմանների հետ կապված՝

²⁵ Տե՛ս նույն տեղում:

առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար²⁶:

Օրինակ, եթե նոր օրենքը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ավելի կարճ ժամկետ է նախատեսում, ապա այն հանցանք կատարած անձի վիճակը բարելավող օրենք է և դրան պետք է հետադարձ ուժ տալ:

Անդրադառնալով անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժին՝ ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու անձի լեգիտիմ ակնկալիքների նկատմամբ հարգանքը, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է: Այդ սկզբունքը միաժամանակ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»:²⁷

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնալով վերոգրյալ սկզբունքին նշել է, որ «հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվել հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կի-

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 55:

²⁷ ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1326 որոշում, էջ 15:

րառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: “Nullum crimen, nulla poena sine lege” սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին»²⁸: «Քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով»²⁹:

III. Անփութում

Այսպիսով, պատմական հնագույն ժամանակների՝ միայն իշխողի կամքով անձանց դատապարտման դիկտատորական փուլին փոխարինելու եկավ անձի անհատականության գնահատման, օրենքի և իրավակարգի կարևորման ժամանակաշրջանը: Հենց դրա արդյունքում, 18-րդ դարից ի վեր օրենսդրական ամրագրումներ սկսեց ստանալ միայն օրենքի հիման վրա պատասխանատվության ենթարկվելու՝ “nullum crimen sine lege” սկզբունքը:

Դրա հետևանքն էր ժամանակի ընթացքում օրենքի գործողության սկզբունքը, որի ընդհանուր կանոնի համաձայն՝ հանցագործության յուրաքանչյուր մասնակից (կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող) ենթակա է քրեական պատասխանատվության այն օրենքով, որի գործողության ժամանակ ինքն անձամբ կատարել է հանցավոր արարքը՝ անկախ հետևանքները վրա հասնելու ժամանակից և անկախ մյուս հանցակիցների կատարած հանցավոր արարքների պահից: Սակայն, ինչպես տեսնում ենք, այս հարցերը միանշանակ չեն ընկալվում քրեական իրավունքի գիտնականների մոտեցումներում, և արդիական է դրանց խորը ուսումնասիրությունը:

²⁸ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հատոր 3, Երևան, 2016թ., էջ 11:

²⁹ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վաղարշակ Գալոյանի վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵՃԴ/0008/15/13 որոշման 15-րդ կետ:

Ժամանակի ընթացքում օրենքի գործողությունն ունի նաև բացառություն, այն է՝ անձի իրավական վիճակը վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը: Եթե անձի կողմից հանցավոր արարքը կատարելուց հետո քրեական օրենքը ենթարկվում է որևէ փոփոխության, որի արդյունքում անձի իրավական վիճակը բարելավվում է, ապա այն տարածվում է այդ անձի նկատմամբ, այսինքն՝ թեև անձի կողմից արարքը կատարելու ժամանակ գործող օրենքը ավելի խիստ է, սակայն նոր, առավել մեղմ օրենքի ուժի մեջ մտնելը չեզոքացնում է նշված խիստ օրենքի կիրառությունը: Վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը ևս իրավունքի զարգացման ընթացքում ենթարկվել է «փորձությունների» և այն նույնպես համապարփակ վերլուծության կարիք ունի:

ДЕЙСТВИЕ ЗАКОНА ВО ВРЕМЕНИ КАК ОСНОВОПОЛАГАЮЩИЙ ПРИНЦИП УГОЛОВНОГО ПРАВА

Айк Аветян

*Соискатель Кафедры Уголовного Права ЕГУ.
Прокурор Прокуратуры Административных
Округов Кентрон и Норк-Мараш*

В этой статье, прежде всего, как исторический обзор, обсуждается проблема того, что в античные времена людям осудили только по воле королей. В последствии с той суровой эпохой появилось принцип «без закона нет преступления и наказание».

Затем обсуждается конкретное выражение этого принципа; один из основополагающих уголовного права - действие закона во времени.

Во-первых, автор исследует общее правило этого принципа, выявляет множество элементов и вопросов, по которым у ученых есть разные и даже противоречивые мнения.

Во-вторых, автор объясняет исключение из указанного принципа - запрет обратной силы закона, ухудшающего правовое положение лица. Автор описывает значение и роль принципа и его исключения, показывая мысли ученых-юристов и судебных решений.

THE OPERATION OF LAW OVER TIME AS A FUNDAMENTAL PRINCIPLE OF CRIMINAL LAW

Hayk Avetyan

*PhD Applicant at YSU Chair of Criminal law,
Prosecutor of the Prosecution Office of Kentron and
Nork-Marash Administrative Districts*

This article, first of all, as a historical overview, discusses the problem that in antic times, people had been convicted only by will of kings. Because of that harsh era, the principle of “no crime and no punishment without law,” has been raised.

Then, it discusses the particular expression of that principle; one of the cornerstones of criminal law - the operation of law over time.

Firstly, the author explores general rule of that principle, reveals many elements and issues, over which legal scholars have different and even controversial opinions.

Secondly, the author explains the exception of mentioned principle – the prohibition of retrospective application of deteriorating law of a person’s legal status. The author prescribes the meaning and the role of the principle and its exception by showing legal scholars’ thoughts and judicial decisions.

Բանալի բառեր - ժամանակի ընթացքում օրենքի գործողություն, հետադարձ ուժ, որոշակիություն, իրավաչափ ակնկալիք:

Ключевые слова: действие закона во времени, обратная сила, определённость, правомерное ожидание.

Key words: the operation of law over time, retroactive effect, certainty, legitimate expectation.

**«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ,
ԴՐԱ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Նելլի Տեր-Թորոսյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող զույքի
բռնագանձման գործերով վարչության դատախազ,
գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ս. Վ. Առաքելյան*

«Պաշտոնական փաստաթուղթ» հասկացության բովանդակության բացահայտումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ օրեցօր ընդլայնվում է պաշտոնական փաստաթղթաշրջանառության ոլորտը, ստեղծվում են փաստաթղթերի նոր տեսակներ, օրինակ՝ էլեկտրոնային փաստաթղթերը, ՀՀ քրեական օրենսգրքով տվյալ հասկացությունը սահմանված չէ, ինչն իրավակիրառ պրակտիկայում տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս՝ խոչընդոտելով համապատասխան արարքների հստակ և միատեսակ որակմանը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարելու կարևոր չափանիշ է այն, որ տվյալ անձը պետք է օժտված լինի իրավական նշանակություն ունեցող՝ իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Հետևաբար, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ կարող է համարվել այն պետական ծառայողը, որը իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթղթեր տրամադրել քաղաքացիներին և դրանով իսկ կարգավորել նրանց վարքագիծը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի՝ պաշտոնեական կեղծիք է համարվում պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կա՛մ անձնական այլ դրդումներով, կա՛մ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը:

Նշված ձևակերպումից հետևում է, որ տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է առարկան՝ պաշտոնական փաստաթուղթը, այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է մանրամասն քննարկել այդ հասկացությունը:

«Պաշտոնական փաստաթուղթ» հասկացության էությունն ու բովանդակությունը բացահայտելու համար նախ և առաջ հարկ է անդրադառնալ «փաստաթուղթ» հասկացությանը: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ իրավական համակարգում մի շարք իրավական ակտեր անդրադառնում են ինչպես «փաստաթուղթ», այնպես էլ «պաշտոնական փաստաթուղթ» հասկացություններին: Մասնավորապես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:

Համաձայն «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ փաստաթուղթ է համարվում պահպանության և հանրային օգտագործման համար ժամանակի և տարածության մեջ փոխանցման ենթակա տեղեկություն պարունակող տեքստային, պատկերային, տեսաշարային և/կամ ձայնաշարային և այլ նյութական կրիչը: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով սահմանվում է, որ պաշտոնական փաստաթղթեր են օրենսդիր, գործադիր մարմինների ընդունած և պաշտոնապես հրա-

պարակված փաստաթղթերը, որոնք ունեն նորմատիվ կամ տեղեկատվական բնույթ:

«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» կոնվենցիայի (կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 14-ին) 1-ին հոդվածով սահմանվում է.

(...) Սույն Կոնվենցիայի նպատակների համար պաշտոնական փաստաթղթեր են համարվում՝

ա) պետության դատարանների կամ տրիբունալների կամ դրանց հետ կապված պաշտոնատար անձանց, ներառյալ դատախազի, դատարանի քարտուղարի կամ դատական կատարածուի կողմից ընդունված փաստաթղթերը,

բ) վարչական փաստաթղթերը,

գ) նոտարական փաստաթղթերը,

դ) մասնավոր կարգավիճակով գործող անձանց կողմից ստորագրված փաստաթղթերի վրա կատարված պաշտոնական հավաստագրերը, ինչպիսին են փաստաթղթի գրանցումը կամ որոշակի ամսաթվին դրա գոյության փաստն արձանագրող պաշտոնական հավաստագրերը, ինչպես նաև ստորագրությունների պաշտոնական և նոտարական հաստատումները:

Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիան չի կիրառվում՝

ա) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարված փաստաթղթերի նկատմամբ,

բ) առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերի նկատմամբ:

Ըստ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ պաշտոնական փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության դատարանների, վարչական և այլ մարմինների, այդ մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև նոտարների կողմից իրենց պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում թղթային կրիչի կամ էլեկտրոնային ձևաչափով կազմված և տրամադրված փաստաթղթերն են:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2002) 2 հանձնարարականը (Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է 2002 թ. փետրվարի 21-ին, փոխնախարարների 784-րդ հանդիպման ժամանակ) ուղղված անդամ պետություններին վերաբերում է պաշտոնական փաստաթղթերի մատչելիությանը, որի համաձայն՝ «պաշտոնական փաստաթղթեր» նշանակում է ամբողջ տեղեկատվությունը արձանագրված ցանկացած ձևով, կազմված կամ ստացված և պահվող պետական մարմինների կողմից և՛ կապված ցանկացած հանրային կամ վարչական գործառնության հետ՝ բացառությամբ նախապատրաստվող փաստաթղթերի (Եվրոպայի խորհուրդ, 2002)¹։ Ավելի ուշ՝ 2008 թվականին, Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան, որի 1-ին հոդվածն առավել լայն է մեկնաբանում «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը՝ սահմանելով այն հետևյալ կերպ՝ տեղեկատվություն, որն ամրագրված է ցանկացած ձևով և որը կազմվել կամ ստացվել և պահվում է պետական մարմինների կողմից²։ 2020 թվականի ապրիլի 9-ին ՀՀ Կառավարությունը թիվ 511-Ա որոշմամբ հավանություն է տվել վերոնշյալ կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը։

Միջազգային աղբյուրներում պաշտոնական փաստաթղթի բնութագրական հատկանիշներն են համարվում հետևյալները՝ 1. այն պետք է բովանդակի որոշակի տեղեկատվություն, 2. այդ տեղեկատվությունը պետք է որևէ ձևով ամրագրված լինի (գրավոր, թվային և այլն) և պետք է բովանդակի որոշակի տարրեր (ռեկվիզիտներ, կնիք, դրոշմ), 3. այդ տեղեկատվությունը պետք է ամրագրված լինի համապատասխան նյութական կրիչի վրա դրա հետագա պահպանման, օգտագործման կամ տարածման նպատակով, 4. փաստաթուղ-

¹ Տե՛ս https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-rec-2002-2-of-the-committee-of-ministers-to-member-states-on-access-to-official-documents։

² Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680084826>։

թը պետք է վավերացված, տրված կամ այլ կերպ տարածված լինի լիազորված անձի կողմից, 5. պետք է առաջացնի կամ ի վիճակի լինի առաջացնելու իրավական հետևանքներ կամ կարող է օգտագործվել որպես փաստաթղթային ապացույց իրավակիրառ պրակտիկայում³:

Գերմանական քրեական իրավութնում փաստաթուղթ հասկացությունը բնութագրում են 3 հատկանիշներով՝ պաշտոնական բնույթ ունենալը, այն կազմող անձից բխելը, փաստաթղթաշրջանառության մեջ ապացույցի գործառույթ կատարելը⁴:

Մասնագիտական գրականության մեջ, մինչև վերջերս, առավել տարածված էր այն կարծիքը, որ «...պաշտոնական փաստաթուղթը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների այն գրավոր ակտն է, որը հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ և օժտված է համապատասխան ռեկվիզիտներով (համապատասխան ձև, կնիք, դրոշմ, համապատասխան պետական ծառայողի ստորագրություն և այլն)»⁵:

Տեղեկատվության ամրագրման և պահպանման բնագավառում վերջին տարիներին տեղի ունեցող զարգացումները, սակայն, բավարար հիմքեր են տալիս պնդելու, որ պաշտոնական փաստաթղթի նման սահմանումը հնացած է: Մասնավորապես, ժամանակակից գրեթե բոլոր քրեագետները այն կարծիքին են, որ չի կարելի պաշտոնական փաստաթուղթը սահմանել միայն որպես գրավոր ակտ: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն ու իրադարձությունները ներկայումս հաճախ ամրագրվում են համակարգիչների, այլ տեխնիկական սարքերի և կրիչների վրա⁶:

³ Տե՛ս <https://www.abacademies.org/articles/Official-document-as-a-legal-act-essential-aspects-1544-0044-22-6-443.pdf>:

⁴ Տե՛ս Strafrechtsgesetz mit Nebengesetze, erläutert von Dr. Thomas Fischer. 62. Auflage. Verlag C. H. Beck oHG. München, 2015. S. 2128:

⁵ Տե՛ս **Дорохов В. Я.**, Понятие документа в советском праве // Правоведение, 1982, № 2, էջ 55:

⁶ Տե՛ս օրինակ՝ Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук,

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ փաստաթղթերը, կախված դրանց ծագման աղբյուրից, բաժանվում են երկու տեսակի՝ 1) պաշտոնական (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող) և 2) մասնավոր (ոչ պաշտոնական): Այլ կերպ ասած, փաստաթղթերի նշված տեսակները սահմանազատվում են ըստ դրանք կազմող և տրամադրող սուբյեկտների:

Այս առումով հարկ է նշել, որ փաստաթղթերի վերոհիշյալ տեսակների առանձնացումը կարևոր նշանակություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցագործության որակման համար: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ի բովանդակությունից հետևում է, որ պաշտոնական կեղծիքի առարկա է համարվում միայն պաշտոնատար անձից բխող պաշտոնական փաստաթուղթը: Հետևաբար, մասնավոր (ոչ պաշտոնատար) անձից բխող փաստաթղթերը (դիմումը, բացատրագիրը, ստացականը, նոտարական վավերացմամբ պայմանագիրը, կտակը և այլն) պաշտոնական համարվել, ուստի և՛ քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության առարկա դիտարկվել չեն կարող:

Միննույն ժամանակ, պաշտոնատար անձի կողմից իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ վավերացվող փաստաթղթերը, որոնք կարող են իրավական հետևանքներ առաջացնել (իրավունք վերապահել, պարտականություն առաջացնել կամ պատասխանատվությունից ազատել) պետք է պաշտոնական համարվեն: Այսպես, օրինակ՝ քննիչը, իր ստորագրությամբ վավերացնելով անձի կողմից տրված բացատրությունները, կազմում է պաշտոնական փաստաթուղթ, որը կարող է հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու համար: Հետևաբար, եթե

проф., заслуженного деятеля науки РФ **А. И. Коробеева**. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право, էջ 178-179, **Толлеубекова Б. X.** Компьютерная преступность: уголовно-правовые и процессуальные аспекты. Караганда, 1991, էջ 35-36:

քննիչը միտումնավոր ստորագրի կեղծ տեղեկություններ պարունակող բացատրությունները և դրա հիման վրա հետագայում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնի, նրա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ով՝ որպես պաշտոնական կեղծիք: Նույն կերպ պետք է որակվի, օրինակ՝ հարկային տեսուչի՝ իր մասնակցությամբ իրականացված ստուգումների ընթացքի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող զեկուցագիրը, որը կարող է հիմք հանդիսանալ նրա նկատմամբ ծառայական քննություն չիրականացնելու համար⁷:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ի իմաստով՝ որպես պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրամադրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ: Միևնույն ժամանակ, տվյալ հանցակազմով նախատեսված հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ առևտրային, հասարակական և այլ ոչ պետական կազմակերպությունների կողմից տրվող փաստաթղթերը, քանզի պաշտոնական կեղծիքը պետական ծառայության և տեղական ինքնակառավարման նորմալ գործունեության դեմ ուղղված հանցագործություն է:

Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Սամվել Գաբրիելյանի վերաբերյալ 2010 թ. հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 գործով որոշման 16-րդ կետում արձանագրվում է, որ «պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյու-

⁷ Տե՛ս <http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf>:

թական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ»⁸:

ՀՀ վճռաբեկ դատարանը Ս. Պապիկյանի և Ա. Սարգսյանի վերաբերյալ ԱԲԴ/0116/01/15 որոշմամբ արձանագրել է, որ փաստաթուղթը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի իմաստով պաշտոնական դիտարկվելու համար պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝

1) այն պետք է ունենա իրավաբանական նշանակություն, մասնավորապես՝ պետք է պարունակի կամ դրանով պետք է տրամադրվի իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկատվություն (...),

2) հաշվի առնելով քննարկվող հանցագործության օբյեկտը (այն ուղղված է պետական ծառայության բնականոն գործունեության դեմ), ինչպես նաև հանցագործության սուբյեկտը (սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին՝ կարող է լինել միայն պաշտոնատար անձը, ով համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշներին)՝ այն, որպես կանոն, պետք է տրված լինի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կողմից,

3) այն պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինի: Մասնավորապես՝ փաստաթուղթը՝

- պետք է գտնվի նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա,

- պետք է ունենա որոշակի վավերապայմաններ, օրինակ՝ կնիք, դրոշմ, ստորագրություն և այլն (...)⁹:

Այսպիսով, պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյու-

⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: 2010 թ. 2-րդ կիսամյակ - 2011 թ., Երևան, Ամարաս, 2012: Հ. 3, էջ 81-82:

⁹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=117520>:

թական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ: Ընդ որում, անկախ նրանից, թե ինչ տեսքով է հանդես գալիս պաշտոնական փաստաթուղթը, այն պետք է ունենա համապատասխան ռեկվիզիտներ (կնիք, դրոշմ, համապատասխան ձև և այլն) և հավաստվի պետական ծառայողի ստորագրությամբ կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

КОНЦЕПЦИЯ “ОФИЦИАЛЬНОГО ДОКУМЕНТА”, ТЕОРЕТИЧЕСКОЕ И ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

Нелли Тер-Торосян

*Соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ,
Прокурор по управлению по по взысканию имущества незаконного
происхождения Генеральной прокуратуры РА*

В научной статье анализируется понятие “официального документа” и указаны особенности содержания этого понятия в зарубежных и отечественных источниках.

THE NOTION OF “OFFICIAL DOCUMENT”, ITS THEORETICAL AND PRACTICAL SIGNIFICANCE

Nelly Ter-Torosyan

*Applicant at the Chair of Criminal Law,
YSU Faculty of Law Prosecutor of the department for confiscation of
property of illicit origin of the RA Prosecutor General's office,*

The notion of “official document” was analyzed in the scientific article. The peculiarities of the content of this concept in foreign and local sources were referred to.

Բանալի բառեր- փաստաթուղթ, պաշտոնական բնույթ, պաշտոնական կեղծիք, իրավական հետևանք:

Ключевые слова: документ, официальный характер, официальная подделка, правовое последствие.

Key words: document, official nature, official forgery, legal consequence.

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Նորայր Ավագյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
գիտական դեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան*

Ի տարբերություն քաղաքացի-քաղաքացի հարաբերության, պետություն-քաղաքացի հարաբերությունը չի բնութագրվում մասնավոր սուբյեկտների հավասար ազատությամբ, մասնավոր ինքնավարությամբ, այն որոշվում և կարգավորվում է օրենքներով՝ սահմանադրության հիման վրա¹: Արդյունքում առաջանում են իրավահարաբերություններ, որոնց որպես մասնակից հանդես է գալիս նաև պետությունը: Ընդ որում, եթե պետությունն այդ իրավահարաբերությունների միջոցով անձանց համար առաջացնում է փաստական կամ իրավական հետևանքներ, ապա պոզիտիվ մակարդակում այն համարվում է վարչարարություն, իսկ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվելու դեպքում նաև վարչական վարույթ:

Վարչական վարույթը վարչական իրավունքի հիմնարար հասկացություններից մեկն է, պետական գործունեության ձև, վարչարարության առանձին տեսակ: Այն իրավական կարգավորում ստացած ընթացակարգ է, որն ուղղված է պետության կողմից անձանց համար փաստական կամ իրավական հետևանքներ առաջացնելուն:

Վարչական վարույթը, լինելով վարչական իրավունքի գիտության առանցքներից մեկը, արդեն գրեթե երկու տասնամյակ հայ իրավագետների ակնհայտ հետաքրքրությանն է արժանացել: Սակայն, քիչ չեն նաև այնպիսի տեսական հիմնարար խնդիրներ և գիտագործնական կարևորություններ կայացնող հիմնահարցերը, որոնք ուսումնասիրության առարկա չեն դարձել:

¹ Տե՛ս Լուիսերհանդ Օ., Ռյուդիգեր Ռ., Ռայմերս Վ., Ուղեցույց Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունքի, Երևան, 2009թ., էջ 151:

Սույն հետազոտությամբ փորձելու ենք վերլուծել գիտագործնական հարթությունում բավականին խնդրահարույց համարվող առանձին տեսակի վարչական վարույթների ծագման և ձևավորման համար անհրաժեշտ պայման, նախադրյալ հանդիսացող հանգամանքները, վեր հանելու այն գործոնների ամբողջությունը, որոնք առանձին տեսակի վարչական վարույթ ներդնելու համար են: Կարծում ենք, որ նշված հիմնահարցի խորը իրավագիտական և միջոցառողական հետազոտությունները կարևոր նշանակություն կունենան առանձին տեսակի վարչական վարույթների իրավակիրառման և առանձին տեսակի վարչական վարույթներին վերաբերող իրավասահմանման գործընթացում: Խնդրո առարկայի հետազոտությունները կարող են տեսական հիմք հանդիսանալ նոր գիտական հետազոտությունների համար, ինչպես նաև օգտագործվել ուսումնասօժանողակ նպատակներով:

Պետության մեթոդային մոդելի ձևավորման արդյունքում օր-օրի ավելանում են հասարակական այն հարաբերությունները, որոնց մասնակցում է նաև հենց ինքը՝ կառավարող սուբյեկտը: Հասարակական այդ հարաբերությունները միաբնույթ և նույնաբովանդակ չեն, դրանցից որոշները ծագում են տնտեսական կարգին վերաբերող հարցերի շուրջ, մի մասը քաղաքական կամ սոցիալական հարցերին են վերաբերում, մյուսներն առողջապահական խնդիրներին և այլն:

Պետությունը, հետզհետե, մասնակցելով հասարակությանը վերաբերող այս կամ այն ոլորտներին՝ յուրաքանչյուր դեպքում իր առաջ դնում է ոլորտին հատուկ խնդիրներ՝ ստանձնելով կառավարող սուբյեկտին հատուկ կարգավիճակ: Իրավական համակարգում կառավարչական բնույթի հասարակական հարաբերություններն էականորեն ավելացել են հատկապես քսանմեկերորդ դարասկզբին՝ պայմանավորված ժամանակաշրջանի՝ պետության առաջ ի հայտ եկող նոր մարտահրավերներով: Արդյունքում, պետությունը կառավարողի կարգավիճակը ստանձնել է, գրեթե, բոլոր ոլորտներում²:

² Մանրամասն տե՛ս Richard B. Stewart, “Administrative law in the twenty-first

Նշվածը պայմանավորված է նաև քաղաքակիրթ հասարակության անդամների ստեղծարար բնույթով: Վերջիններս քայլ առ քայլ ի հայտ են բերում նոր հասարակական հարաբերություններ, որոնց կանոնակարգման պարտականությունը ստանձնած պետությունն իր իրավաստեղծ գործառույթի իրացման միջոցով պարտավոր է միջամտել: Այդ կերպ միջամտությունը կարող է դրսևորվել հասարակական հարաբերության սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ճանաչմամբ, դրանց պաշտպանության համար նախատեսված կառուցակարգերի սահմանմամբ և այլն: Ակնհայտ է, որ հասարակության զարգացման արդի պայմանները չեն կարող չազդել վարչական իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթի վրա, քանի որ դրանք տարերայնորեն չեն առաջանում և բնականաբար պահանջում են պետական կարգավորում³: Պետական մարմինների գործունեության ընթացակարգային հարաբերությունների իրավակարգավորումը համապատասխան իրավունքի ճյուղի կարևորագույն խնդիրներից է: Վերջինս հատկապես կարևորվում է վարչական իրավունքում, որից պահանջվում է պատշաճ կարգավորել գործադիր իշխանության բազմազան և բազմոլորտ ընթացակարգային հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Վարչարարության օրենք) սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման, ինչպես նաև վարչական ակտերի հարկադիր կատարման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբե-

century”, 78 N.Y.U. L. Rev. (2003), էջ 437-438, հղումը՝ <https://www.nyulawreview.org/wp-content/uploads/2018/08/NYULawReview-78-2-Stewart.pdf>:

³ Տե՛ս **Շոյան Հ. Ռ.**, Վարչական իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, Երևան, հեղ. հրատ., 2006, էջ 51:

րությունները: Վարչարարության օրենքի գործողությունը տարածվում է հանրային իրավունքի բնագավառի ցանկացած գործունեության վրա, այդ թվում՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության ու վարչական մարմինների այնպիսի գործողության և անգործության վրա, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ:

Վարչարարության օրենքը սահմանում է նաև, թե որոնք են վարչական մարմինները, ինչ հատկանիշներ ունի վարչական ակտը, ինչպիսի հատկանիշներով օժտված իրավական գործընթացն է համարվում վարչական վարույթ: Վարչարարության օրենքի պահանջները վերաբերում են կառավարչական բոլոր մարմիններին:

Այսպիսով, Վարչարարության օրենքի կառուցվածքային և բովանդակային որակների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այն ընդհանուր է, ինչպես նաև հիմունքային դրույթներ է ամրագրում, որոնք կողմնորոշիչ նշանակություն կարող են ունենալ առանձին տեսակի վարչական վարույթների համար⁴:

Վարչարարության օրենքում կիրառվող առանձին տեսակի վարչական վարույթ եզրույթի լեզվատրամաբանական վերլուծությունն առաջին հերթին թույլ է տալիս պնդել, որ խոսք է գնում վարչական վարույթի այլ տեսակի մասին, որն իր հատկություններով կարող է առանձնանալ այդ օրենքով սահմանված վարչական վարույթից: Հարկ ենք համարում նշել, որ առանձին հատկությունները կա-

⁴ Աջակցություն ղեկավարման ու կառավարման բարելավմանը (ՄԻԳՄԱ) նախաձեռնության կողմից 2012 թվականի “Good Administration through a Better System of Administrative Procedures” զեկույցում նշվում է, որ իրավական համակարգում վարչական վարույթը կարգավորող ընդհանուր իրավական ակտը կարելի է բնորոշել որպես «Կոնկրետ ոլորտի սահմանադրություն», որը կարգավորում է ամբողջ պետական կառավարման համարգում վարչական ակտերի նախապատրաստման, ընդունման և կատարման գործընթացը, ինչպես նաև վարչական մարմինների ու քաղաքացիների փոխհարաբերություններն այդ գործընթացում:

Հղումը՝ http://sigmaweb.org/publications/Comments_LawAdminProceduresKosovo_-_JN_Oct2012_Eng%20%20.pdf

րող են վերաբերել բացառապես ընթացակարգավորումներին, ինչը սակայն ընդգծված չէ պոզիտիվ մակարդակում: Ավելին, օրենսդրական մակարդակում առկա թերությունները, օրինակ՝ «իրավաչափ» հնարավորություն են տալիս օրենսդիր մարմինն իրավական համակարգում ներդնել մեկից ավելի «Վարչական ակտ» կամ «Վարչական վարույթ» եզրույթների սահմանումներ, ինչն անընդունելի է իրավական պետության իրավական համակարգում, քանի որ միասնական և հստակ չափանիշներով իրավական կարգավորումն ինքնին խրախուսելի է, քանզի այն ինչպես իրավունքի գերակայության, այնպես էլ իրավահավասարության, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի, իրավակիրառ գործունեության որոշակիության ու կանխատեսելիության արժեքավոր երաշխիքն է⁵:

Առանձին տեսակի վարչական վարույթները կարգավորող իրավական ակտերի համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ի տարբերություն Վարչարարության օրենքի՝ առանձին տեսակի վարչական վարույթները կարգավորող իրավական ակտերը կանխորոշված են այդ ակտով կարգավորվող իրավական գործընթացի բնույթով⁶:

Միայն իրեն հատուկ բնույթ ունեցող վարչաիրավական հարաբերությունները կարգավորող իրավանորմեր հանդիպում են բազմաթիվ իրավական ակտերում, որոնց խնդիրներն ու նպատակները պայմանավորված են տվյալ վարչական վարույթի բնույթով: Առանձին տեսակի վարչական վարույթները կարգավորող իրավական ակտերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ուրույն բնույթ ունեցող վարչաիրավական հարաբերություններն են,

⁵ Տե՛ս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (Դանիելյան Գ., Վարչական վարույթի առանձին տեսակների անհրաժեշտությունը պայմանավորող չափանիշները), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 71:

⁶ Հստ արդի հայերենի բացատրական բառարանի «բնույթ» նշանակում է՝ 1. Հատկություն, առանձնահատկություն: 2. Էություն, բնորոշ հատկանիշ, որակ: Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976թ., էջ 198:

որ պոզիտիվ մակարդակում ստացել են վարչական վարույթի (ընթացակարգի) իրավակարգավորումների կամ դրա առանձին ինստիտուտների որոշակի առանձնահատկություններ:

Յուրաքանչյուր առանձին տեսակի վարչական վարույթ իր ուրույն բնույթով պայմանավորված կանխորոշել է իր նկատմամբ կիրառման ենթակա ընթացակարգավորումների առանձնահատկությունները:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ այդ օրենքը կարգավորում է ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը: Կարող ենք արձանագրել, որ որպես առանձին տեսակի վարչական վարույթ գործ ունենք ստուգման գործընթացի հետ, որի նպատակներն են տնտեսավարող սուբյեկտի գործունեության ռոբոտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելը:

Հասկանալի է, որ այստեղ գործ ունենք որոշակի հատկությամբ, որակով, սեփական էությամբ օժտված վարչաիրավական հարաբերությունների և դրանով կանխորոշված կոնկրետ ընթացակարգի հետ: Նշված օրինակում մենք ունենք իրավական գործընթաց, որն օժտված է ֆինանսատնտեսական նեղ մասնագիտական որոշ հատկություններով: Միևնույն ժամանակ, նշված իրավական գործըն-

թացն օժտված է նաև որոշ քաղաքական հատկություններով, ինչը վեր հանելու համար անհրաժեշտ կլինի պարզապես վերլուծել «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնության անհրաժեշտությունը օրենսդիր մարմնում զեկուցած սուբյեկտների շրջանակը: Քննարկվող օրենսդրական ակտն ընդունվել է 2000 թվականի մայիսի 17-ին, որից հետո այդ իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարվել են 61 անգամ, որից 36-ի դեպքում որպես նախագծի անհրաժեշտությունը զեկուցող՝ օրենսդիր մարմնում հանդես է եկել ֆինանսատնտեսական ոլորտում քաղաքականությունը մշակող կամ այդ ոլորտում կառավարչական լիազորություններ իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձը:

Ի տարբերությունը վերը նշվածի՝ Վարչարարության օրենքում, որն ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, փոփոխություն կամ լրացում կատարվել է 15 անգամ, որից 11-ի դեպքում որպես նախագծի անհրաժեշտությունը զեկուցող՝ օրենսդիր մարմնում հանդես է եկել արդարադատության ոլորտում քաղաքականությունը մշակող կամ այդ ոլորտում կառավարչական լիազորություններ իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձը⁷:

Նշվածը միանշանակորեն թույլ է տալիս պնդել, որ քննարկվող առանձին տեսակի վարչական վարույթի բնույթն օժտված է ֆինանսական, տնտեսական և քաղաքական գործոններով, որոնք որպես նախադրյալ (հիմք, պայման) կանխորոշել են այդ վարույթը կարգավորող իրավական գործընթացի առանձնահատկությունները:

Մինչդեռ, Վարչարարության օրենքը կարգավորում է ընդհանուր բնույթի իրավական գործընթաց, այսինքն՝ միայն Վարչարարության օրենքի ընթացակարգավորումներին համապատասխան իրականացվող վարչական վարույթն ընդհանուր է բոլոր պետական

⁷ Տեղեկատվությունը ստացվել է parliament.am կայքէջից՝ 29.01.2021 թվականի դրությամբ:

մարմինների կամ բոլոր ոլորտներում այդպիսի գործընթացների համար, եթե առկա չէ գործընթացի համար առանձնահատկություններ նախատեսող իրավական ակտ: Կարելի է վարչական իրավունքի գիտությունում, հետագայում նաև պոզիտիվ մակարդակում, այն անվանել ընդհանուր իրավասության վարչական վարույթ, իսկ որոշակի գործոններով պայմանավորված առանձին տեսակի վարչական վարույթները՝ մասնագիտացված վարչական վարույթներ:

Իրավական համակարգում նման մասնագիտացված վարչական վարույթի ներդրումը հարկավոր է, որ հիմնավորված լինի դրա գոյությունը պայմանավորող հստակ գործոններով: Այդ գործոնները կլինեն այն նախադրյալները, որոնք պայմանավորում են առանձին տեսակի, այսինքն՝ մասնագիտացված վարչական վարույթի անհրաժեշտությունն ու գոյությունը: Այդպիսի նախադրյալներ կարող են լինել իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մասնագիտացված վարչական վարույթի բնույթն ընդգծող այլ գործոնները, որոնց առկայությունը՝ որպես անհրաժեշտ և բավարար պայման կկանխորոշի այդպիսի վարչական վարույթի գոյությունը:

Միննույն ժամանակ, առավել կարևորում ենք, որպեսզի այդ առանձնահատկությունները համապատասխանեն այն իրավական չափանիշներին, որոնք կապահովեն այդ մասնագիտացված իրավագոր գործընթացում անձանց պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը: Ավելին, մասնագիտացված վարչական վարույթի ներդրման նախադրյալների առակայությունը բավարար գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում գիտագործնական հարթությունում հստակ չափորոշիչների մշակումն ու կիրառումը: Նման չափորոշիչները կորոշեն, թե արդյոք այդ նախադրյալները բավարար են, որպեսզի իրավական համակարգում ներդրվի մասնագիտացված վարչական վարույթ, թե ոչ: Նշվածն անհրաժեշտ է թերի կամ անհարկի առանձին տեսակի վարչական վարույթի կարգավորումներ չսահմանելու համար ընդհանրապես և հատկապես այդ կերպ վար-

չարարությունն իր արսիդոլոգիական (արժեքանական) տեսանկյունից չարժեզրկելու համար⁸:

ПРЕДПОСЫЛКИ ОТДЕЛЬНОГО ВИДА АДМИНИСТРАТИВНЫХ ПРОЦЕДУР

Норайр Авагян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

В статье автор подробно исследовал основы факторов, необходимых для введения отдельных видов административных процедур, предложил совершенно новые подходы к определению административных процедур специальной и общей юрисдикции, которые могут быть полезны для создания теоретических основ, а также для проведения необходимых законодательных реформ.

THE PREREQUISITES FOR A CERTAIN TYPES OF ADMINISTRATIVE PROCEDURES

Norayr Avagyan

PhD student at YSU Chair of Constitutional Law

In the article, the author explored in detail the foundations of the factors necessary for the introduction of certain types of administrative procedures, proposed completely new approaches to determining the administrative procedures of special and general jurisdiction, which can be useful for creating theoretical foundations, as well as for carrying out the necessary legislative reforms.

⁸ Պատշաճ վարչարարության իրավունքի արժեքն այն է, որ այս համընդգրկուն իրավական ինստիտուտը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարության ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են մի կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց վարչարարության հետ առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից վարչարարության արդյունավետության ապահովմանը: Տե՛ս Հակոբյան Կ., «Պատշաճ վարչարարության իրավունքի արժեքը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու թիվ 2(2) 2018, Երևան, 2019թ., էջ 138-139:

Բանալի բառեր - առանձին տեսակի վարչական վարույթ, առանձին տեսակի վարչական վարույթի նախադրյալներ, ընդհանուր իրավասության վարչական վարույթ, մասնագիտացված վարչական վարույթ:

Ключевые слова: отдельный вид административной процедуры, предпосылки для отдельных видов административных процедур, административная процедура общей юрисдикции, специализированная административная процедура.

Key words: a separate type of administrative procedures, preconditions for certain types of administrative procedures, an administrative procedure of general jurisdiction, a specialized administrative procedure.

ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ ԱՐՏԱՄԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Անահիտ Գալստյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
գիտական ղեկավար՝ ի.գ.թ., դոց. Վ. Ն. Այվազյան*

Համաշխարհային քաղաքակրթությունը ձևավորել է վարչատարածքային կառավարման երկու հիմնական ռազմավարություն՝ պետական կառավարում և տեղական ինքնակառավարում:

Ժամանակակից արտասահմանյան երկրներում տեղական ինքնակառավարումը տեղական կառավարման ապակենտրոնացված կազմակերպության համակարգ է, որը ձևավորվել է երկարատև, հատկապես՝ հեղափոխության արդյունքում տեղի ունեցած զարգացման հետևանքով: Կենտրոնացված պետությունների ձևավորումը առաջ բերեց հանրային իշխանության տարանջատմանը՝ պետական և տեղական իշխանությունների:

Տեղական ինքնակառավարումն իր յուրահատուկ տեղն ունի պետական կառավարման համակարգում: Այն մի կողմից հանդես է գալիս որպես իշխանության առանձին օղակ, մյուս կողմից՝ որպես պետական կառավարման միասնական համակարգի բաղկացուցիչ:

Ժամանակակից ժողովրդավարական պետություններին բնորոշ է տեղական նշանակություն ունեցող խնդիրների լուծումը պետական իշխանության ապակենտրոնացման՝ համայնքներին այն իրավասությունների վերապահման միջոցով, որոնք առավել արդյունավետ կարող են իրականացվել տեղերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի ձևավորմամբ նման պետությունները բարձրացնում են իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հուսալիությունը, ամրապնդում կառավարման ժողովրդավարական հիմքերը, նպաստում հասարակության անդամների քաղաքական գիտակցության

ձևավորմանն ու զարգացմանը, ընդլայնում տնտեսության պետական կարգավորման հնարավորությունները, բարձրացնում հակաճգնաժամային միջոցառումների իրականացման հնարավորությունները:

Դա է պատճառը, որ այսօր տեղական ինքնակառավարման մարմինները գործում են զարգացած և զարգացող աշխարհի երկրների մեծամասնությունում:

Ժամանակակից արտասահմանյան երկրներում չկա մեկ միասնական մոտեցում տեղական ինքնակառավարման վերաբերյալ: Յուրաքանչյուր պետություն ունի սեփական պատմությունը, որը ձևավորվել է հիմքում ունենալով ժողովրդի սովորությունները, աշխարհագրական, տեղագրական դիրքը, պետական կառուցվածքը և բազմաթիվ այլ գործոններ:

Այս առումով տարբեր երկրներում տեղական կառավարման կազմակերպման նմանություններն ու տարբերությունները գնահատելու համար դրանք դիտարկվում են՝ հաշվի առնելով տեղական կառավարման մարմինների իրավական կարգավիճակը, տեղական կառավարման մարմինների կազմավորման ձևը, տեղական կառավարման մարմինների կարգավորմանը վերապահված խնդիրների շրջանակը, կենտրոնի (դաշնային պետություններում՝ առավելապես դաշնության սուբյեկտների) կողմից իրականացվող տեղական կառավարման մարմինների վերահսկողության միջոցները¹:

Վ. Ե. Չիրկինը գտնում է, որ գոյություն ունեն տեղական ինքնակառավարման երեք հիմնական համակարգեր, մասնավորապես՝ անգլոսաքսոնական (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և այլն), ռոմանագերմանական կամ մայրցամաքային (Ֆրանսիա,

¹ Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 18:

Իտալիա, Բելգիա և այլն) և իբերիական (Բապանիա, Պորտուգալիա, Բրազիլիա և այլն)²:

Ն. Ա. Եմելյանովն առանձնացնում է տեղական ինքնակառավարման անգլոսաքսոնական, մայրցամաքային կամ ֆրանսիական, խառը կամ հիբրիդային (Գերմանիա, Ավստրիա, Ճապոնիա), ինչպես նաև սովետական (Չինաստան, Կուբա, Կորեայի Հանրապետություն և այլն) մոդելներ³:

Ներկայումս առավել տարածվածը Լիմանսի դասակարգումն է, որի 3 համակարգերն են՝ երկատվածը (dual, կոչվում է նաև անգլոսաքսոնական), միաձույրը (fused, կոչվում է նաև մայրցամաքային կամ ֆրանսիական) և ճեղքված հիերարխիայինը (split-hierarchy կամ միջանկյալ)⁴:

Վերը նշված դասակարգումներից, ինչպես ցույց է տալիս արտասահմանյան փորձը, առանձնացվում են տեղական ինքնակառավարման կազմակերպման 3 դասական մոդելներ, մասնավորապես՝ Անգլոսաքսոնական (Մեծ Բրիտանիա, Կանադա, ԱՄՆ, Նոր Զելանդիա, Ավստրալիա և մի շարք այլ երկրներ), Ֆրանսիական կամ մայրցամաքային (Ֆրանսիա, Իտալիա, Շվեդիա և այլ երկրներ), Գերմանական (Գերմանիա, Ավստրիա, Ճապոնիա և այլ երկրներ):

Նշված մոդելների առանձնացումը պայմանավորված է մի շարք սկզբունքներով, որոնք ընկած են տեղական իշխանությունների փոխհարաբերությունների հիմքում ինչպես միմյանց, այնպես էլ պետական իշխանության մարմինների հետ:

² Подробнее по данному вопросу см.: Чиркин В.Е. Конституционное право зарубежных стран. М., Норма, 2010; Чиркин В.Е. Современные модели местного самоуправления / В.Е. Чиркин // Российский юридический журнал. – 1995. – №3

³ Подробнее по данному вопросу см.: Емельянов Н.А. Местное самоуправление: международный опыт. Тула, ГМРИП Левша, 1996; Емельянов Н.А. Становление местного самоуправления в России: конституционные нормы и реальность. Тула, Библиограф, 1997.

⁴ Տե՛ս **Խալափյան Բ.**, Հանրային կառավարման համակարգն արտասահմանյան երկրներում, Երևան, Տնտեսագետ, 2012, էջ 323:

Անդրադառնալով տեղական ինքնակառավարման համակարգերից յուրաքանչյուրի հիմնական բնորոշիչներին ու առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ ժամանակակից աշխարհում տեղական ինքնակառավարման ամենատարածված մոդելներից մեկը անգլոսաքսոնականն է, որը ձևավորվել է դասական մունիցիպալիզմի հայրենիքը համարվող Մեծ Բրիտանիայում, որտեղ դեռևս 11-րդ դարում համայնքները ձեռք բերեցին ինքնակառավարման լայն իրավասություններ ոչ միայն պետական որոշումները և տեղերում պետական կառավարումն իրականացնելու գործընթացներում, այլև ինքնուրույն որոշումներ կայացնելու, օրենքներ ընդունելու և տեղային բյուջե ունենալու առումներով⁵:

Տեղական իշխանության կազմակերպման համակարգը, որը բնորոշ է անգլոսաքսոնական մոդելին, ծագել է դեռևս 11-րդ դարում, Վիլիելմ Նվաճողի ժամանակներում, երբ ինքնակառավարվող համայնքներին տրվում էր լայն ինքնավարություն ոչ միայն թագավորական իշխանության հրամանների կատարման հարցում, այլև սեփական իրավաստեղծ գործունեության մեջ⁶:

Տեղական ինքնակառավարման անգլոսաքսոնական տիպին բնորոշ հիմնական առանձնահատկություն այն է, որ տեղերում բացակայում են կենտրոնական իշխանության լիազոր ներկայացուցիչները, որոնք հետևում են տեղական ինքնակառավարման մարմիններին:

Այս մոդելը ենթադրում ու նախատեսում է տեղական ինքնակառավարման համակարգի պետական կառավարումից բավականին անկախ և ինքնուրույն գործելու լայն հնարավորություններ:

⁵ St' u **Санацев И. Д.**, Сравнительный анализ моделей России, США и Западной Европы. Владивосток, ВГУЕС, 2005, էջ 54:

⁶ St' u **Попыт организации местного самоуправления в зарубежных странах: учебное пособие для магистров / А. С. Чуева, П. М. Курдюк, И. Н. Иваненко** – Краснодар, ФГБОУ ВПО «Кубанский государственный аграрный университет», 2013, էջ 46:

Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ բացակայում է վերահսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների առջև դրված խնդիրների լուծման նկատմամբ:

Առաջին հերթին, տեղական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նախարարությունների կողմից: Եթե տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց տրամադրված լիազորությունների շրջանակներում, ապա սեփական խնդիրների լուծման նկատմամբ վերահսկողությունը սահմանափակվում է միայն համապատասխան նախարարությունների հետ այդ հարցերի համաձայնեցմամբ:

Ինչպես նշում է Վ. Ա. Խոլոպովը, կենտրոնական իշխանությունը, բնականաբար, ձգտում է վերահսկել տեղական իշխանություններին և հետևել, որ նրանք դուրս չգան օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներից, չնայած որ նրանց տրամադրված է ինքնակառավարման իրավունք⁷:

Այսպիսի վերահսկողությունը դրսևորվում է օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումով, ինչպես նաև հաշվի առնելով և օգտագործելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինները ֆինանսական կախվածության մեջ են գտնվում կենտրոնական իշխանությունից:

Երկրորդ հերթին պետական վերահսկողությունը տեղական ինքնակառավարման նկատմամբ իրականացվում է դատական վերահսկողության ձևով:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ տեղական կառավարման անգլոսաքսոնական ձևի հիմնական առանձնահատկությունները հետևյալն են.

⁷ St' u Опыт организации местного самоуправления в зарубежных странах: учебное пособие для магистров / А. С. Чуева, П. М. Курджок, И. Н. Иваненко –Краснодар, ФГБОУ ВПО «Кубанский государственный аграрный университет» 2013, էջ 49:

1) տեղական կառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում օժտված են մեծ ինքնուրույնությամբ և նվազագույն չափով են վերահսկվում կենտրոնից,

2) տեղական կառավարման մարմիններում բացակայում են կենտրոնից նշանակված պաշտոնյաները, ինչպես նաև այդ մարմիններին խնամակալող կառավարության գործակալները,

3) անգլոսաքսոնական համակարգի համար հատկանշական է այն, որ գործում է լիազորությունների շրջանակի (*intra vires*) սկզբունքը, համաձայն որի՝ տեղական կառավարման մարմինները կարող են գործել միայն օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակում, հակառակ դեպքում դատարանը կարող է որոշել, որ տեղի է ունեցել լիազորությունների գերազանցում (*ultra vires*) և կատարված գործողությունները ճանաչել հակաիրավական (իրավաբանական ուժ չունեցող),⁸

4) ավելի ցածր օղակներում գտնվող տեղական մարմինների ուղղակի ենթակայության բացակայությունն ավելի բարձր օղակում գտնվողներից,

5) ինքնակառավարման համակարգն իր մեջ առաջին հերթին ներառում է ներկայացուցչական մարմիններ (խորհուրդներ), որոնք ընտրվում են բնակչության կողմից ուղղակի և այլընտրանքային ընտրությունների միջոցով,

6) տեղական նշանակության մի շարք խնդիրների լուծման հարցում կառավարությունից անկախ լինելը,

7) վարչական և դատական վերահսկողությունը տեղական մարմինների նկատմամբ:

Այսինքն՝ անգլոսաքսոնական մոդելում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները գործում են որպես պառլամենտի կողմից իրենց վերապահված լիազորությունների

⁸ St' u Опыт организации местного самоуправления в зарубежных странах: учебное пособие для магистров / А. С. Чуева, П. М. Курдюк, И. Н. Иваненко – Краснодар, ФГБОУ ВПО «Кубанский государственный аграрный университет» 2013, էջ 59:

շրջանակներում ինքնուրույն գործող կառույցներ, որոնք, փաստորեն, չունեն որևէ ուղղակի ենթակայություն պետական կառույցներին և, առաջին հերթին, պատասխանատու են համայնքի բնակիչներին առջև:

Այս մոդելի դասական օրինակ են Մեծ Բրիտանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Ընդ որում, Մեծ Բրիտանիան պառլամենտական միապետություն է: Նշված երկրում չկա գրված սահմանադրություն, այդ է պատճառը, որ այստեղ օրենսդրական ակտերը, որոնք ընդունվում են պառլամենտի կողմից և դատական նախադեպերն ունեն սահմանադրական նշանակություն, ուստի անգլոսաքսոնական համակարգի առանձնահատկություններից է այն, որ իշխանության տեղական մարմինները չունեն սահմանադրական կարգավիճակ, այլ ստեղծվում են սովորաբար օրենսդրական ակտով, որն ընդունվում է երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի կողմից⁹:

Այսօր գործող տեղական կառավարման երկատված համակարգը հասարակության էվոլյուցիոն զարգացման արդյունք է, որի ընթացքում բնակչության համար տեղական խնդիրներն ինքնուրույն տեղական մարմինների միջոցով լուծելը դարձել է կենսական անհրաժեշտություն:

Այն պետություններում, որտեղ չկան տեղական ինքնակառավարման ավանդույթներ, հնարավոր չէ միայն տեսականորեն բարձր ինքնուրույնություն և լայն լիազորություններ ունեցող ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների առկայություն ապահովող համապատասխան օրենք ընդունելով անմիջապես ստանալ լավ արդյունք: Ոչ բոլոր պետություններն են այսօր պատրաստ այս համակարգն ընդունելուն և ոչ էլ համապատասխան տեղական կոլեկտիվներն են պատրաստ դրսևորելու ինքնակազմակերպման այն աստիճանը, որն այսօր առկա է վերոհիշյալ անգլախոս երկրներում:

⁹ Տե՛ս **Խալափյան Բ.**, Հանրային կառավարման համակարգն արտասահմանյան երկրներում, Երևան, Տնտեսագետ, 2012, էջ 323:

Եվ պատահական չէ, որ բրիտանական նախկին գաղութ հանդիսացող զարգացած երկրներում, չնայած անգլոսաքսոնական իրավունքի ուժող ազդեցությանը, տեղական կառավարման վերոհիշյալ համակարգը տարածում չի գտել, այլ, ընդհակառակը, ստեղծվել է ավելի կենտրոնացված համակարգ, որտեղ տեղական կառավարման մարմինները կազմավորվում են՝ զուգակցելով ընտրությունները և կենտրոնի նշանակումները (Հնդկաստան, Մալագիա, Քենիա և այլն)¹⁰:

Տեղական կառավարման կազմակերպման մյուս ձևը միաձույլն է, որն անվանվում է նաև մայրցամաքային կամ ֆրանսիական, քանի որ այս համակարգի արմատները գտնվում են Ֆրանսիայում: Այն անգլոսաքսոնական մոդելի հիմնական դրույթներին հակադրվող մոդել է:

Միաձույլ համակարգը ներկայումս կիրառվում է տարբեր երկրներում՝ մայրցամաքային Եվրոպա, ֆրանսախոս Աֆրիկա, Մերձավոր Արևելք և այլն:

Մայրցամաքային համակարգի առանձնահատկությունն իր արմատներով սերում է ֆրանսիական պատմությունից, երբ թագավորական իշխանության գլխավոր հիմքը միապետի լիազոր ներկայացուցիչներն էին, այլ ոչ կոմունայի տեղական ինքնակառավարման մարմինները¹¹:

Ինչպես նշում է Վ. Վ. Մակլակոլը, ֆրանսիական տեղական կառավարումը, որը հիմք դրեց արևմտաեվրոպական երկրներում կառավարման մի ամբողջ համակարգի ձևավորման, միշտ բնու-

¹⁰ Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 22:

¹¹ Подробнее об этом см.: Конати Э. Реформа местного самоуправления в Великобритании и управление на уровне местных сообществ (Neighbourhood Management) / Эльза Конати // Практика муниципального управления. – 2011. – №12. [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.gkh.ru/journals/4186/63409/>

թագրվում էր հիերարխիայով և կենտրոնական իշխանության գերակայությամբ¹²:

Տրանսիայում ինքնակառավարման կազմակերպման հիմնական սկզբունքները, որոնք հիմնվել են դեռևս XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին, էապես տարբերվում են Մեծ Բրիտանիայի տեղական ինքնակառավարման կազմակերպման հիմքում ընկած սկզբունքներից:

Տրանսիայի համար մշտապես հատկանշական է եղել տեղական կառավարման և ինքնակառավարման կենտրոնացվածության բարձր աստիճանը: Դա դրսևորվեց տեղական մարմինների նկատմամբ կենտրոնական իշխանության վարչական վերահսկողության համակարգի զարգացման, կենտրոնի և տեղերի փոխհարաբերությունների բյուրոկրատական ենթակարգության մեջ¹³:

Գլխավոր առանձնահատկությունը, որով նշված մոդելն առանձնանում է տեղական կառավարման անգլոսաքսոնական համակարգից, տեղական ինքնակառավարման մարմինների և պետական իշխանության միջև փոխհարաբերությունների բնույթի մեջ է: Մայրցամաքային մոդելի հիմքում ընկած է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վարչական խնամակալությունն ու տեղերում կենտրոնական իշխանության գործակալների առկայությունը:

Մայրցամաքային մոդելում շեշտադրվում է պետության և տեղական ինքնակառավարման մարմինների անքակտելի ու ամուրկապը: Այս մոդելը որդեգրած երկրներում գործում է տեղական ինքնակառավարման դասական բրգաձև համակարգ, որի դեպքում ներքևում, այսինքն՝ տեղերում գործող իշխանությունները գտնվում են վերադաս մարմինների անմիջական ենթակայության ներքո¹⁴:

¹² Տե՛ս ՏՄ.: **Евдокимов В. Б., Старцев Я. Ю.**, Местные органы власти зарубежных стран: правовые аспекты. М.: Спарк, 2001. Էջ 43.

¹³ **Евдокимов В. Б., Старцев Я. Ю.**, Местное управление в зарубежных странах: правовые аспекты, М., Спарк, 2001г., с. 209.

¹⁴ Տե՛ս **Шустов В. Г.**, Основные модели местного самоуправления // <http://cyberleninka.ru/article/n/osnovnye-modeli-mestnogo-samoupravleniya>

1980-ական թվականներին Ֆրանսիայում տեղի ունացած բարեփոխումների արդյունքում տեղական ինքնակառավարման մայրցամաքային մոդելը ենթարկեց որոշակի զարգացումների, մասնավորապես՝ նշված մոդելին բնորոշ՝ ենթակայության մեխանիզմները փոխարինվեցին համագործակցության և համակարգման գործառույթներով, ինչը հանգեցրեց բնակչության լրացուցիչ ներգրավմանը տեղական հարցերի լուծմանը, դրանցով փորձ արվեց պետական իշխանության մարմինների և տեղական վարչատարածքային միավորների միջև ձևավորել գործընկերային հարաբերություններ, սակայն ինչպես նշում են մի շարք գիտնականներ, ֆրանսիական մոդելին բնորոշ բավականին բարձր մակարդակի վրա գտնվող կենտրոնացումը, 1980-ական թվականների սկզբին տեղի ունեցած երկարատև պատմական գործընթացների արդյունքում շարունակաբար իրականացվող վերափոխումներից և արմատական բարեփոխումներից հետո էլ շարունակվում է պահպանվել¹⁵:

Վերլուծելով մայրցամաքային մոդելի առանձնահատկությունները՝ կարող ենք նշել ֆրանսիական տեղական համակարգի երկու սկզբունքային առանձնահատկություն:

Առաջինը՝ ընտրված լինելով համայնքի խորհրդի կողմից՝ քաղաքապետը համայնքում ներկայացնում է տեղի բնակչության շահերը, բայց միևնույն ժամանակ նա կենտրոնական իշխանության ներկայացուցիչն է համայնքում: Այնպես որ, քաղաքապետի պաշտոնն իր բնույթով դուալիստական է: Նա համայնքում զբաղվում է ինչպես տեղային, այնպես էլ պետական նշանակություն ունեցող խնդիրների կարգավորմամբ:

Երկրորդ սկզբունքային առանձնահատկությունը տեղական կառավարման համակարգում կառավարության գործակալների առկայությունն է: Նրանք օժտված են ինչպես համապատասխան տե-

¹⁵ Stéu Опыт организации местного самоуправления в зарубежных странах: учебное пособие для магистров / А. С. Чуева, П. М. Курдюк, И. Н. Иваненко – Краснодар, ФГБОУ ВПО «Кубанский государственный аграрный университет», 2013, էջ 77-78:

դական խորհուրդների նկատմամբ վերահսկողական, այնպես էլ իրենց տարածքում համապետական գործառնություններով¹⁶:

Միաժամանակ, Ֆրանսիական մոդելում տեղական իշխանության մարմիններն ունեն սահմանադրական կարգավիճակ, ընդ որում, այս մոդելում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և գոյության գլխավոր իմաստն ավելի շատ քաղաքական է, քան վարչական, քանի որ տեղական ինքնակառավարմը մեծ մասամբ նույնացվում է տեղական հանրության, նրա ինքնագիտակցության հետ, այլ ոչ թե բուն իմաստով՝ ինքնակառավարման¹⁷:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ տեղական ինքնակառավարման մայրցամաքային մոդելին բնորոշ է տեղական ինքնակառավարման մակարդակում պետական իշխանության մարմինների ընտրովի և նշանակովի կադրերի գույգորդումը, կառավարման համակարգի որոշակի հիերարխիան, որտեղ տեղական ինքնակառավարումը ստորադասվում է վերադաս պետական կառավարմանը, տեղական ինքնակառավարման սահմանափակ անկախությունն ու ինքնուրույնությունը, տեղերում պետական հատուկ լիազոր ներկայացուցիչների առակայությունը, կենտրոնացման բարձր մակարդակը և պետության կողմից ուժեղ վերահսկողությունը տեղական մարմինների նկատմամբ:

Այնուամենայնիվ, ինչպես նշում է Չիրկինը, այդ ամենը չի խանգարում տեղական իշխանության մարմինների գործունեությանը, այլ հակառակը, ուղղորդում է տեղական իշխանության մարմիններին լուծելու ոչ միայն լոկալ, այլ նաև համապետական խնդիրներ, ինչն իր հերթին նպաստում է տեղական կառավարման և պետական մե-

¹⁶ Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 26:

¹⁷ **Խալափյան Բ.**, Հանրային կառավարման համակարգն արտասահմանյան երկրներում, Երևան, Տնտեսագետ, 2012, էջ 323:

խանիզմի մյուս բաղադրիչների համակարգմանը և բարձրացնում է գործադիր իշխանության արդյունավետությունը¹⁸:

Հարկ է նշել, որ պետական և տեղական իշխանությունների միջև փոխազդեցության մոդելը, որը դրվել է Ֆրանսիայում, էապես տարբերվում է այսօր Ֆրանսիայում գործող փոխազդեցության ձևից: Այսօրվա ֆրանսիական մոդելը կենտրոնացման և ապակենտրոնացման, պետական վերահսկողության և ազատ ինքնակառավարման ամբողջությունն է: Պետությունն այստեղ առավել հաճախ հանդես է գալիս ոչ թե որպես դատավոր, որը պատժում է տեղական իշխանություններին յուրաքանչյուր սխալի համար, այլ որպես գործընկեր, որը համագործակցում է քաղաքապետարանների հետ օրինականության և սահմանափակ վերահսկողության սկզբունքների հիման վրա:

Տեղական կառավարման կազմակերպման երրորդ ձևը գերմանականն է, որը հանդիսանում է ճեղքված հիերարխիայի համակարգ՝ որպես նախորդ երկու մոդելների միջանկյալ օղակ:

Ընդ որում, գերմանական մոդելը, ինչպես անգլոսաքսոնական ու մայրցամաքային մոդելները, ինքնուրույն մոդել է և համարվում է Եվրոպայի ամենաարդյունավետներից մեկը:

Գերմանիայում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման միջև փոխազդեցության խիստ միասնական կարգ առկա չէ, քանի որ տարբեր հոդերում այդ կարգը տարբեր է:

Հատկանշական է, որ Գերմանիայում գոյություն չունի ֆեդերալ օրենք տեղական ինքնակառավարման մասին, իսկ Գերմանիայի սահմանադրությամբ ամրագրված է հետևյալը. «Համայնքներին պետք է երաշխավորել իրավունք՝ կարգավորելու օրենքի շրջանակներում իրենց պատասխանատվության տակ գտնվող տեղական նշանակության բոլոր հարցերը»:

¹⁸ Տե՛ս **Чиркин В. Е.**, Сравнительное конституционное право. М.: «Манускрипт», 1996, էջ 687:

Ֆեդերալ մակարդակում փաստացի այս հոդվածով էլ սահմանափակվում է տեղական ինքնակառավարման սահմանադրական կարգավորումը, այդ է պատճառը, որ տեղական կառավարման բոլոր հարցերը վերաբերում են բացառապես հողերի իրավասությանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները երաշխավորվում են օրենսդրական ակտերով և այս տիպի ըստ էության մնացյալներից ամենաապակենտրոնացվածն է:

Այսպիսի տարբերակում տեղական ինքնակառավարումն ունի ուժեղ սահմանադրական կարգավիճակ, ինչպես նաև որոշումների ինքնուրույն կայացման իրավունք ու ֆինանսական համեմատաբար մեծ անկախություն¹⁹:

Գերմանական մոդելին բնորոշ գիծ է այն, որ իշխանության ֆեդերալ մարմինները փաստացի չեն մտնում փոխհարաբերությունների մեջ տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Պետության և քաղաքապետարանի միջև փոխհարաբերությունները դրսևորվում են ֆեդերալ հողերի և տեղական իշխանությունների փոխհարաբերությունների մեջ, ինչն էլ գերմանական մոդելը նմանեցնում է ԱՄՆ-ին, որի որոշ նահանգներում ևս նման կարգ է:

Գերմանիայում ձևավորված մոդելը նմանություն ունի նաև ֆրանսիական մոդելին, քանի որ երկու երկրներում էլ առկա է, այսպես կոչված, միջին օղակ, որը հետևում է քաղաքապետարանների գործունեության օրինականությանը, սակայն ի տարբերություն Ֆրանսիայի, որտեղ այդ գործառնություն իրականացնում են պետական իշխանության ներկայացուցիչները տեղերում, Գերմանիայում ստեղծվում են ֆեդերալ հողերի իշխանության մարմինների հատուկ տարածքային ստորաբաժանումներ:

Գերմանական մոդելի առանձնահատկությունն այն է, որ կենտրոնական իշխանությունը պահպանում է զգալի ազդեցություն տեղական կառավարման վերին աստիճանի վրա, նշանակում կառա-

¹⁹ **Խալափյան Բ.**, Հանրային կառավարման համակարգն արտասահմանյան երկրներում, Երևան, Տնտեսագետ, 2012, էջ 324:

վարչին, որը վերջինիս գործադիր մարմինն է, բայց դրա հետ մեկտեղ տեղական իշխանության ստորին օղակները՝ կառավարման համայնքային մարմինները, կազմավորվում են ընտրությունների միջոցով և ինչպես երկատված համակարգում՝ պահպանում են լայն ինքնուրույնություն իրենց լիազորությունների շրջանակներում:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխազդեցության համակարգը Գերմանիայում հիմնվում է պետության կողմից հսկողության ու վերահսկողության սկզբունքի վրա: Միաժամանակ, այդ վերահսկողությունը չի սահմանափակում տեղական ինքնակառավարումը: Հսկողության մարմինների գոյության փաստն ինքնին ստիպում է քաղաքապետարաններին գործել օրենքի շրջանակներում և քիչ սխալներ թույլ տալ: Պետության կողմից քաղաքապետարանների գործերին միջամտությունը տեղի է ունենում շատ հազվադեպ, իհարկե, եթե դա չի վերաբերում առանձին պետական լիազորությունների կատարմանը:

Գերմանիայում քաղաքապետարանները նույնիսկ իրավունք ունեն չընդունելու վերահսկողության պետական ակտերը և դիմելու դատարան²⁰:

Այսինքն՝ գերմանական մոդելի առանձնահատկությունն այն է, որ պետական խնդիրները լուծվում են հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից: Այլ կերպ ասած՝ պետությունն իր գործառույթների մի մասը փոխանցում է ինքնակառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարումը, լինելով անկախ ու անջատ, միևնույնն է՝ գործում է պետության շրջանակներում և հանդիսանում է որպես միջնորդ պետության և քաղաքացու, պետության և քաղաքացիական հասարակության միջև:

Գերմանիայում իշխանության տեղական մարմինները կազմավորվում են շրջաններում, քաղաքներում և համայնքներում: Ընդ

²⁰ См. у **Переходов В. А.**, Зарубежные модели взаимодействия органов государственной власти и местного самоуправления: сравнительный анализ/**В. А. Переходов**// Вестник ПАГС – 2012. –№32, էջ 25:

որում, շրջանների և քաղաքների կարգավիճակները հավասարեցված են²¹:

Այսպիսով, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող լուրջ և շարունակական բարեփոխումները հանգեցրին տեղական ինքնակառավարման գործող մոդելների մերձեցման, ինչի շնորհիվ ձևավորվեց տեղական ինքնակառավարման խառը մոդելը:

Համաշխարհային պրակտիկայում հանդիպում է նաև նկարագրված համակարգերից էապես տարբերվող կենտրոնացված տեղական կառավարման համակարգ: Այս դեպքում կառավարումն իրականացնում են կենտրոնի ներկայացուցիչները և տեղերում ընտրված ներկայացուցչական մարմիններ չկան:

Առաջին հայացքից կենտրոնացված համակարգը թվում է հզոր, բայց իրականում այն, որ տեղական կառավարման մարմինները պատասխանատու են միայն կենտրոնական իշխանության, այլ ոչ տեղի բնակչության առջև, բերում է նրան, որ այս համակարգում տեղական կառավարման մարմինների աշխատանքը դառնում է ոչ արդյունավետ: Այս պայմաններում հաճախ է գործում ինքնակարգավորման սկզբունքը: Բնակչությունը, ինքնակազմակերպվելով, իր ուժերով և միջոցներով կարողանում է լուծել իր խնդիրները²²:

Կենտրոնացված կառավարման յուրօրինակ ձև էր ԽՍՀՄ-ում և «սոցիալիզմի համաշխարհային սիստեմի» մի շարք այլ երկրներում գործող սովետների համակարգը: Այն որոշ առանձնահատկություններով ներկայումս էլ գործում է սոցիալիստական երկրներում՝ (Չինաստան, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Կուբա): Սոցիալիստական համակարգի երկրներում, ըստ էության, բացակայում էր իշխանության ոչ միայն օրենսդիր և գործադիր ճյուղերի տարանջատումը, այլև տարածքային բաշխումը: Խորհրդային պետությունն ուներ «ժո-

²¹ **Евдокимов В. Б., Старцев Я. Ю.**, Местное управление в зарубежных странах: правовые аспекты, М., Спарк, 2001г., с. 232.

²² Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 29-30:

դովրդախիշխանության» միասնական համակարգ, որն իրականացվում էր տարբեր մակարդակների սովետների միջոցով, որոնք դիտարկվում էին որպես պետական իշխանության մարմիններ և նրանց գլխավոր խնդիրն իրենց տարածքներում կենտրոնական մարմինների որոշումները կյանքի կոչելն էր²³:

Գտնում ենք, որ կենտրոնացված տեղական կառավարման համակարգը մատուցվող ծառայությունների ընդգրկումով, որակով և արդյունավետությամբ զիջում է ներկայումս գործող ժողովրդավարական համակարգերին, որոնցում տարածքի բնակչությունն անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է տեղական կառավարման գործընթացին:

Թեև ԱՊՀ և նախկին սոցիալիստական մյուս երկրները կարող էին ընտրել տեղական կառավարման ցանկացած ժողովրդավարական համակարգ, սակայն հետսոցիալիստական պետություններում այս բնագավառում բարեփոխումներ իրականանացնելիս հաշվի են առնվել տեղական ինքնակառավարման պատրաստ լինելու տեսակետից հասարակության զարգացման աստիճանը, տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները և այս երկրները հիմնականում ընտրել են համեմատաբար կենտրոնացված համակարգ, որտեղ նկատվում է Գերմանիայի որոշ երկրամասերի օրենսդրության և տեղական կառավարման միաձույլ ձևի ազդեցությունը:

Ընդ որում, հետսոցիալիստական երկրները գտնվում են անցումային փուլում և բարեփոխումների գլխավոր ուղղություններից մեկը տեղական ինքնակառավարման կայացումն է:

Չնայած այս բնագավառում բավականին առաջնադասում կա, սակայն դեռ երկար ճանապարհ պետք է անցնել ինքնուրույն և ուժեղ ինքնակառավարման մարմիններ ունենալու համար:

Տեղական ինքնակառավարման այլ ձև է հանդիսանում, երբ քաղաքացիները միավորվում են ոչ բնակության վայրի սկզբունքով:

²³ Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 29-30:

Օրինակ՝ Հունգարիայում, ընդհանուր ընտրությունների ընթացքում, ընտրվում են նաև ազգային փոքրամասնությունների տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց խնդիրներն են փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, իրենց լեզվի դասավանդումը, մայրենի լեզվով նախադպրոցական հաստատությունների, ազգային մշակութային միջոցառումների կազմակերպումը²⁴:

Տեղական կառավարման նկարագրված ձևերով չի ավարտվում տեղական ինքնակառավարման համակարգերի բազմազանությունը:

Վերջին տասնակյանկների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող լուրջ ու շարունակական բարեփոխումները հանգեցրին տեղական ինքնակառավարման գործող մոդելների մերձեցման, ինչի շնորհիվ բազմաթիվ երկրներ ընտրել են նկարագրված համակարգերի միջանկյալ և խառը ձևերը:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխազդեցության նկարագրված բոլոր մոդելներն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերվող հատկանիշներ: Հիմնական չափանիշը, որով տարբերվում են այս երեք մոդելները, վերջիններիս և պետական կառավարման մարմինների միջև փոխազդեցության բնույթն է, ինչպես նաև տեղերում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարությունը:

Միաժամանակ, նշված մոդելների ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ դրանց միջև տարբերությունները չունեն սկզբունքային բնույթ, հատկապես 1980-ական թվականների բարեփոխումներից հետո՝ հաշվի առնելով, որ նշված մոդելների գործունեությունը հիմնված է միևնույն սկզբունքների վրա, որոնք բնորոշ են ժամանակակից դեմոկրատական քաղաքական համակարգեր ունեցող երկրներին, մասնավորապես՝ տեղական իշխանության համակարգի հիմքում ընկած են ներկայացուցչական մարմինները, որոնք

²⁴ Տե՛ս **Օրդյան Է. Ա.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 34:

ձևավորվում են բնակչության կողմից ազատ և այլընտրանքային ընտրությունների արդյունքում, հետևաբար՝ տեղական ինքնակառավարման բոլոր երեք հիմնական համակարգերը այսօրվա մեր պատկերացումներով ժողովրդավարական են:

Հետևաբար, որևէ մոդել որպես կատարյալ առանձնացնելն անհնար է, քանի որ այս կամ այն մոդելը միշտ արտահայտում է այս կամ այն պետության ազգային, տարածքային և քաղաքական առանձնահատկությունները, ինչպես նաև պետք է հաշվի առնել պատմական ավանդույթները, տեղի բնակիչների պահանջմունքները և նպաստել պետության և տեղական ինքնակառավարման մարմինների զարգացմանը:

Արտասահմանյան երկրներում ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք առաջ քաշել տեղական ինքնակառավարման առկա վիճակի և դրա հետագա զարգացման վերաբերյալ հետևյալ ընդհանուր դիտարկումները.

1. Տարածքային կառավարումն այլևս կեսնունակ չէ, քանի որ պետական կառավարումը ժամանակակից պետություններում առանց տեղական ինքնակառավարման անհնար է պատկերացնել:

2. Տեղական ինքնակառավարման կարգավորման առարկան չպետք է սահմանափակվի միայն լոկալ խնդիրների լուծմամբ և տեղական ինքնակառավարման իրականացման մշակույթի մեջ պետք է զարգանա տեղական ինքնակառավարման՝ որպես բավարար անկախությամբ օժտված իշխանության ինքնակառավարվող սուբյեկտի՝ պետական կառավարման մաս կազմելու գաղափարը:

3. Տեղական ինքնակառավարման դասական մոդելները որդեգրած երկրներում տեղական ինքնակառավարման զարգացման գործընթացը մշտապես ուղեկցվել է կենտրոնական կառավարման մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների համար լուծման ենթակա խնդիրների որոշակի շրջանակի սահմանմամբ և դրան համապատասխան՝ լիազորությունների փոխանց-

մամբ և այդ ամենի հիմքում դրվել է լոկալ հարցերի արդյունավետ լուծման սկզբունքը: Մինչդեռ, արդի ժամանակաշրջանում հաշվի առնելով ՏԻՄ-երի՝ բնակչությանն ամենամոտ գտնվելու հանգամանքն ու դրանով պայմանավորված՝ բնակչության պահանջմունքներն առավելապես բավարարելու օբյեկտիվ հնարավորությունները՝ նպատակահարմար կլինի օրենսդրական մակարդակով տեղական ինքնակառավարման մարմիններին ընձեռնել նաև նախաձեռնողականության իրավունք, ինչը կդրսևորվի բնակչության օբյեկտիվ պահանջմունքները պետական կառավարման համակարգում լսելի դարձնելու գործողություններով: Այս ամենի արդյունքում կամրապնդվի և կբարձրանա պետական կառավարում-տեղական ինքնակառավարում-բնակչություն փոխադարձ կապն ու վստահությունը, բնակչության և տեղական մարմինների միջև փոխհամագործակցությունը, կբարձրանա բնակչության սոցիալական ակտիվությունը, և բնակչությունը, որը ավելի շատ հանդես է գալիս որպես տեղական օգտագործող, սովոր դիմելու տեղական ինքնակառավարման մարմիններին, երբ որևէ իրավունք խախտվում է և հակված սպասելու, որ տեղական ինքնակառավարման մարմինները կընդունեն կյանքի համար կարևոր որոշումներ, միջոցներ կձեռնարկի ազդելու նշված գործընթացի վրա:

МОДЕЛИ ОРГАНИЗАЦИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

Анаит Галстян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

В рамках настоящей работы кратко описаны 3 основные модели организации местного самоуправления в зарубежных странах, их различия и сходства, преимущества и некоторые недостатки.

В результате изучения международного опыта в статье автором сформулированы и обоснованы некоторые замечания и общие наблюдения о современном состоянии местного самоуправления и его дальнейшем развитии.

Исходя из этого, в своей работе автор выдвинул приоритет разработки механизмов обеспечения дальнейшего развития местного самоуправления как неотъемлемой части государственного управления.

MODELS OF THE ORGANIZATION OF LOCAL SELF-GOVERNMENT IN FOREIGN COUNTRIES

Anahit Galstyan

PhD student at YSU Chair of Constitutional Law

This paper briefly outlines 3 main models of the organization of local self-government in foreign countries and describes their differences and similarities, advantages and some disadvantages.

As a result of studying international experience, the author formulates and marks some remarks and general observations about the current state of local self-government and its further development.

Based on this, the author marks the priority of developing mechanisms for ensuring the further development of local self-government as an integral part of public administration

Բանալի բառեր - տեղական ինքնակառավարման մոդել, օրենսդրական նախաձեռնողականություն, կենտրոնական կառավարում, պետական կառավարում:

Ключевые слова: модель местного самоуправления, законодательная инициатива, центральное правительство, государственное управление.

Key words: model of local self-government, legislative initiative, central government, public administration.

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վիկտորյա Հակոբջանյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
գլխավոր դեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Վ.Ն. Այվազյան*

Յուրաքանչյուր մարդու երջանիկ կյանքի անքակտելի հատվածն իր առողջությունն է, որն ունի պաշտպանության կարիք: Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է նման քաղաքականություն՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակվելով որպես սոցիալական պետություն: Ուստի մարդու առողջության պահպանման իրավունքն ամրագրված է հենց ՀՀ Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն): Հետաքրքրական է, որ Սահմանադրության մեջ օգտագործվող վերը նշված տերմինը՝ առողջության պահպանման իրավունքը, պարտականություն է սահմանում ոչ միայն պետության համար առողջության պահպանման բոլոր տարրերի ապահովման համար, այլ նաև հասարակության համար՝ հստակեցնելով, որ մեկի առողջության պահպանման իրավունքը համապատասխանում է մյուսի պարտականությանը պահպանել դիմացինի առողջությունը: Այդ մասին են վկայում թե՛ «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների ամրագրումը, թե՛ պատասխանատվության մի շարք միջոցների սահմանումը, ինչպիսին են օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված հետևյալ հանցակազմերը՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը (հոդված 123), վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը (հոդված 124) կամ նոր կորոնավիրուսային վարակով (2019n-CoV) վարակելը (հոդված 124.1):

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածն ամրագրում է առողջության պահպանման իրավունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը: Ցավոք, վերջին դրույթը դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել օրենսդիր մարմնի կողմից, որի արդյունքում ներպետական իրավական համակարգից բացակայում է անվճար բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգն ամրագրող օրենք:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածն ամրագրում է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

Առողջության պահպանման իրավունքի իրացումն արդյունավետ ապահովում իրականացվում է՝ համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, որն առավել արմատական փոփոխության է ենթարկվել 06.05.2020 թվականին:

Վերջինիս համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, կանխարգելման, իրավական, տնտեսական և ֆինանսական հարցերի, ինչպես նաև բժշկական արտադրատեսակների շրջանառության հետ կապված հարաբերությունները:

Բացի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքից, առողջապահության ոլորտում ծագած իրավահարաբերությունները կարգավորվում են նաև այլ իրավական ակտերով, ինչպիսիք են «Մարդու վերարտադրողական առողջության և

վերաքննարկողական իրավունքների մասին», «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության 04.03.2004 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշում և բազմաթիվ այլ իրավական ակտեր:

Ինչ վերաբերում է միջազգային իրավական ակտերին, ապա բազում միջազգային կազմակերպություններ սահմանել են մի շարք կարևոր դրույթներ, որոնք պարունակում են դրույթ առողջության պահպանման վերաբերյալ:

Մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր ամրագրում են առողջության պահպանման և առավելագույնս հասանելի իրավունքը:

Մասնագիտացված միջազգային կազմակերպությունների գործունեությունն էլ ավելի է շեշտադրում այն հանգամանքը, որը յուրաքանչյուր ոք ունի առողջապահության ծառայությունների առավել հասանելի մակարդակի օգտվելու իրավունքը: Գործունեության հիմնական նպատակներից է նաև պետություններին կոչ անել հետևել միջազգայնորեն ամրագրված ուղենիշներին և ամրագրել ու իրավական կառուցակարգեր սահմանել իր իրավասության շրջանակներում ապրող բնակչության համար առողջության առավելագույն պաշտպանության և պահպանման համար:¹

Կարևոր նշանակություն ունի նաև Պացիենտների իրավունքների մասին եվրոպական խարտիան, որը, չնայած իրավաբանորեն պարտադիր չէ, սակայն ամրագրում է պացիենտների առավել կարևոր իրավունքները, որոնք ողջամտորեն պետք է ամրագրվի նաև յուրաքանչյուր պետության կողմից:

Առողջության մատչելիության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը կայուն և ամբողջական իրավական համակար-

¹ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCCPR%2fGEC%2f4723&Lang=en

գի ստեղծումն է, որը գերծ պետք է լինի տարատեսակ հակասություններից և օրենսդրական բացերից:

Առողջապահության իրավական համակարգը այս տեսանկյունից փոքր-ինչ խոցելի է, քանի որ իր մեջ պարունակում է մի շարք օրենսդրական բացեր ու կոլիզիաներ:

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփութ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկու հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

Հարկ է նկատել, որ սույն հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության հատուկ սուբյեկտ հանդիսանում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը²: Այժմ անհրաժեշտ է հասկանալ, թե ով է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպարավական ձևից, սեփականության ձևից կա՛մ պետական, կա՛մ համայնքային հիմնարկը:

² ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, դասագիրք, Երևան, 2012 թ.:

Ստացվում է, որ քրեական պատասխանատվության հատուկ սուբյեկտ է կազմակերպությունը, այլ ոչ թե անհատը, ինչը գործող քրեական օրենսգրքի շրջանակներում անթույլատրելի է, քանի որ քրեական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում միայն օրենքով սահմանված տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձը: Այս դեպքում առավել տրամաբանական կլիներ, որ քրեական պատասխանատվության սուբյեկտ լիներ բուժաշխատողը, քանի որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Բուժաշխատողները պարտավոր են՝

1) Առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել պացիենտի շահերով,

2) Յուրաքանչյուր պացիենտի ցուցաբերել շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն,

... »:

Ստացվում է, սակայն, որ եթե բուժաշխատողը չկատարի կամ ոչ պատշաճ կատարի իր մասնագիտական պարտականությունները, ապա վերջինս, միևնույն է, ենթակա չի լինի քրեական պատասխանատվության:

Սույն հոդվածի հետ փոխկապակցված է ՀՀ քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում հիվանդին օգնություն ցույց չտալու համար: Կարծում եմ՝ այս դեպքում ևս այդքան էլ ճիշտ չէ «հիվանդ» եզրույթի կիրառությունը հետևյալ պատճառաբանությամբ:

Եթե բխեցնենք «հիվանդ» տերմինը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով ամրագրված «հիվանդություն» եզրույթից, ինչը ախտաբանական վիճակ է, որը բացասաբար է անդրադառնում որևէ օրգանի կամ ամբողջ օրգանիզմի կառուցվածքի կամ գործունեության վրա և պայմանավորված չէ անմիջական արտաքին վնասվածքով, ապա հիվանդը իր օրգանիզմի վրա

բացասաբար անդրադարձող ախտաբանական վիճակ ունեցող ֆիզիկական անձ է:

Սակայն ոչ բոլոր անձինք, որոնք դիմում են բժշկական օգնության, համարվում են հիվանդ կամ հիվանդություն ունեցող, քանի որ այդ մարդկանց թվում կարող են լինել նաև հղի կանայք կամ պարզապես ընդհանուր ստուգումների համար բժշկական հաստատություն այցելած անձինք, որոնք հիվանդություն ունեցող անձի կարգավիճակ չունեն: Վերոնշյալ անձանց բժշկական օգնություն չտրամադրելը ևս պետք է ենթակա լինի քրեական պատասխանատվության: Սակայն գործող իրավակարգավորումներից ստացվում է, որ օրինակ հղի կնոջը օգնություն ցույց չտալու համար քրեական պատասխանատվություն առկա չէ: «Հիվանդ» եզրույթի փոխարեն առաջարկվում է ներդնել «պացիենտ» եզրույթը, որը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանվում է որպես բժշկական օգնություն և սպասարկում ստացող կամ դրա համար դիմած անձ: Կարծում եմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի մեջ «հիվանդ» եզրույթի փոխարեն առավել ճշգրիտ կլինի կիրառել «պացիենտ» եզրույթը, որը թե՛ էթիկայի, թե՛ օրենսդրության տեսանկյունից առավել համապատասխան է:

Պացիենտների իրավունքների եվրոպական խարտիան սահմանում է պացիենտի 14 իրավունքները, որոնցից կարևոր են նաև պացիենտի ժամանակը հարգելու և բուժման անհատական մոտեցման իրավունքները: Պացիենտի ժամանակը հարգելու իրավունքի տակ հասկացվում է այն, որ յուրաքանչյուր անհատ իրավունքի ունի ստանալ անհրաժեշտ բուժումը սեղմ և նախօրոք որոշված ժամկետներում: Այդ իրավունքը գործում է բուժման յուրաքանչյուր փուլում³: Սույն իրավունքի նպատակն այն է, որ անիմաստ չվատնվի պացիենտի ժամանակը, նախ այն հիմնավորմամբ, որ դա կարող է բացասաբար ազդել առողջության վրա՝ զարգացնելով հիվանդությունը, երկ-

³ Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս. գործնական ուղեցույց, Երևան, Ասողիկ, 2010թ., էջ 204:

րորդ՝ պացիենտի առողջական վիճակի ստուգումն ու բարելավումն անհրաժեշտ է, որ վերջինս շուտափույթ վերադառնա իր կյանքի բնականոն ընթացքին, ուստի հետևյալ իրավունքի ամրագրումն օրենսդրությամբ բավականին կարևոր է: Հաջորդ իրավունքը բուժման անհատական մոտեցման իրավունքն է, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ ախտորոշիչ կամ բուժական ծառայություններ, որոնք առավելագույնս հարմարեցված են նրա անհատական կարիքներին:⁴ Սույն իրավունքը ևս ինքնանպատակ չէ, քանի որ ի ծնե յուրաքանչյուր անձի օրգանիզմն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնց համապատասխան էլ պետք է նշանակվի բուժում վերջինիս արդյունավետությունն ապահովելու նպատակով: Բուժաշխատողի խնդիրն է նախ, իդենտիֆիկացնել օրգանիզմի առանձնահատկությունները և բուժումն իրականացնել դրանց համապատասխան: Սույն իրավունքի ամրագրումն Օրենքով ևս անհրաժեշտ է:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքում բժշկական օգնությունը և սպասարկումը նկարագրված է որպես բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, պալիատիվ, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, **հարբժշկական և ոչ բուժական բնույթի ծառայությունների մատուցում**։

Հետաքրքրական է, որ հարբժշկական ծառայությունները սահմանված են որպես բժշկական օգնությանն ու սպասարկմանն օժանդակող ծառայություններ: Բացի այդ, վերջիններիս ցանկը պետք է սահմանված լինի ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Սակայն աղքատիկ սահմանումը և հարբժշկական ծառայությունների ցանկի բացակայությունը խոչընդոտում են բուժհաստատությունների կառավարման արդյունավետ իրականացմանը թե՛ ծառայությո-

⁴ Նույն տեղում, էջ 221:

յունների գների սահմանմանը, թե՛ էլեկտրոնային կարգով ծառայությունների ներմուծմանը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ավելի մանրամասն ներկայացնել և պատշաճ պատկերացում կազմել հարբժշկական ծառայությունների էության և տեսակների մասին: Այսպես, հարբժշկական ծառայությունները կազմում են սոցիալական ծառայությունների բաղկացուցիչ մասը, ուստի կարգավորվում են սոցիալական ծառայությունների չափանիշներին համապատասխան⁵: Հարբժշկական ծառայությունները գնահատվում են որպես այդպիսին այն դեպքում, երբ դրանք իրականացվում են ելնելով համապատասխան բժշկական ծառայությունից⁶:

Հարբժշկական ծառայությունների մեջ ներառված են՝

- Դեղորայք նշանակելը և/կամ ներարկումներ կատարելը
- Արյան կամ մեզի անալիզ իրականացնելը
- Վերքի խնամքը
- Կաթետրային ծառայությունը և ստամոքսի լվացումը (ostomy irrigation)

- Ցանկացած բուժում կամ բժշկական միջամտություն, որը պահանջում է ախտահանման (ստերիլ) գործընթացների կազմակերպում (Any treatments requiring sterile procedures)

- Հոգնան, բժշկական թվայնացված սարքավորումների կիրառումը, մոմիկների տեղադրումը (Enemas, digital stimulation, or the insertion of suppositories)

- Մանուկ մատակարարումը զոնդի միջոցով
- Ներծծումը (Suctioning)⁷

⁵ Social services standards service program no. 7: In-home supportive services, էջ 51 <https://ihssadvocate.com/wordpress/wp-content/uploads/MPPs.pdf>

⁶ California's Protection & Advocacy System 2019 էջ 67, https://www.disabilityrightsca.org/system/files/file-attachments/548210_0.pdf,

⁷ https://www.cdss.ca.gov/agedblinddisabled/res/factsheets/ihss_paramedical_services_color.pdf

- Շարժական վարժությունների կատարումը (ֆիզիոթերապիա)

- Բժշկական մերսումը

- Հոգեբանական ծառայությունները:

Սոցիալական ծառայությունների չափորոշիչների համաձայն՝ հարբժշկական ծառայություններն ունեն հետևյալ պայմանները՝

Ծառայությունները պետք է ունենան հետևյալ բնութագրիչ հատկությունները.

- Այնպիսի գործողություններ են, որոնք անձը սովորական պայմաններում կիրականացնել ինքնուրույն, եթե չլինել վերջինիս գործառության շահմանափակվածությունը:

- Գործողություններ են, որոնք պացիենտի ֆիզիկական և/կամ հոգեբանական վիճակի ուժով անհրաժեշտ են պացիենտի առողջության պահպանման համար:

- Գործողություններ են, որոնք ներառում են դեղորայքային կառավարում, ներարկում՝ միջմկանային/ներերակային կամ բժշկական որևէ սարքավորման տեղադրում մարդու մարմնի միջոցով, ստերիլ պրոցեդուրաներ պահանջող գործողություններ կամ այլ գործողություններ, որոնք պահանջում են առաջապահության ոլորտում գործունեություն իրականացնող և համապատասխան բժշկական մասնագիտական գիտելիքներ ունեցող բուժաշխատողի սթափ դատողություն:

- Ծառայությունների մատուցումն իրականացվում է հատուկ լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից հատուկ բժշկական մասնագիտական պատրաստվածություն ունեցող բուժաշխատողները: Պացիենտն ինքն է ընտրում լիցենզավորված բժշկական հաստատությունը: Պացիենտը կարող է ընտրել համապատասխան մասնագիտացման բուժաշխատողին, որը չի հանդիսանում բուն բժշկական օգնություն և սպասարկում մատուցող անձ, բայց այդ դեպքում կրելու է իր կողմից ընտրված բուժաշխատողի կողմից պահանջած հոնորարներ և այլ գումարների ռիսկը:

- Ծառայությունները մատուցվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների ղեկավարության ներքո:

- Բուժաշխատողը սոցիալական աշխատողին տեղյակ է պահում, թե կոնկրետ որ ծառայությունը պետք է մատուցվի և ինչքան ժամանակում:

- Բժշկական հաստատության ղեկավարությանը պետք է ուղարկվի բուժաշխատողի կողմից ստորագրված և թվագրված հարբժշկական ծառայությունների պատվերը: Պատվերը պետք է ներառի տեղեկացված համաձայնության մասին հայտարարություն, որում ասվում է, որ պացիենտը տեղեկացվել է այդպիսի ծառայություններ ստանալու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի մասին: Տեղեկացված համաձայնության մասին հայտարարությունը ստորագրվում և թվագրվում է պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից: Պատվերը և համաձայնությունը տրվում են բժշկական հաստատության կողմից մշակված կամ հաստատված ձևի վրա:

- Արտերկրում գործում է նաև հետևյալ կանոնը. եթե հարբժշկական ծառայությունները տրամադրվում են սոցիալական աշխատողների կողմից, ապա նախապես պետք է առկա լինի համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատության պատվերը:⁸

Սույն գրքույկի շրջանակներում նշվում է, որ հարբժշկական ծառայությունները կարող են իրականացնել թե՛ բուժաշխատողները, թե՛ սոցիալական աշխատողները, սակայն հարբժշկական անձնակազմը սահմանվում է հետևյալ կերպ: Հարբժշկական անձնակազմը կազմում են այն բուժաշխատողները, որոնք բժշկական ծառայություններ են մատուցում պացիենտներին բժշկի հսկողության ներքո: Այս տերմինն ընդհանուր առմամբ ներառում է բուժքույրերի, թերապևտների, տեխնիկական և բժշկական օժանդակ անձնակազմե-

⁸ Social services standards service program no. 7: In-Home Supportive Services, էջ 55, <file:///C:/Users/USER/Desktop/Orenqner/MPPs.pdf>

րի, որոնք ներգրավված են բժշկական օգնության և սպասարկման տրամադրման մեջ, բայց այն հաճախ կիրառվում է հատուկ բարձր պատրաստվածություն ունեցող անձանց կողմից, որոնք բժիշկների հետ կիսում են պացիենտի բժշկական խնամքի անմիջական պատասխանատվությունը: Այս կատեգորիան ներառում է պրակտիկ բուժքույրերի, բժշկի օգնականներին և շտապ բժշկական օգնության անձնակազմին: Այս կատեգորիայի բուժաշխատողները իրականացնում են սովորական ախտորոշիչ պրոցեդուրաներ, ինչպիսիք են արյան նմուշներ վերցնելը և բուժական պրոցեդուրաները, ինչպիսիք են ներարկումները կամ վերքերը խնամելը, ինչպես նաև ազատում են բժիշկներին առողջության ամենօրյա գնահատում իրականացնելուց և ամեն անգամ բժշկական պատմություններից օգտվելուց, այսինքն՝ կատարում են նաև տեխնիկական գործառույթներ⁹:

Հարբժշկական ծառայությունները մատուցվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջին բուժաշխատողների կողմից, այն է առողջապահության ոլորտում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք, որ ունեն միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ու որակավորում և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են մասնագիտական գործունեության և ՇՄԶ հավաստագրեր:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի: Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման վերաբերյալ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության ձևը սահմանում է լիազոր մարմինը:

⁹ <https://www.britannica.com/science/paramedical-personnel>

Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման մասին համաձայնության ձևի սահմանումը անչափ կարևոր է, քանի որ այն մի կողմից երաշխավորում է պացիենտի բժշկական գաղտնիք համարվող տվյալների պաշտպանվածությունը, իսկ մյուս կողմից երաշխավորում է բուժաշխատողների մասնագիտական գործունեությունը՝ զերծ պահելով վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկվելու ռիսկից:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն առաջին անգամ սահմանում է նաև պացիենտների պարտականությունները:

Այսպես, վերը նշված օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (պացիենտը) բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս պարտավոր է՝

1) բուժաշխատողին տրամադրել իր առողջության, իսկ օրենսդրությամբ սահմանված՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով հիվանդանալու դեպքում՝ իր հետ շփված անձանց, ինչպես նաև նախկինում ստացած բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ իրեն հայտնի ամբողջական տեղեկատվությունը,

2) պահպանել բուժաշխատողի սահմանած բուժման ռեժիմը,

3) հարգել այլ պացիենտների և բուժաշխատողների իրավունքները:

Սույն հոդվածի հետ կապված առկա է վերջինիս կիրառելիության հետ կապված հիմնախնդիր: Հարց է առաջանում, իսկ եթե պացիենտը որոշում է չփոխանցել բուժաշխատողին իր հիվանդությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն կամ չի տրամադրում այն անձանց տվյալները, ում հետ շփվել է, ապա ինչպես է տեղի ունենում վերջինիս պատասխանատվության ենթարկվելու գործընթացը: Սակայն այս պարագայում, ինչպես տեսնում ենք Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պարտականությունը պատասխանատվություն չի նախատեսում, իսկ նույն հոդվածի 3-րդ

մասով սահմանված պահանջը չկատարելը կարող է առաջացնել քաղաքացիաիրավական պատասխանատվություն ընդհանուր հիմունքներով:

Բացի այդ, Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պացիենտի պարտականությունը չկատարելը վտանգի առաջ է կանգնեցնում ոչ միայն պացիենտի առողջությունը և կյանքը, այլ նաև բուժաշխատողի մասնագիտական գործունեությունը, համբավը, ինչու չէ՝ նաև ազատությունը, քանի որ սխալ, կեղծ տեղեկատվություն հաղորդելու կամ ճիշտ ինֆորմացիա չհաղորդելու պարագայում բժիշկը կարող է նշանակել պացիենտի առողջական իրական կարգավիճակին չհամապատասխանող բուժման մեթոդ, որը կվնասի պացիենտին, իսկ բուժաշխատողի համար կառաջացնի քրեական պատասխանատվություն: Սույն պարտականության չկատարման միակ պատասխանատվությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վեներական հիվանդությամբ վարակվելու աղբյուրը և վարակի վտանգ առաջացնող հիվանդների հետ շփումը թաքցնելու զանցանքն է:

Նույն իրավիճակը կարող է ստեղծվել, եթե պացիենտը չպահպանի իր համար սահմանված բժշկական ռեժիմը, ուստի անհրաժեշտ է ավելի մանրամասն կանոնակարգել պացիենտի կողմից իր պարտականությունները չկատարելու համար սահմանված պատասխանատվությունը:

Կարծում ենք՝ պատասխանատվության միջոց կարելի է սահմանել վարչական պատասխանատվությունը՝ որպես տուգանքի նշանակում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ և քրեական օրենսգրքերով վարչաիրավական և քրեաիրավական պատասխանատվություն է սահմանված վեներական հիվանդությամբ տառապողների բժշկական զննումից և պրոֆիլակտիկ բուժումից խուսափելու, վեներական հիվանդությամբ վարակվելու աղբյուրը և վարակի վտանգ առաջացնող հիվանդների հետ շփումը թաքցնելու, սանի-

տարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնները և նորմաները (բացի սննդամթերքի անվտանգության ոլորտի և մթնոլորտային օդի պահպանության կանոններից և նորմաներից), հիգիենիկ նորմատիվները խախտելու վեներական հիվանդությամբ, ՄԻԱՎ վարակով կամ այլ սեռավարակով, նոր կորոնավիրուսային վարակով վարակելու համար, իսկ ինչ վերաբերում է ՀՀ Կառավարության 27.12.2001թվականի «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 1286-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկին, ապա վերջիններիս տարածման կամ բուժման պարտավորության վերաբերյալ պացիենտի պարտականություն սահմանված չէ, այնինչ հանրային առողջապահության տեսանկյունից անհրաժեշտ է վերջիններիս տարածման և բուժման նպատակով դիմելու պարտականություն սահմանել պացիենտի համար: Վերջինիս ձևակերպումը պետք է հետևյալը լինի.

«յուրաքանչյուր ոք (պացիենտը) բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս պարտավոր է...

(...)

4) օրենսդրությամբ սահմանված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններից որևէ մեկն ունենալու դեպքում մեկուսանալ (օդակաթիլային եղանակով փոխանցվող վարակիչ հիվանդությունների դեպքում), տեղեկացնել այդ մասին բժշկին և ստանալ բուժման կուրս:

Սույն պարտականության չկատարման դեպքում ևս պետք է վրա հասնի վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Հետաքրքրական է, որ Ամերիկյան բժշկական ասոցիացիան, մշակելով բժշկական էթիկայի կանոնագիրքը, ներառեց նաև պացիենտների պարտականությունները, որոնք բավականին մեծ թիվ են կազմում: Պացիենտների պարտականությունների ամրագրման նպատակը հետևյալն է: Հաջողված բժշկական օգնության տրամադրման համար պահանջվում է պացիենտի և բժշկի սերտ համագոր-

ծակցություն: Նրանց համագործակցությունը պահանջում է երկուստեք՝ թե՛ բուժաշխատողի, թե՛ պացիենտի ջանքերը բուժման գործընթացն իրականացնելու համար:

Ինքնավար և որոշում կայացնելու իրավասություն ունեցող պացիենտները վերահսկում են իրենց առողջության հետ կապված որոշումներ կայացնելու գործընթացը: Ինքնավարության և ինքնուրույն որոշում կայացնելու գործընթացը առաջացնում է մի շարք պարտականություններ պացիենտի համար:

Պացիենտները նպաստում են բուժաշխատողի հետ համագործակցությանը, երբ նրանք կատարում են իրենց վրա դրված հետևյալ պարտականությունները:

- Պացիենտներն իրենց բժիշկների հետ պետք է լինեն անկեղծ և բաց, հստակ արտահայտեն առողջական վիճակի հետ կապված իրենց անհանգստացնող խնդիրը:

- Տրամադրել հնարավորինս ամբողջական բժշկական պատմություն, ներառյալ տեղեկություններ տրամադրել անցյալ հիվանդությունների, դեղամիջոցների, հոսպիտալացման, հիվանդության ընտանեկան պատմության և ներկայիս առողջության հետ կապված այլ հարցերի մասին:

- Համագործակցել համաձայնեցված բուժման պլանների հետ: Քանի որ բուժման մեթոդին հավատարիմ մնալը հաճախ անհրաժեշտ է հասարակության և անհատական անվտանգության համար, պացիենտները պետք է բացահայտեն, թե արդյոք նրանք հետևել են համաձայնեցված ծրագրին, թե ոչ և նշեն, թե երբ են ցանկանում վերանայել ծրագիրը:

- Օգտվել ուսանող-բժիշկների և օրդինատորների բժշկական օգնությունից՝ հատուկ բժշկի վերահսկողության դեպքում:

- Կատարել անհրաժեշտ ֆինանսական պարտավորությունները բժշկական օգնության հետ կապված, իսկ ֆինանսական դժվարությունների առկայության մասին տեղյակ պահել իր բժշկին:

- Ընդունել, որ առողջ ապրելակերպը հաճախ կարող է կանխել կամ մեղմացնել հիվանդությունը և պատասխանատվություն ստանձնել հետևել կանխարգելիչ միջոցառումներին և որդեգրել առողջության բարելավման վարք:

- Ուշադիր լինել և գերծ մնալ այնպիսի վարքագծից, որն անհիմն կերպով վտանգի տակ է դնում այլոց առողջությունը: Նրանք պետք է իրազեկվեն, թե ինչ կարող են անել վարակիչ հիվանդության փոխանցումը կանխելու համար:

- Կլինիկական պայմաններում չխոչընդոտել բուժաշխատողի գործունեությանը:

- Դիտավորությամբ չնախաձեռնել և/կամ չմասնակցել բժշկական ոլորտում խարդախության իրականացմանը, իսկ վերջինիս ակնատես/իրազեկ լինելու դեպքում տեղյակ պահել բուժհաստատության ղեկավարությանը և իրավապահ մարմիններին:

- Բժիշկների կամ առողջապահական ոլորտի այլ աշխատողների կողմից ապօրինի կամ էթիկական վարքի մասին հաղորդեն համապատասխան բժշկական ընկերություններին, լիցենզավորող խորհուրդներին կամ իրավապահ մարմիններին¹⁰:

Չնայած վերը նշված պարտավորությունները սահմանված են էթիկայի կանոնադրքով և իրավաբանորեն պարտադիր չեն, սակայն ողջունելի կլինի դրանք օգտագործել որպես աղբյուր և ամրագրել նաև Օրենքով:

THE BASIC PROBLEMS OF REALIZATION OF THE RIGHT TO HEALTH IN THE REPUBLIC OF ARMENIA

Victoria Hakobjanyan

PhD student at YSU Chair of Constitutional Law

The right to health is one of the most important human rights, as its existence testifies to the effective realization of every person's right to a dignified life. Within the framework of this scientific work, not only the key legal act in the

¹⁰ Սմերիկյան բժշկական ասոցիացիայի «Բժշկական էթիկայի օրենսգիրք» կարծիք 1.1.4 <https://www.ama-assn.org/delivering-care/ethics/patient-responsibilities>

field of healthcare in the Republic of Armenia is analyzed, but also the healthcare system of the Republic of Armenia. This allows identifying the theoretical and practical issues that are an obstacle to the realization of the constitutional right of each person to his health. Suggestions for identifying and addressing such issues will help decision-makers to find the right direction when developing health policy.

ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА ЗДОРОВЬЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Виктория Акопджанян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

Право на здоровье является одним из важнейших прав человека, поскольку его существование свидетельствует об эффективной реализации права каждого человека на достойную жизнь. В рамках данной научной работы анализируется не только ключевой правовой акт в области здравоохранения Республики Армения, но и система здравоохранения Республики Армения. Это позволяет выявить теоретические и практические вопросы, препятствующие реализации конституционного права каждого человека на свое здоровье. Предложения по выявлению и решению таких проблем помогут лицам, принимающим решения, найти правильное направление при разработке политики в области здравоохранения.

Բանալի բառեր- առողջության իրավունք, առողջապահություն, ՀՀ Սահմանադրություն, բուժաշխատող, բժշկական ծառայություն, պացիենտ, բժշկական հաստատություն:

Key words: the right to health, healthcare, Constitution of RA, medical professional, medical service, patient, medical institution.

Ключевые слова: право на здоровье, здравоохранение, Конституция РА, медицинский работник, медицинское обслуживание, пациент, медицинское учреждение.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱՎԱԼԸ՝
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Քրիստինե Ալեքսանյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամփրիոնի ասպիրանտ,
գիտ. դեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան*

Մարդու իրավունքների սահմանափակումն ինքնանպատակ չէ, այն ևս կոչված է երաշխավորելու նույն այդ իրավունքների պաշտպանությունը: Այս առնչությամբ համարժեք նկատառում է շարադրել ռուս իրավագետ Ա. Բաժանովը. «Մարդու իրավունքների մասին ժամանակակից պատկերացումները բխում են նրանից, որ դրանք հավասարապես պատկանում են հասարակության բոլոր անդամներին, որոնք օգտվում են դրանցից հավասար հիմունքներով: Ուստի մարդու իրավունքների սահմանափակումը դրանց իրականացման անհրաժեշտ պայման է: Միայն միմյանց (փոխադարձ սահմանափակում ենթադրող) իրավունքների փոխադարձ ճանաչումն է հնարավորություն ընձեռում իրավահարաբերությունների մասնակիցներին ազատորեն իրացնելու իրենց իրավունքները»¹:

Քանի որ մարդու կողմից իր ազատության իրականացումը կարող է ազդել մյուսի ազատության վրա, «հասարակության մեջ պետք է գոյություն ունենա մեխանիզմ, որը թույլ կտա փոխադարձաբար սահմանափակելու սուբյեկտների ազատությունը՝ դրանցից մեկի կողմից չարաշահումներ թույլ չտալու նպատակով»²:

¹ См. у **Бажанов А. А.**, Общие и специальные основания ограничения прав человека как выражение юридически значимых частных и публичных интересов // Интересы в праве. Жидковские чтения = Interests in Law. Zhidkov's readings: Материалы Всероссийской научной конференции. Москва, 25–26 марта 2016 г. / Отв. ред. М.В. Немытина. М.: РУДН, 2017, էջ 279:

² См. у **Белый А. В.**, Понятие и значение ограничения прав и свобод человека и гражданина // Вестник Челябинского государственного университета. Серия:

Մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման անխուսափելիության պայմաններում առաջանում է պետության կամայական միջամտություններից այդ իրավունքների պաշտպանության երաշխիքներ նախատեսելու անհրաժեշտությունը: Նման երաշխիքի դեր կատարում է համաչափության սկզբունքը, որը զսպող գործիքի դեր է խաղում մարդու իրավունքներին ցանկացած միջամտության դեպքում: Այսպիսով, վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման համար անհրաժեշտ է, նախ, հաստատել վարչական մարմնի կողմից մարդու իրավունքների սահմանափակման փաստը:

Իրավունքների սահմանափակումները կարող են տարբեր բնույթ ունենալ: Մասնավորապես, դրանք կարող են արտահայտվել իրավունքների և ազատությունների ծավալի կամ բովանդակության նվազեցմամբ, դրանց իրականացման տարածքային կամ ժամանակային շրջանակների սահմանմամբ, թույլատրված վարքագծի տարբերակների կամ այն անձանց շրջանակի կրճատմամբ, որոնք կարող են օգտվել համապատասխան իրավունքից և այլն³:

Վարչական իրավունքի գիտության մեջ հիմնավորվում է իրավունքի սահմանափակումների երկու հարթություն՝ իրավաստեղծ և իրավակիրառ⁴, որոնց առկայությունը բնորոշ է իրավասահմանափակման ոչ միայն վարչական-իրավական, այլև իրավունքի այլ ոլորտներին:

Իրավագետ Ե. Ռասսուլովայի կարծիքով. «Ավանդական իմաստով իրավունքների սահմանափակումը բնութագրում է մարդու վի-

Право. 2009. № 7, էջ 31:

³ St' u օրինակ, **Маковецкая М. Г.**, Понятие правовых ограничений прав и свобод человека // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. 2012. № 6(1), էջ 236, Подмарев А.А. Ограничение прав и свобод человека и гражданина: определение конституционного понятия // Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. 2014. № 2, էջ 13:

⁴ St' u **Мельников В. А.**, Административно-правовое ограничение прав граждан и механизм его реализации органами внутренних дел: дис. ... докт. юрид. наук. 12.00.14. Краснодар, 2015, էջ 28:

ճակը հասարակության և պետության մեջ, բացահայտում է օրենքով և իրապես ապահովված անձի ազատության աստիճանը, որը կազմում է սահմանադրաիրավական կարգավիճակի իմաստը: Այդպիսի տեսանկյունից սահմանափակումը մարդու իրավունքների և ազատությունների իրացման օրենսդրությամբ ամրագրված սահմանն է, որն արտահայտվում է արգելքներով, միջամտություններով, պարտականություններով, սանկցիաներով, որոնց գոյությունը կանխորոշված է սահմանադրորեն ճանաչելի արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ, իսկ դրանց նշանակումն անձի, հասարակության և պետության շահերի անհրաժեշտ հավասարակշռության ապահովումն է»⁵: Իրավաբան գիտնականների շրջանում քաղաքացիների իրավունքների սահմանափակման բերված սահմանումը սկզբունքային առարկություններ և վեճեր չի առաջացնում և վերաբերում է իրավաստեղծ (օրենսդրական) հարթությանը:

Բ. Մ. Էբգենը, սահմանելով իրավունքների սահմանափակումները սահմանադրաիրավական իմաստով՝ որպես ՌԴ Սահմանադրությամբ թույլատրված և դաշնային օրենքով սահմանված մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակից *բացառումներ*, նշում է նաև այն, որ «... որպես հիմնական իրավունքների սահմանափակում կարող է դիտարկվել նաև հիմնական իրավունքների և ազատությունների նորմատիվային բովանդակությունը կազմող իրավագործությունների շրջանակից *հանելը*»⁶: Խոսելով մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակից նվազեցումների մասին՝ Բ. Մ. Էբգենը ճշտում է, որ այդ բացառությունները հենց իրավասությունների շրջանակից են, քանի որ պարտականությունների

⁵ St' u **Рассолова Е. III.**, Ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации: Конституционно-правовое исследование: дис. ... канд. юрид. наук. М., 2009, էջ 12:

⁶ St' u Круглый стол журнала «Государство и право». Принципы, пределы, основания ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву // Государство и право. 1998. № 7, էջ 24:

շրջանակից հանումը կհանգեցնի իրավունքների սահմանափակման հակառակ արդյունքին:

Ռուս իրավագետ Վ. Ի. Գոյմանը իրավունքի (ազատության) սահմանափակումը բնորոշում է, որպես. «... օրենքով նախատեսված հիմքերին համապատասխան և սահմանված կարգով իրականացվող դրա *ծավալի նվազեցում*»⁷: Մեկ այլ իրավագետ՝ Վ. Ա. Մելնիկովը, իրավունքների վարչաիրավական սահմանափակումը բնորոշում է հետևյալ կերպ. «Քաղաքացիների իրավունքների վարչաիրավական սահմանափակումը օրենսդրի կողմից քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակի սահմանումն է՝ քաղաքացու կողմից պետական կառավարման ոլորտում իր իրավունքների և ազատությունների իրացման սահմանները որոշելու միջոցով՝ քաղաքացու և հասարակության շահերի պատշաճ հավասարակշռությունն ապահովելու նպատակով (առաջին՝ իրավաստեղծման մակարդակ), ինչպես նաև քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակի *ծավալի մեջ մտնող իրավագորություններից իրավաչափ բացառումները*՝ դրա համար լիազորված պաշտոնատար անձի (մարմնի) կողմից պետական կառավարման ոլորտում որևէ սուբյեկտիվ իրավունքից քաղաքացուն ընդհանրապես կամ մասնակի (ըստ ժամանակի կամ ծավալի) զրկող կառավարման անհատական իրավական ակտ հրապարակելու միջոցով կամ այդ ակտով քաղաքացու վրա պետական կառավարման ոլորտում լրացուցիչ իրավական պարտականություններ իրավաչափ վերապահելու (նորմատիվ իրավական ակտերով սահմանված իր՝ արդեն իսկ ունեցած պարտականությունների նկատմամբ) կամ քաղաքացու նկատմամբ ֆիզիկական բնույթի վարչական հարկադրանքի միջոցների անմիջական կիրառման միջոցով (երկրորդ, իրավակիրառ հարթություն»⁸:

⁷ St' u Kруглый стол журнала «Государство и право». Принципы, пределы, основания ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву // Государство и право. 1998. № 7, էջ 26, 27:

⁸ St' u **Мельников В. А.**, Административно-правовое ограничение прав граждан и механизм его реализации органами внутренних дел: дис. ... докт. юрид. наук.

Ա. Բարաքը նշում է, որ իրավունքի սահմանափակումը տեղի է ունենում, երբ պետության գործողություններով մերժվում կամ խոչընդոտվում են իրավատիրոջ կողմից դրա *ամբողջ ծավալով* իրականացումը⁹:

Ա. Վադարշյանը հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը բնորոշում է հետևյալ կերպ. «... Սահմանադրությամբ ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի կամ ազատության *բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն* է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով»¹⁰:

Ամփոփելով մարդու իրավունքների սահմանափակման վերաբերյալ վերը նշված դիտարկումները՝ կարող ենք եզրակացնել, որ մարդու սահմանադրական իրավունքների վարչաիրավական սահմանափակումը մարդու սահմանադրական իրավունքների ծավալի նեղացումն է վարչական մարմնի կողմից օրենքով նախատեսված միջոցների կիրառման արդյունքում, երբ մարդը զրկվում է ամբողջ ծավալով իր սահմանադրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Վերոնշված բնորոշումից հետևում է, որ սահմանափակման փաստը հաստատելու համար անհրաժեշտ է, նախ, որոշել մարդու սահմանադրական իրավունքի ծավալը: Նախքան իրավունքի ծավալի խնդրին առավել մանրամասն անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ իրավագիտության աղբյուրներում այն նշելու համար օգտագործվում են տարբեր ձևակերպումներ՝ «իրավունքի ծավալ», «իրավունքի սահմաններ»,¹¹ «իրավունքի ընդգրկման

12.00.14. Краснодар, 2015, էջ 40-41:

⁹ Տե՛ս **Aharon Barak**, Proportionality: Constitutional Rights and their Limitations, Cambridge University Press, 2012, էջ 102:

¹⁰ Տե՛ս **Ա. Վադարշյան**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (հավակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն)| «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 3 (24), էջ 9, http://ysu.am/files/01A_Vagharshyan-1516337765-.pdf:

¹¹ Տե՛ս Круглый стол по теме Принципы, пределы, основания ограничения прав и

ուրտ»,¹² «իրավունքի գործողության ոլորտ»¹³ և այլն: Հնարավորությունը մեծապես խուսափելու նպատակով այս աշխատանքում կօգտագործենք «իրավունքի ծավալ» եզրույթը: Ընդ որում՝ գերազանցապես կանդրադառնանք վարչական իրավունքում իրավունքի ծավալի և դրա որոշման հիմնախնդիրների մասին:

Սահմանադրական իրավունքների ժամանակակից տեսությունը ևս սկզբունքային տարբերություն է դնում սահմանադրական իրավունքի ընդգրկման ոլորտի¹⁴ և դրա պաշտպանության ծավալի կամ իրականացման աստիճանի միջև¹⁵: Ըստ այդմ՝ սահմանադրական իրավունքի ընդգրկման ոլորտը կամ ծավալը մատնանշում է իրավունքի սահմանները և որոշում բովանդակությունը, իսկ արդեն պաշտպանության ծավալը որոշվում է իրավունքի իրականացման իրավական սահմանափակումներով:

Իրավունքի ծավալի առանձնացումը հստակ արտացոլված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով¹⁶. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»: Հոդված 10(1)-ը սահմանում է կարծիքների ար-

свобод человека по российскому законодательству и международному праву // Государство и право. 1998 N 7, էջ 24, 26, 27:

¹² Տե՛ս **Aharon Barak**, նշված աշխատ., էջ 19:

¹³ Տե՛ս **Gerards, J., & Senden, H.** (2009). The structure of fundamental rights and the European Court of Human Rights. *International Journal of Constitutional Law*, 7(4), 619–653, doi:10.1093/icon/mop028, էջ 620:

¹⁴ Տե՛ս **G. Van der Schyf**, *Limitation of Rights: A Study of the European Convention and the South African Bill of Rights* (Nijmegen, The Netherlands: Wolf Legal Publishers, 2005), էջ 11, **M. Cohen-Eliya and I. Porat**, “American Balancing and German Proportionality: The Historical Origins,” 8(2) *Int’l J. Const. L.* 263 (2010):

¹⁵ Տե՛ս **R. Alexy**, *A Theory of Constitutional Rights* (Julian Rivers trans., Oxford University Press, 2002 [1986]), էջ 196:

¹⁶ Տե՛ս http://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf:

տահայտման ազատության իրավունքի ծավալը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ նախադեպերում մեկնաբանել է այս իրավունքի ծավալը¹⁷: Սակայն, չնայած այդ իրավունքի կիրառման լայն ոլորտին, Կոնվենցիան բովանդակում է մի դրույթ, որը թույլ է տալիս սահմանափակել այդ ազատության *հրահանացումը*¹⁸: Այս առումով ուշագրավ է, որ ինչպես Կոնվենցիայում, այնպես էլ մարդու իրավունքներին վերաբերող այնպիսի հեղինակավոր իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,¹⁹ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը,²⁰ օգտագործվում են ոչ թե «իրավունքի սահմանափակում», այլ «իրավունքի իրականացման սահմանափակում» ձևակերպումը:

Իրավունքի ծավալի և դրա թույլատրելի սահմանափակումների տարբերակումը բխում է նաև արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների կամ բարձրագույն դատական ատյանների դատական պրակտիկայի վերլուծությունից: Այսպես, Գերմա-

¹⁷ St' u A Guide to the Interpretation and Meaning of Article 10 of the European Convention on Human Rights, <https://rm.coe.int/16806f5bb3>:

¹⁸ Կոնվենցիայի 10 (2) հոդվածը, որն իրենից ներկայացնում է հատուկ սահմանափակող վերապահում, սահմանում է այն հանգամանքները, որոնց դեպքում հիմնավորված է կարծիքների արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումը. «Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

¹⁹ St' u http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf, հոդված 29:

²⁰ St' u <https://www.echr.am/resources/echr//pdf/6212169069b2926e391ad6c7abdf87-49.pdf>, հոդված 21, 22:

նական հիմնական իրավունքների տեսության դոկտրինալ կառուցվածքում համաչափության վերլուծությունը գտնվում է հիմնական իրավունքի խախտման վերաբերյալ երեք փուլից կազմված ուսումնասիրության վերջին փուլի հիմքում: Առաջին փուլում դատարանը որոշում է հիմնական իրավունքի պաշտպանության շրջանակը («Schutzbereich»): Երկրորդ փուլը վերաբերում է այն հարցին, թե արդյոք կառավարության գործողությունները համարվում են հիմնական իրավունքի պահպանվող ոլորտի խախտում («Eingriff»): Երրորդ փուլում դատարանը քննում է այն հարցը, թե արդյոք հիմնական իրավունքի խախտումը արդարացված է («Rechtfertigung»): Արդար կլինի ասել, որ անհատական ազատություններին ոտնձգող գրեթե բոլոր կառավարական ակտերը դառնում են հիմնարար իրավունքների հարցեր և ենթակա են հիմնավորման²¹:

Սահմանադրական իրավունքների սահմանափակման խնդիրի քննարկման շրջանակներում վերը նշված տարբերակման առնչությամբ ևս կան տարբեր ձևակերպումներ: Այսպես, օրինակ, Ա. Բարաքն իր աշխատանքում վերոնշյալ երկատման համատեքստում «իրավունքի ընդգրկման ոլորտ» հասկացությանը զուգահեռ հավասարապես օգտագործում է «իրավունքի պաշտպանության ծավալ», «իրավունքի իրականացման աստիճան» հասկացությունները՝ վերջին երկուսի տակ հասկանալով իրավունքի հնարավոր սահմանափակումները²²: Մարդու իրավունքների եվոպական դատարանի դատական պրակտիկայի վերլուծության համատեքստում Ջ. Գերարդսը և Հ. Սենկեն նշում են. «Հիմնական իրավունքների բազմաթիվ դասական մեկնաբանություններում տարբերություն կա երկու տարբեր տարրերի միջև. մի կողմից՝ հիմնական իրավունքների գործողության ոլորտը որոշելու տարր (մեր կողմից նշված՝ իրավունքի ծավալ),

²¹ Տե՛ս **Mattias Kumm**, «The Idea of Socratic Contestation and the Right to Justification: The Point of Rights-Based Proportionality Review» (2010) 4 Law and Ethics of Human Rights, էջ 141, 144:

²² Տե՛ս **Aharon Barak**, նշված աշխատ., էջ 19-22:

և մյուս կողմից՝ արդարացման կամ սահմանափակման տարր»²³։ Բ. Ս. Էբգենան առաջարկում է տարանջատել «սուբյեկտիվ իրավունքի սահմաններ» և «սուբյեկտիվ իրավունքի սահմանափակում» հասկացությունները։ Ըստ նրա՝ ՌԴ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների սահմանների տակ անհրաժեշտ է հասկանալ անձի ազատության Սահմանադրությամբ ճանաչվող և պաշտպանվող սահմանները։ Իսկ հիմնական սահմանադրական իրավունքների սահմանափակման ներքո հասկացվում է մարդու և քաղաքացու կարգավիճակից ՌԴ Սահմանադրությամբ թույլատրվող բացառումները, հիմնական իրավունքի և ազատության նորմատիվ բովանդակության մեջ պարունակվող իրավագործությունների շրջանակից բացառումները, դրանց տիրապետողների սոցիալական, քաղաքական և այլ բարիքների նվազեցումը²⁴։

Սահմանափակվելով նշված օրինակներով ցանկանում ենք նշել, որ անկախ հեղինակների կողմից օգտագործվող ձևակերպումների տարբերություններից՝ ընդհանուրն այն է, որ սահմանադրական իրավունքի սահմանափակման հարցն անհնար է համակողմանի քննարկել, առանց նախապես այդ իրավունքի ծավալը որոշելու։ Այսպիսով, սահմանադրական իրավունքի ծավալի և դրա իրականացման կամ պաշտպանության աստիճանի միջև տարբերությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում սահմանադրական իրավունքների ընկալման մեջ։ Իրավական համակարգերի մեծ մասն այսօր չի համատեղում այս երկու փուլերը։ Նրանք օգտագործում են սահմանադրական իրավունքի և դրա համաչափ սահմանափակման երկաստիճան տարբերակումը, իրավունքի ծավալի և դրա պատշաճ իրականացման հարցի միջև տարբերակումը²⁵։

²³ Տե՛ս Gerards, J., & Senden, H., նշված աշխատ., էջ 620։

²⁴ Մանրամասն տե՛ս Круглый стол по теме Принципы, пределы, основания ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву // Государство и право. 1998 N 7, էջ 24։

²⁵ Տե՛ս U. Gardbaum, “Limiting Constitutional Rights,” 54 UCLA L. Rev. 789 (200)։

Թեև մարդու իրավունքների սահմանափակման հարցը քննելիս այդ իրավունքների ծավալը որոշելու անհրաժեշտության վերաբերյալ հիշատակված մոտեցումները վերաբերում էին սահմանադրական դատարանների կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկային, դրանք պետք է հավասարապես կիրառելի լինեն նաև վարչական մարմինների կողմից մարդու իրավունքների սահմանափակումների դեպքում: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ վարչական իրավունքում մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման հարցի քննարկումը պետք է անպայման սկսվի այդ իրավունքների ծավալի որոշմամբ:

Վարչական իրավունքում սահմանադրական իրավունքի ծավալի և դրա իրականացման սահմանափակման տարանջատումը մեծ նշանակություն ունի մի շարք պատճառներով: Նախ, դա ընդգծում է այն զգալի կշիռը, որը իրավական համակարգը վերապահում է անձի իրավունքին և վերջինիս պաշտպանությանը: Սահմանափակման հիմնավորման ապացուցման բեռը դրվում է վարչական մարմնի վրա: Այս տարբերակումը կարող է նաև նպաստել սահմանադրական իրավունքների վերաբերյալ հանրային ընկալումների ճիշտ ձևավորմանը և սահմանների հաստատմանը: Երկրորդ, այս տարբերակումը ճշտորեն սահմանում է իշխանության գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև երկխոսության չափանիշները: Հիմնական իրավունքների մասին գործերում իրավունքի ծավալի առանձնացման երրորդ փաստարկն այն է, որ այն ապահովում է ապացուցման բեռի արդար բաժանումը: Այսպես, առաջին փուլում հայցվորը պետք է ցույց տա իր իրավական շահագրգռվածության առկայությունը, այսինքն՝ հայցադիմումը առնչվում է հիմնական իրավունքի հետ: Երկրորդ փուլում արդեն վարչական մարմինը պետք է ապացուցի, որ միջամտությունը եղել է համաչափ: Վերջապես, այս տարբերությունը վերլուծական հիմք է՝ սահմանադրական իրավունքների գործողության ոլորտը նկարագրելու համար և ապահովում է վարչարարություն իրականացնելիս սահմանադրական

իրավունքների իրականացման սահմանափակման հիմնավորման համակարգված և թափանցիկ ընթացակարգը:

Իրավունքի ծավալի որոշումը կարող է ամեն անգամ բախվել վերլուծական դժվարությունների, երբ այդ իրավունքը սահմանող սահմանադրական դրույթը պարունակում է նաև ներքին փոփոխող տարր: Այս համատեքստում նշանակություն են ձեռք բերում հետևյալ հարցերը. արդյո՞ք այս տարրը պետք է դիտարկել որպես ներքին, հատուկ սահմանափակող դրույթ և արդյո՞ք համաչափության կանոնները պետք է կիրառվեն այս տարրի նկատմամբ: Վերցնենք, օրինակ, Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված հավաքների իրավունքը. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք»: Կարծում ենք, որ «խաղաղ և առանց զենքի» վերապահումը չի արտացոլում սահմանադրական իրավունքի սահմանափակումները, այլ առավելապես դրա ծավալի սահմանման չափանիշ է: Գտնում ենք, որ «խաղաղ և առանց զենքի» արտահայտությունը բովանդակող դրույթը սահմանում է սահմանադրական իրավունքի ծավալը, ոչ թե կանխորոշում է դրա սահմանափակումները: Հավաքի սահմանադրական իրավունքը հարաբերական իրավունք չէ, այն բնորոշող տեքստի պատճառով, որը հայտնվում է որպես իր ծավալը սահմանող դրույթի մի մասը: Կարծում ենք, որ այդպիսի բնորոշումները վերաբերում են միայն իրավունքի սահմանների և դրա պատշաճ ծավալի սահմանմանը: Դրանք չեն վերաբերում իրավունքի իրացման ձևերին կամ դրա պաշտպանության աստիճանին: Իրավաբանական գրականության մեջ նման ձևակերպումները անվանվում են «ներքին որակման դրույթներ»:²⁶ Հետևաբար, կարծում ենք, երբ վարչական մարմինը (օրինակ՝ ոստիկանությունը) գործ ունի զինված հավաքի հետ, խոսք չի կարող լինել հավաքների ազատու-

²⁶ Տե՛ս **S. Woolman and H. Botha**, “Limitations,” in S. Woolman, M. Bishop, and J. Brickhill (eds.), *Constitutional Law of South Africa*, 2nd edn. (Cape Town: Juta Law Publishers, looseleaf, 2002), էջ 30:

յան իրավունքի սահմանափակման մասին, ուստի նաև անխմաստ է խոսել այդ իրավունքի սահմանափակման համաչափության մասին: Մեր դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ներքին որակողը չի սահմանափակում սահմանադրական իրավունքը, այլ միայն ավելի նեղ է որոշում դրա ծավալը: Այս դեպքում սահմանափակման օբյեկտ կարող է լինել որևէ այլ սահմանադրական իրավունք, օրինակ՝ անձնական անձեռնմխելիության իրավունքը, որի սահմանափակումն արդեն, բնակաբանար, պետք է համապատասխանի վարչարարության համաչափության սկզբունքին:

Այս համատեքստում, կարծում ենք, խիստ անհրաժեշտ է միայնցից սահմանազատել «սահմանափակում» և «արգելում» եզրույթները: Արգելքը զուտ կեցադային իմաստով ևս սահմանափակման դրսևորում է, սակայն վերջինիս իրավական իմաստը բոլորովին այլ է: Թերևս, այս թյուրմեմբան արդյունքում է, որ Կառավարությունը, հայտարարելով կառավարման հատուկ ռեժիմներ՝ արտակարգ դրություն կամ ռազմական դրություն, հաճախ անհարկի նույնացնում է այս եզրույթները և սահմանափակելու փոխարեն իսպառ արգելում է որոշակի իրավունքներ և ազատություններ:

Նույն մոտեցումն ընդունելի ենք համարում նաև օրենքով նախատեսված իրավունքների դեպքում: Վ. Ի. Գոյմանի հիմնավորված մոտեցմամբ. «... իրավունքի ծավալի նեղացումից կամ դրա սահմանափակումից պետք է տարբերակել օրինաստեղծ պրակտիկայում կիրառվող թույլատրելի ազատության սահմանների ամրագրող իրավական եղանակները: Դրանք ներառում են վերապահումներ, նշումներ, արգելքներ, բացառություններ (օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 21, 26, 29, 34, 37 հոդվածներ)»²⁷: Այդպիսի վերապահումները, բացառությունները, հեղինակի կարծիքով, իրականացնում են իրավունքի սահմանների ամրագրումը: Նման դեպքերում տեղի է

²⁷ St' u Kруглый стол журнала «Государство и право». Принципы, пределы, основания ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву // Государство и право. 1998. № 7, էջ 26, 27:

ունենում միայն «դրա բովանդակության ճշգրտումը, սահմանների նշումը, որոնց հետ կապված է այդ իրավունքի գործողությունը»²⁸:

Խոսելով սահմանադրական իրավունքի ծավալի և իրականացման աստիճանի մասին՝ հարկ ենք համարում նշել, որ նման տարբերակումը վերաբերում է միայն հարաբերական իրավունքներին, որոնց դեպքում իրավունքի ծավալը չի համընկնում դրա իրականացման աստիճանին: Ժամանակակից սահմանադրական իրավունքը, թեև հազվադեպ, մասնակի պաշտպանության կանոնից մի քանի բացառություններ է արել՝ բացարձակ ճանաչելով մի շարք սահմանադրական իրավունքներ²⁹:

Նախքան սահմանափակման հարցի քննարկմանը անցնելը՝ սահմանադրական իրավունքի ծավալի առանձնացումը թույլ է տալիս եզրակացնել, որ վարչական միջոցի համաչափության վարչական կամ դատական վերանայումը պետք է իրականացվի երկու փուլով: Առաջին փուլում քննարկվում է այն հարցը, թե արդյոք միջոցը սահմանափակում է սահմանադրական իրավունքը: Դրա համար վարչական մարմինը կամ դատարանը պետք է մեկնաբանի սահմանադրական տեքստի համապատասխան հոդվածը: Սահմանադրական դրույթը մեկնաբանվում է սահմանադրական մեկնաբանման կանոններին համապատասխան: Առաջին փուլի վերջում վարչական մարմինը կամ դատավորը պետք է որոշի, թե արդյոք միջոցը սահմանափակում է սահմանադրական իրավունքը: Եթե պատասխանը «ոչ» է, քննությունն այսքանով ավարտվում է և անհրաժեշտություն չկա անցնել հաջորդ փուլին: Սակայն, եթե դատավորը որոշի, որ վարչական միջոցը սահմանափակում է սահմանադրական իրավունքը, քննարկումը պետք է շարունակվի հաջորդ՝ սահմանափակման համաչափության գնահատման փուլում: Ասվածից հետևում է, որ երկրորդ փուլին, այսինքն՝ սահմանափակման համա-

²⁸ Տե՛ս նույն տեղում:

²⁹ Բացարձակ սահմանադրական իրավունքների մասին տե՛ս **Alexy, R.** (2016). *The Absolute and the Relative Dimension of Constitutional Rights*. Oxford Journal of Legal Studies, gqw013. doi:10.1093/ojls/gqw013:

չափության գնահատմանն անցնելն ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես կմեկնաբանի և կորոշի վարչական մարմինը կամ դատարանը սահմանադրական իրավունքի ծավալը:

Սույն աշխատանքի շրջանակներում սահմանադրական իրավունքի ծավալի առանձնացման ուսումնասիրությունը պայմանավորված է մեր կողմից այն հանգամանքի շեշտադրմամբ և կարևորմամբ, որ վարչական մարմնի կողմից մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակելիս կամ դատարանի կողմից մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս համապատասխանաբար վարչական և դատական մարմինները, պետք է լայն մեկնաբանեն սահմանադրական իրավունքի ծավալը՝ դրանով իսկ մարդու իրավունքներին վարչական մարմնի ցանկացած միջամտություն համարելով սահմանափակում և հետևաբար դրա նկատմամբ կիրառելով համաչափության սկզբունքը: Միևնույն ժամանակ, իրավունքի ծավալը որոշելիս վարչական մարմինը կամ դատարանը բնականաբար պետք է առաջնորդվեն սահմանդրական տեքստի մեկնաբանման կանոններով: Պետք է նշել, որ այս մոտեցումը լայնորոն ընդունված է ներկայիս համեմատական սահմանադրական իրավունքում և պետք է ընունելի լինի նաև վարչական իրավունքում: Այս հարցի կարևորումն ու մանրամասն քննարկումը պայմանավորված է նրանով, որ մեր երկրում դատական պրակտիկայի զարգացումն ընթանում է հակառակ տրամաբանությամբ:

Վերը շարադրված եզրակացությունների համատեստում նպատակահարմար է քննարկել Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԴ/0243/05/15 և 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործերով մեկնաբանությունները: Վճռաբեկ դատարանի երկու որոշումներն էլ վերաբերել են այն հարցին, թե արդյո՞ք պետական մարմինը, որի տիրապետության տակ գտնվում է հայցվող տեղեկությունը՝ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ այդպիսի պաշտոններ զբաղեցնելուն հավակ-

նող անձանց վերաբերյալ, իրավունք ունի մերժելու դրա տրամադրումը՝ հիմք ընդունելով անձնական տեղեկության գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը:

Իր որոշման առաջին մասում Վճռաբեկ դատարանը, նախ, քննարկել է տեղեկատվության ազատության իրավունքը: Քննարկվող որոշումներում Վճռաբեկ դատարանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի վերլուծության մեջ հստակ կարելի է առանձնացնել այդ իրավունքի ծավալի որոշման և այդ իրավունքի սահմանափակման հիմնավորումների մեր կողմից քննարկված փուլերը: Մանրամասն վերլուծելով տեղեկատվության ազատության իրավունքի ծավալն ու իրականացման սահմանները՝ Վճռաբեկ դատարանը, նշված երկու գործով էլ, հղում կատարելով Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ ՍԴՌ-1374 որոշմանը, գտել է, որ պետական մարմինը «... ըստ էության, տեղեկություն ստանալու ազատության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջև առկա ենթադրական բաժանումը լուծել է նախապատվությունը տալով երկրորդին: Մինչդեռ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում խոսքը նույնպես վերաբերել է պետական պաշտոն զբաղեցնել հավակնելուն, որի ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Ընդ որում, խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության՝ որպես անձնական կյանքի տվյալներ այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանիությունը գնահատող որակներին»:

Այդպիսով, Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ, մերժելով հայցվող տեղեկատվության տրամադրումը, պետական մարմինները չեն ունեցել 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանա-

դրության 43-րդ հոդվածով պաշտպանության ենթակա համապատասխան օբյեկտ:

Դժվար չէ նկատել, որ քննարկվող երկու որոշումներում էլ Վճռաբեկ դատարանը նեղ է մեկնաբանել անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալը՝ հայցվող տեղեկությունները չհամարելով այդ իրավունքի ծավալի մեջ ընդգրկող, դրանով իսկ բացառել է այդ գործերով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հնարավորությունը և տրամաբանորեն չի քննարկել նաև այդ իրավունքի սահմանափակման համաչափության հարցը: Միննույն ժամանակ, դժվար չէ նկատել, որ Վճռաբեկ դատարանը այս գործերում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալը որոշելիս հաշվի է առել հանրային շահ համարվող հանգամանքները:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի 2017 թ. հունիսի 20-ի թիվ ՍԴՈ-1374 որոշմանը, ապա դրանում վերջինս ուղղակիորեն նշել է, որ «... դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը և հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող/ստացվող փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ»: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրական դատարանն այս որոշմամբ ուղղակիորեն չի նշել, որ նշված տեղեկատվությունը վերաբերում է մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը (ինչի մասին որոշման մեջ ուղղակի իրավական հարց է բարձրացրել), մեջբերված նախադասության մեջ օգտագործվող «ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով» ձևակերպումից ուղղակիորեն բխում է, որ Սահմանադրական դատարանը այդ տեղեկություններն ամեն դեպքում համարել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալի մեջ

ընդգրկվող՝ միևնույն ժամանակ իրավաչափ համարելով դրանց մատչելի լինելը համաչափության սկզբունքի հետևողական պահպանման պայմանով:

Այն, որ քննարկվող գործերով պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես, ինքնակենսագրությունը, պարունակում է կամ կարող է պարունակել անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով պաշտպանվող տեղեկություն, բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայից: Այսպես, ՄԻԵԴ-ը անձնական կյանքը համարել է հասկացություն, որը չի կարող սպառիչ սահմանմանվել³⁰ և կարող է «ընդգրկել ֆիզիկական և սոցիալական ինքնության բազմաթիվ ասպեկտներ»³¹: Ալկայան ընդդեմ Թուրքիայի գործով³² ՄԻԵԴ-ը անձի տան հասցեն համարել է անձնական տեղեկատվություն, որը հանդիսանում է անձնական կյանքի հարց և, որպես այդպիսին, օգտվում է հոդված 8-ի առնչությամբ տրված պաշտպանությունից: Ինչ վերաբերում է լուսանկարներին, ապա Լոպեզ Ռիբալդան և այլոք ընդդեմ Իսպանիայի գործով դատարանը հայտարարել է, որ մարդու կերպարը նրա անձի գլխավոր հատկանիշներից մեկն է, քանի որ այն բացահայտում է մարդու եզակի բնութագրերը և տարբերում է նրան իր նմաններից: Այսպիսով, իր նկարի պաշտպանության իրավունքը անձնական զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկն է³³:

Այս աշխատանքի շրջանակներում մեր կատարած եզրահանգումների լույսի ներքո գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը կարող էր քննարկվող գործերով հնարավորինս լայն մեկնաբանել անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ հաստատելով դրա

³⁰ Sté u **Niemietz v. Germany**, 16 December 1992, Series A no. 251B, § 29, Pretty v. the United Kingdom, no. 2346/02, ECHR 2002-III, § 61, Peck v. the United Kingdom, no. 44647/98, ECHR 2003-I, § 57:

³¹ Sté u **S. and Marper v. the United Kingdom** [GC], nos. 30562/04 and 30566/04, ECHR 2008, § 66:

³² Sté u **Alkaya v. Turkey**, no. 42811/06, 9 October 2012, § 30:

³³ Sté u **López Ribalda and Others v. Spain** [GC], nos. 1874/13 and 8567/13, 17 October 2019, § 87-91 և դրանում բերված հղումները:

սահմանափակման հնարավորությունը: Այս առումով տեղին է հիշատակել երեխայի անձնական տվյալների պաշտպանության հարցի քննարկման շրջանակներում Գ. Բ. Դանիելյանի հետևյալ դիրքորոշումը. «Վերլուծելով այս իրավունքի առնչությամբ տեսական դիրքորոշումների և օրենսդրության զարգացման միտումները՝ կարելի է փաստել, որ այդ իրավունքի պաշտպանության համատեքստում առանցքային նշանակություն է տրվում «անձնական տվյալ» եզրույթի *հնարավորինս լայն իմաստով մեկնաբանությանը*, մասնավորապես, այդ տվյալների ցանկի ընդլայնումը դիտարկվում է իբրև նշված իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիք»:³⁴ Ավելին, գտնում ենք, որ անձնական կյանքի անձեռնմխելիության կամ ցանկացած այլ իրավունքի ծավալը չի կարող նեղ մեկնաբանվել՝ այն պայմանավորելով հանրային շահ համարվող հանգամանքներով: Իրավական համակարգում, որտեղ համաչափության սկզբունքը ճանաչված է որպես վարչարարության հիմնարար սկզբունքներից մեկը, հանրային շահի հետ կապված նկատառումները կարող են քննարկվել միայն սահմանադրական իրավունքի սահմանափակման համաչափության, մասնավորապես, դրա պատշաճ նպատակի և չափավորության պահանջների և հիմնավորվածության գնահատման փուլում³⁵: Արդյունքում դատարանը հարցը պետք է լուծեր վարչարարության համաչափության սկզբունքի, մասնավորապես, դրա պատշաճ նպատակի և չափավորություն տարրերի հետևողական կիրառ-

³⁴ Տե՛ս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2(2) 2018), ԵՊՀ հրատ., 2019, էջ 111, http://ysu.am/files/9Gevorg_Danielyan.pdf:

³⁵ Տե՛ս նաև **C. Starck**, “Constitutional Definition and Protection of Rights and Freedoms,” in C. Starck (ed.), *Rights, Institutions and Impact of International Law According to the German Basic Law: The Contributions of the Federal Republic of Germany to the Second World Congress of the International Association of Constitutional Law* (Baden-Baden: Nomos Verlagsgesellschaft, 1987), էջ 19, 25, **G. Erasmus**, “Limitation and Suspension,” in D. Van Wyk, J. Dugard, B. Villiers, and D. Davis (eds.), *Rights and Constitutionalism: The New South African Legal Order* (Oxford University Press, 1994), էջ 629, 645:

ման միջոցով՝ հավասարակշռելով տեղեկատվության ազատության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության մրցակցող իրավունքները և լուծելով դրանց միջև բախումը՝ ելնելով հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետության ապահովան, դրանց նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության դերի բարձրացման կարևորությունից:

Ընդհանրացնելով վերոշարադրվածը՝ կարևոր ենք համարում առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

- մարդու սահմանադրական իրավունքների վարչաիրավական սահմանափակումը մարդու սահմանադրական իրավունքների ծավալի նեղացումն է վարչական մարմնի կողմից օրենքով նախատեսված միջոցների կիրառման արդյունքում, երբ մարդը զրկվում է ամբողջ ծավալով իր սահմանադրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից.

- վարչական իրավունքում մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման հարցի քննարկումը պետք է անպայմանորեն սկսվի այդ իրավունքների ծավալի որոշմամբ,

- վարչական մարմնի կողմից մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակելիս կամ դատարանի կողմից մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս համապատասխանաբար վարչական և դատական մարմինները, առաջնորդվելով սահմանադրության մեկնաբանման կանոններով, պետք է լայն մեկնաբանեն սահմանադրական իրավունքի ծավալը՝ դրանով իսկ մարդու իրավունքներին վարչական մարմնի ցանկացած միջամտություն համարելով սահմանափակում և հետևաբար դրա նկատմամբ կիրառելով համաչափության սկզբունքը:

Կարծում ենք, որ նշված եզրակացությունները ոչ միայն ընդգծում են յուրաքանչյուր դեպքում մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման հիմնավորման կարևորությունը, այլ

նաև նպաստում են վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման մշակույթի ձևավորմանը:

ОБЪЕМ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ АДМИНИСТРИРОВАНИЯ

Кристине Алексанян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

Статья посвящена обсуждению проблемы определения объема конституционных прав. В статье подчеркивается необходимость определения объема права при рассмотрении вопроса об ограничении этого конституционного права в административном праве, а также обосновывается ориентир, которым при определении объема права должны руководствоваться административный орган или суд.

THE SCOPE OF CONSTITUTIONAL RIGHT IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF PROPORTIONALITY OF ADMINISTRATION

Kristine Aleksanyan

PhD student at YSU Chair of Constitutional law

The article is devoted to the discussion of the problem of determining the scope of constitutional rights. The article emphasizes the need to determine the scope of right when considering the restriction of that constitutional right in administrative law, and also justifies the reference point that an administrative body or court should follow when determining the scope of the right.

Բանալի բառեր - սահմանադրական իրավունքի սահմանափակում, սահմանադրական իրավունքի իրականացում, վարչարարության համաչափության սկզբունք, իրավունքի ծավալ:

Ключевые слова: ограничение конституционного права, осуществление конституционного права, принцип соразмерности администрирования, объем права.

Key words: restriction of constitutional law, exercise of constitutional law, principle of proportionality of administration, scope of right.

**ՆԵՐՄԱՅՐՑԱՄԱՔԱՑԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ. ՍՈՎՈՐՈՒՑԹԻՑ
ԿՈՂԻՖԻԿԱՑՈՒՄ**

Արթուր Արուսյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
գլխ. դեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Վ.Վ. Քոչարյան*

Համաշխարհային օվկիանոսները և ծովերը զբաղեցնում են երկրագնդի մակերևույթի ավելի քան 70 տոկոսը, որոնք պատմականորեն կատարել են երկու կարևոր գործառնություն՝ ծառայել են որպես հաղորդակցման միջոց, ինչպես նաև հանդիսացել են որպես օգտակար հանածոների հսկայական աղբյուր:¹

Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս քառասունչորս անկախ պետությունների, ներմայրցամաքային է՝ չունի դեպի ծով անմիջական հասանելիություն, ինչը էականորեն նվազեցնում է նշված պետությունների տնտեսական զարգացման հնարավորությունները: Հարևան ափամերձ պետություններից տարանցման կախվածությունը, մաքսային վարչարարության բարդությունները և այլ խոչընդոտների առկայությունը անմիջական ազդեցություն են ունենում համաշխարհային շուկաներում ներմայրցամաքային պետությունների մրցունակության վրա, ինչ ով էլ պայմանավորվում է ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման անհրաժեշտությունը միջազգային իրավունքում:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման հիմնախնդրի հետ կապված միջազգային իրավունքի էվոլյուցիան պետությունների՝ միմյանցից տարբերվող վարքագծի, ինչ-

¹ Տե՛ս **Shaw, M. N.**, International Law, Cambridge: Cambridge University Press, էջ 553, 1997:

պէս նաև տեսական տարբեր հայեցակարգերի անմիջական հետևանք է:

Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքի էության հետ կապված հիմնահարցերը մշտապէս եղել են տեսական վեճերի առարկա, ինչի արդյունքում ձևավորվել են տարբեր միջազգային իրավական տեսություններ նշված խնդրի կապակցությամբ:

Ազատ տարանցման տեսությունը հիմնվում է բնական իրավունքի վրա, ինչից բխում է, որ բոլոր ներմայրցամաքային պետությունները ծովեզերք ունեցող պետությունների սուվերեն տարածքով ունեն ազատ տարանցման իրավունք: Բնական իրավունքի տեսության կողմնակից հին հռոմեացի իրավաբան Ուլպիանոսը նշում է, որ ծովը բնության կողմից նախատեսված է յուրաքանչյուրի օգտագործման համար²:

Միջազգային իրավունքի հիմնադիր հոլանդացի ականավոր իրավաբան Հյուգո Հրոցիուսը ծովեզերք ունեցող և ծովեզերք չունեցող պետությունների միջև որևէ տարբերակում չի դնում, քանի որ բոլոր պետությունները տիրապետում են միևնույն բնական իրավունքին հարևան պետության տարածքով անվնաս անցնելու համար:

«Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին: Երեք գիրք» վերնագրով աշխատությունում Հրոցիուսը նշում է, որ ծովը ամբողջությամբ կամ ինչ որ մասով չի կարող լինել մասնավոր սեփականության առարկա³:

Իր աշխատությունում Հրոցիուսը առաջ է քաշում *խաղաղ անցման* սկզբունքը, նշելով, որ ազատ անցումը հողի, գետի կամ ծովի ցանկացած հատվածի միջով, որը պատկանում է որևէ կոնկրետ ժողովրդի, պետք է թույլատրվի նրանց, ովքեր դրա կարիքն ունեն բարի մտադրությունների համար, լինի դա բնակավայրեր փնտրելիս, իրենց երկրից վտարվելուց հետո, թե հեռավոր ժողովրդի հետ

² **Ulpian**, Mari quod natura omnibus patet. ,lib. I3, pr. D.VIII, 4.

³ **Hugo Grotius**, On the Law of War and Peace, Batoche Books, Kitchener, 2001, p. 75.

առևտրով կամ արդար պատերազմով իրենց կորցրած ունեցվածքի վերականգնման համար⁴:

Ազատ տարանցման տեսության կողմնակից էր նաև Ֆրանսիացի իրավաբան Շարլ դե Վիշերը, որը նշում է, որ տարանցումը բնական իրավունք է, ինչից օրենքով չի կարող զրկվել շրջափակված պետությունը⁵:

Այնուամենայնիվ, տեսական գրականության մեջ այս գաղափարն ընդունվեց ոչ միանշանակ: Ազատ տարանցման տեսության հակառակորդները պնդում են, որ այլ պետության տարածքով ազատ տարանցումը չպետք է խախտի պետությունների ինքնիշխանության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ պետությունների ինքնիշխանության սկզբունքը գերակա է ազատ տարանցման իրավունքից: Հետևաբար, ազատ տարանցման իրավունքի իրացումը յուրաքանչյուր դեպքում պետք է համաձայնեցվի ծովափնյա պետության կողմից, ում պատկանում է բացառիկ իրավասությունը տարանցումը թույլատրելու կամ մերժելու համար:

Միջազգային իրավունքի ականավոր գիտնականներ անգլիացի Արնոլդ Մաքնեյրը և ամերիկացի Չարլզ Հայդը նշում են, որ ներմայրցամաքային պետությունների տարանցման իրավունքը միջազգային իրավունքի կողմից ճանաչված համընդհանուր սկզբունք չէ, այլ ավելի շուտ ավամերձ պետությունների հետ կնքված համաձայնագրերով կարգավորվող իրավունք⁶:

Վերոգրյալ խնդրի կապակցությամբ տարբերակված մոտեցում է ցուցաբերում անգլիացի իրավաբան Է. Լաուտերպախտը: Նա նշում է, որ պետությունները կարող են օրինական հիմքերով իրացնել տարանցման իրավունքը երկու հիմնական նախապայմանների առկայության դեպքում: Նախ, տարանցման իրավունքին հավակնող պետությունը պետք է ի վիճակի լինի ապացուցել այդ իրավունքի հիմ-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 81:

⁵ **Visscher Ch.**, Le droit international des communications, A. Buyens, Paris, 1924, p.6:

⁶ **Kishor Uprety**, The transit regime for Landlocked States, The International Bank for Reconstruction and Development/The World Bank/, Washington DC, 2006, p. 28:

նավորվածությունն ու անհրաժեշտությունը, երկրորդ՝ այդ իրավունքի իրացումը չպետք է վնաս պատճառի տարանցիկ պետությանը⁷:

Հարկ է նշել, որ պետությունների կողմից վերը նշված երկու սկզբունքների վերաբերյալ առճակատում ուղեկցվել է ՄԱԿ-ի ծովային իրավունքի վերաբերյալ տեղի ունեցած խորհրդածողությունների ընթացքում:

Երկրորդ տեսությունը բխում է **բաց ծովի ազատության** սկզբունքից: Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ ծովը բոլոր ազգերի համընդհանուր արժեք է, այստեղ գործում է *res-communis* սկզբունքը, հետևաբար, բոլոր պետությունները՝ այդ թվում ծովեզերք չունեցողները, պետք է դեպի ծով ազատ հասանելիության իրավունք ունենան:

Ֆրանսիացի միջազգայնագետ-իրավաբան Ջորջ Սսելի կարծիքով նորմը, որի համաձայն ծովեզերք չունեցող պետությունների ժողովուրդները կզրկվեն ծովի հասանելիությունից, կհակասի ծովերի ազատության բնույթին: Ծովային սահման չունեցող ժողովուրդների կողմից ծովի օգտագործման բացառումը, կհակասի միջազգային հանրային տիրապետման էությանը⁸:

Ամերիկացի իրավաբան Նորման Փաունզը իր «Ազատ և ապահով մուտք դեպի ծով» աշխատությունում նշում է. «Եթե օվկիանոսներն ազատորեն բաց են ողջ մարդկության համար, ապա խելամիտ է ենթադրել, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է հասանելիություն ունենա օվկիանոսի ավերին և իրավունք ունենա լողալ օվկիանոսներ թափվող բոլոր նավազնացային գետերով, քանի որ դրանք միայն բաց ծովերի բնական շարունակությունն են»⁹:

⁷ **E. Lauterpacht**, Freedom of Transit in International Law, 44 Transactions of the Grotius Society 332 (1958–59):

⁸ **Scelle George**. Manual de droit international public. Paris., 1941, part I, p. 389:

⁹ **Norman J. G. Pounds**, A Free and Secure Access to the Sea, 49 Annals Assoc. Amer. Geographers 257 (1959), տե՛ս նաև՝ **Голицын В. В.**, Становление и развитие права доступа к морю внутриконтинентальных государств, Материалы по морскому праву и международному торговому мореплаванию, Союзморниипроект, вып. 7, Москва, 1975, էջ 40:

Այս տեսության հետևորդների կարծիքով դեպի ծով ազատ հասանելիության սկզբունքը բխում է բաց ծովի ազատության սկզբունքից, այն բաց ծովի ազատության սկզբունքի տրամաբանական շարունակությունն ու արդյունքն է: Բաց ծովը, որպես միջազգային համընդհանուր արժեք, պետք է հասանելի լինի բոլորի՝ այդ թվում ներմայրցամաքային պետությունների համար, հակառակ պարագայում իմաստագրկվում է այդ սկզբունքի էությունը, այն ուղղակի հոչակագրային բնույթ կկրի:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման հիմնախնդրի լուծմանն ուղղված երրորդ ուղղությունը առնչվում է **միջազգային սերվիտուտին**:

Միջազգային սերվիտուտը պետությունների կողմից երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի հիման վրա կոնկրետ նպատակների համար տարածքի մշտական օգտագործման իրավունք է:

Ամերիկացի իրավաբան Հ. Դ. Ռեյդը նշում է, որ ներմայրցամաքային պետությունների դեպի ծով մշտական և շարունակական հասանելիությունը երաշխավորելու համար գոյություն ունի երկու ճանապարհ: Այն, կա՛մ ծովափին միացնող տարածքի ցեսիան է, կա՛մ սերվիտուտի տրամադրումը. տարանցման իրավունք՝ հարևան պետությունների տարածքային ինքնիշխանության պահպանման պայմանով: Ռեյդը կարծում է, որ ծովեզերք ունեցող պետությունը, ելնելով միջազգային համագործակցության հետաքրքրություններից, նախևառաջ հակված կլինի իր տարածքով տրամադրել մշտական տարանցման իրավունք, քան ցեսիայի միջոցով կզիջի իր տարածքի ինչ-որ մի մասը, հետևաբար, ըստ հեղինակի, սերվիտուտը միակ հնարավոր մեթոդն է, որը կարող է երաշխավորել ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով մշտական հասանելիության իրավունքը¹⁰:

Գերմանացի իրավաբան Լ. Օպենհեյմի անդամաբ միջազգային սերվիտուտը պայմանագրով սահմանված պետության տարածքա-

¹⁰ **Reid H. Dwight.** International Servitudes in Law and Practice, Chicago, 1932, p. 131.

յին գերակայության բացառիկ սահմանափակում է, որի միջոցով պետության ամբողջ տարածքը կամ դրա ինչ-որ մասը մշտական հիմունքներով պետք է ծառայի այլ պետության կոնկրետ նպատակներին և հետաքրքրությունների համար¹¹:

Հաշվի առնելով վերը նշված տեսակետները՝ միջազգային սերվիտուտի տեսությունը որոշ գիտնական-իրավաբանների կողմից առաջ է քաշվել որպես ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության հիմնախնդրի լուծման տարբերակ: Այնուամենայնիվ, այս տեսությունը արժանացել է բազմաթիվ քննադատությունների, ինչի արդյունքում ներկայումս պատշաճ աջակցություն տեսաբանների կողմից չի գտնում:

Այս տեսության քննադատողները այն համարում են բավական խոցելի, քանի որ, ըստ միջազգային սերվիտուտի տեսության, միջազգային իրավունքը ծովեզերք չունեցող պետություններին տրամադրում է բացարձակ իրավունք այլ պետության տարածքով տարանցում իրականացնելու համար, ինչը ուղղակիորեն հակասում է պետությունների ինքնիշխանության սկզբունքին:

Ավելին, որոշ հեղինակներ ընդհանրապես բացառում են միջազգային հանրային իրավունքում սերվիտուտի գոյությունը, նրանց պնդմամբ այս տեսությունը գործնականում իրացվելու որևէ պատշաճ կառուցակարգ չի բացահայտել, իսկ ներկայացվող հայեցակարգերը միջազգային իրավունքում ամուր հիքեր չունեն¹²:

Հարկ է նշել, որ միջազգային դատական պրակտիկան նույնպես մերժում է միջազգային սերվիտուտի դոկտրինը:

Հյուսիսատլանտյան ափին ձկնորսության գործով ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ծագած վեճով Արբիտրաժային դատարանի

¹¹ **Оппенгейм Л.**, Международное право, Издательство иностранной литературы, том I, Москва, 1949, ст. 109, տե՛ս նաև՝ **Kishor Uprety**, The transit regime for Landlocked States, The International Bank for Reconstruction and Development/The World Bank, Washington DC, 2006, p. 32.

¹² Տե՛ս **Martin Ira Glassner**, Access to the Sea for the Developing Landlocked States, Martinus Nijhoff Publishers, Hague, 1970:

մշտական պալատը 1910 թվականի սեպտեմբերի 10-ին կայացրած վճռով նշել է, որ միջազգային սերվիտուտը հակասում է պետությունների ինքնիշխանության սկզբունքին¹³:

Մեկ այլ՝ Ուիմբլդոնի գործով (Ֆրանսիան ընդդեմ Գերմանիայի) Արդարադատության միջազգային մշտական դատարանը ձեռնպահ է մնացել մեկանաբանել միջազգային սերվիտուտի կիրառման վերաբերյալ կողմերի բարձրացրած պնդումները: Որոշման մեջ Դատարանը նշել է. «Դատարանը պարտավոր չէ կոնկրետ դիրքորոշում հայտնել հակասական բնույթ կրող այն հարցին թե արդյո՞ք միջազգային իրավունքում կան սերվիտուտներ, որոնք նույնական են մասնավոր իրավունքի սերվիտուտներին»¹⁴:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային իրավունքի կանոնակարգումը սկսվեց առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորման գործընթացին զուգահեռ:

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքի հարցը մեկնաբանվում էր որպես տարանցման ազատության բաղկացուցիչ մաս, որը պետությունները ձգտում էին ամրագրել որպես միջազգային իրավունքի սկզբունք: Այն իր արտացոլումն է գտել մի շարք միջազգային պայմանագրերում և համաձայնագրերում:¹⁵

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքված Վերսալ-վաշիգտոնյան համակարգի խաղաղության բոլոր պայմանագրերում

¹³ The North Atlantic Coast Fisheries Case (Great Britain, United States) 7 September 1910, UNITED NATIONS VOLUME XI pp. 167-226, https://legal.un.org/riaa/cases/vol_XI/167-226.pdf, (հասանելի է 08.01.2020թ.):

¹⁴ Wimbledon Case (France v. Germany), 1923 P.C.I.J. (ser. A) No. 1, at 24.

¹⁵ См. у **Голицын В. В.**, Становление и развитие права доступа к морю внутриконтинентальных государств, Материалы по морскому праву и международному торговому мореплаванию, Союзморнииинпроект, вып. 7, Москва, 1975, ст. 39:

նախատեսվել էին կարգավորումներ, որտեղ ճանաչվում էր ծովեզերք չունեցող դաշնակից պետությունների նավերի դրոշի իրավունքը, ինչպես նաև պետությունների ազատ հաղորդակցման և տարանցման ազատությունը¹⁶:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային իրավունքի հետագա զարգացման համար կարևոր նախապայման է Ազգերի լիգայի ստատուտը, որի 23-րդ հոդվածի համաձայն՝ Ազգերի լիգայի անդամները պարտավոր էին «հաղորդակցության և տարանցման ազատության, ինչպես նաև Լիգայի բոլոր անդամների համար առևտրի արդարացի ռեժիմի երաշխիքների ապահովման և պահպանման համար անհրաժեշտ որոշումներ ընդունել»:

Վերը նշված հոդվածով նախատեսված կարգավորումները կյանքի կոչելու նպատակով 1921 թվականի մարտին Բարսելոնայում 44 պետությունների մասնակցությամբ տեղի ունեցավ Ազգերի լիգայի Խորհրդի գլխավոր խորհրդածողովը, որի արդյունքում նույն թվականի ապրիլի 20-ին ընդունվեց «Տարանցման ազատության մասին

¹⁶ Վերսալի պայմանագրի 273-րդ հոդվածի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում են ճանաչել ծովեզերք չունեցող դաշնակից պետությունների նավերի դրոշի իրավունքը, իսկ 338-րդ, 379-րդ հոդվածներում երաշխավորվում է պետությունների հաղորդակցման և տարանցման իրավունքները: Տե՛ս Treaty of peace with Germany (treaty of versailles) // <https://www.loc.gov/-law/help/us-treaties/bevans/m-ust000002-0043.pdf>, (հասանելի է 09.01.2020թ.): Հարկ է նշել, որ նույնաբովանդակ կարգավորումներ են նախատեսված նաև Սեն-Ժերմենի, Տրիանոնի, Նեյի հաշտության պայմանագրերում: Տե՛ս Treaty of St Germain (Treaty of Peace between the Allied and Associated Powers and Austria // <https://www.dipublico.org/100758/treaty-of-st-germain-treaty-of-peace-between-the-allied-and-associated-powers-and-austria/>, (հասանելի է 09.01.2021թ.): Տե՛ս Treaty of Peace Between The Allied and Associated Powers and Hungary// https://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Trianon, (հասանելի է 09.01.2021թ.): Դաշնակից պետությունների ազատ տարանցման իրավունքը երաշխավորված էր նաև Սևրի պայմանագրում, որի 328-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր միջազգային տարանցման համար առավել հարմար երթուղիներով տարանցման ազատություն տրամադրել դաշնակից պետություններին: Տե՛ս Treaty of Peace Between The Allied & Associated Powers and Turkey, http://sam.baskent.edu.tr/belge/Sevres_ENG.pdf (հասանելի է 09.01.2021թ.):

կոնվենցիան և կանոնադրությունը»¹⁷, ինչպես նաև «Ծովեզերք չունեցող պետությունների դրոշի իրավունքը ճանաչելու մասին հռչակագիրը»¹⁸ Հարկ է նշել, որ Խորհրդաժողովի աշխատանքների կարևոր արդյունք են նաև «Միջազգային նշանակության նավագնացային ջրային ուղիների ռեժիմի մասին կոնվենցիայի և կանոնադրության»¹⁹ և դրան կից լրացուցիչ արձանագրության ստորագրումը²⁰:

Վերը նշված փաստաթղթերով մասնակից պետությունները պարտավորվել են նպաստել երկաթուղային և ջրային ուղիներով ազատ տարանցման իրականացմանը, ինչպես նաև փոխադարձության սկզբունքի հիման վրա ապահովել նավահանգիստներում և միջազգային նշանակություն ունեցող ջրային ուղիներում ազգային ռեժիմով նավարկելու իրավունքը: Բացի այդ, տարանցիկ փոխադրումների իրականացման ժամանակ հատուկ տուրքերի բացառումը կարևոր նշանակություն ունեւ ներմայրցամաքային պետությունների միջազգային առևտրում մրցունակությունը բարձրացնելու համար:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ ծովեզերք չունեցող պետությունների դրոշի իրավունքը ճանաչելու մասին հռչակագրի ընդունումը, որով ամրագրվեց ներմայրցամաքային պետությունների՝ ազգային դրոշի ներքո նավեր ունենալու իրավունքը:

Այնուամենայնիվ, բարսելոնյան Խորհրդաժողովի արդյունքում ընդունված պայմանագրերում պարունակվող ձևակերպումների

¹⁷ Հայաստանի Հանրապետությունը «Տարանցման ազատության մասին կոնվենցիան և կանոնադրությունը» վավերացրել է 2013 թվականի փետրվարի 27-ին: Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85992> (հասանելի է 10.01.2021թ.):

¹⁸ Տե՛ս League of Nations, Treaty Series Publication of Treaties and International Engagements Registered with the Secretariat of the League of Nations. vol.7, p.73.// [https://treaties.un.org/doc/Publication/UNTS/LON/Volume 7/v7.pdf](https://treaties.un.org/doc/Publication/UNTS/LON/Volume%207/v7.pdf) (հասանելի է 10.01.2021թ.):

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

անորոշությունը գործնականում դժվարացնում էր այդ համաձայնագրերի պատշաճ կիրառումը:

Նախ, վերը նշված փաստաթղթերում խոսվում է ոչ թե տարանցման «իրավունքի», այլ «ազատության» մասին: Բացի այդ, մասնակից պետությունները իրավունք ունեին մերժել տարանցման թույլտվությունը՝ ելնելով հանրային առողջության, հասարակական անվտանգության նկատառումներից: Տարանցման թույլտվության մերժման հիմքում պետությունները կարող էին վկայակոչել նաև միջազգային կոնվենցիաների դրույթները կամ Ազգերի լիգայի որոշումները:

Բարսելոնյան խորհրդաժողովի արդյունքում ընդունված համաձայնագրերում փորձ է արվել հավասարակշռել տարանցման ազատության և պետությունների ինքնիշխանության սկզբունքները: Այն իր ցույց է դնում պրոտեկցիոնիստական համատեքստում կառուցված փխրուն իրավական ռեժիմի հակասությունները, որտեղ տարանցումն ավելի շուտ արտոնություն է, քան իրական իրավունք²¹:

Հարկ է նշել նաև, որ նշված կոնվենցիաներում ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքի վերաբերյալ առանձին կարգավորում նախատեսված չէր, ինչը ներմայրցամաքային պետություններին դրդում էր դեպի ծով հասանելիություն ունենալու իրավունքը ապահովել ծովեզերք ունեցող պետությունների հետ երկկողմ համաձայնագրերի կնքման միջոցով:

Այնուամենայնիվ, Բարսելոնյան խորհրդաժողովի արդյունքում ընդունված կոնվենցիաները անկյունաքարային դեր ունեցան ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային ծովային իրավունքի հետագա զարգացման գործում, ինչի արդյունքում երկու տարի անց՝ 1923 թվականին Ժնևում տեղի ունեցած երկրորդ գլխավոր խորհրդաժողովում ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր, որոնցից ներմայրցամաքա-

²¹ St' u **Kishor Uprety**, The transit regime for Landlocked States, The International Bank for Reconstruction and Development/The World Bank, Washington DC, 2006, էջ 49:

յին պետությունների համար հետաքրքրություն էին ներկայացնում «Ծովային նավահանգիստների միջազգային ռեժիմի վերաբերյալ» կոնվենցիան և կանոնադրությունը,²² որով երաշխավորվեց ներմայրցամաքային պետությունների իրավունքները ծովեզերք ունեցող պետությունների հետ հավասար պայմաններով նավահանգիստներից օգտվելու իրավունքը: Կոնվենցիան ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ուներ փոխադարձության սկզբունքից բացառող կարգավորումների ամրագրումը: Խնդիրը կայանում էր նրանում, որ աշխարհագրական դիրքը ներմայրցամաքային պետություններին թույլ չէր տալիս այլ պետություններին փոխադարձության հիման վրա նույնական իրավունքներ տրամադրել նավահանգիստների օգտագործման համար, ինչով էլ պայմանավորված մասնակից պետությունները հրաժարվեցին փոխադարձության սկզբունքից հօգուտ ներմայրցամաքային պետությունների: Այնուհանդերձ, փոխադարձության սկզբունքը շարունակում էր գործել տարանցման իրավունքի մասով, ինչից հետևում էր, որ ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքի գործնական իրացումը շարունակում էր կախված մնալ ծովեզերք ունեցող պետությունների համաձայնությունից:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային ծովային իրավունքի կողմնակցումը նոր թափ առավ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո:

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը զբաղվում էր միջազգային ծովային իրավունքի վերաբերյալ նախագծերի պատրաստմամբ, 1949-1956թթ. ներկայացված որևէ նախագծում չներառեց ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիությո-

²² St' u League of Nations, Treaty Series Publication of Treaties and International Engagements Registered with the Secretariat of the League of Nations, vol 58, p. 285, // [https://treaties.un.org/doc/Publication/UNTS/LON/Volume 58/v58.pdf](https://treaties.un.org/doc/Publication/UNTS/LON/Volume%2058/v58.pdf), (հասանելի է 10.01.2020թ.):

յան իրավունքին վերաբերող հիմնահարցերը:²³ Նման իրավիճակը չէր գոհացնում ներմայրցամաքային պետություններին, որոնց պահաջով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1957 թվականի փետրվարին ընդունեց երկու՝ 1028(XI)²⁴ և 1105(XI)²⁵ բանաձևերը, որտեղ պետություններին առաջարկում էր ծովային իրավունքի վերաբերյալ կայանալիք խորհրդաժողովում քննարկել ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի հետ կապված հիմնահարցերը:

1958 թվականի փետրվարի 24-ից ապրիլի 27-ը տեղի ունեցավ ՄԱԿ-ի ծովային իրավունքի վերաբերյալ առաջին խորհրդաժողովը: Խորհրդաժողովի ընթացքում ներմայրցամաքային պետությունների պահանջով ստեղծվեց առանձին՝ Հինգերորդ կոմիտեն, որին հանձնարարված էր ուսումնասիրել դեպի ծով ազատ հասանելիության հիմնախնդիրը և ներկայացնել առանձին կոնվենցիայի նախագիծ, որը կարող էր ներառվել բաց ծովի ռեժիմի վերաբերյալ կողիֆիկացման ընդհանուր աշխատանքներին:

Խորհրդաժողովի ընթացքում դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի էության և բնույթի հետ կապված հարցերը դարձան պետությունների միջև հիմնական հակասության առանցքը: Ներմայրցամաքային պետությունները պնդում էին, որ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունք է, իսկ ծովեզերք ունեցող պետությունները այն դիտարկում էին որպես խիստ կոնվենցիոնալ բնույթ ունեցող իրավունք, հիմքում դնելով այն հանգամանքը, որ նշված իրավունքը հա-

²³ Ст'ю Голицын В.В., Становление и развитие права доступа к морю внутриконтинентальных государств, Материалы по морскому праву и международному торговому мореплаванию, Союзморниипроект, вып. 7, Москва, 1975, էջ 40:

²⁴ UN General Assembly Resolution 1028 (XI): Landlocked Countries and the Expansion of International Trade, 656th plenary meeting, February 20, 1957// [https://undocs.org/en/A/RES/1028\(XI\)](https://undocs.org/en/A/RES/1028(XI)), (հասանելի է 10.01.2020թ.):

²⁵ UN General Assembly Resolution 1105 (XI): International Conference of Plenipotentiaries to Examine the Law of the Sea, 658th plenary meeting, February 21, 1957// [https://undocs.org/en/A/RES/1105\(XI\)](https://undocs.org/en/A/RES/1105(XI)), (հասանելի է 10.01.2020թ.):

կադրվում է պետությունների ինքնիշխանության սկզբունքի հետ, ուստի այն անմիջական կախվածության մեջ է պետությունների երկկողմ կամահայտնությունից:

Ներմայրցամաքային պետությունների դիրքորոշման համաձայն՝ պետությունների ինքնիշխանության սկզբունքը կաշկանդված է դեպի ծով հասանելիության իրավունքով, քանի որ աշխարհագրական ոչ բարենպաստ դիրքում գտնվող պետությունների համար այն կենսական, գոյապահպանման նշանակություն ունի: Ի հակադրումն ներմայրցամաքային պետությունների դիրքորոշման՝ ծովեզերք ունեցող պետությունները նշում էին, որ մեկ այլ պետության տարածքով տարանցման իրավունքը կախված է բացառապես նշված պետության համաձայնությունից: Թայլանդի թագավորության ներկայացուցչի դիրքորոշմամբ՝ ներմայրցամաքային պետությունների՝ հարևան պետությունների տարածքով տարանցման իրավունքը բնական իրավունք չէ, և այն կարող է իրացվել բացառապես կողմերի միջև կնքված համաձայնագրերով²⁶: Նման դիրքորոշումներ են հայտնել նաև Պակիստանի, Հնդկաստանի ներկայացուցիչները:

Քննարկումների արդյունքում, որպես փոխգիշումային տարբերակ, որոշ փոփոխություններով ընդունվեց Շվեյցարիայի պատվիրակության առաջարկած նախագիծը, որը հետագայում արտացոլվեց 1958 թվականի «Բաց ծովի մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ ծովեզերք չունեցող պետությունները ծովերի ազատությունից ավամերձ պետությունների հետ հավասար իրավունքներով օգտվելու համար պետք է ազատ մուտք ունենան դեպի ծով:

Վերլուծելով վերը նշված հոդվածը՝ կարելի է եզրահանգել, որ ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի իրացումը հնարավոր է երեք նախապայմանների առկայության դեպքում.

²⁶ UN Conference on the law of the sea official records, vol. VII, Fifth Committee (Question of Free Access to the Sea of Land-locked Countries) Summary records of meetings and Annexes, (A/CONF.13/43), p. 25.

➤ ծովեզերք ունեցող պետության տարածքով ընդհանուր համաձայնության միջոցով ներմայրցամաքային պետությանը «ազատ տարանցման» տրամադրում,

➤ տրամադրվող իրավունքների պարտադիր փոխադարձություն,

➤ ծովեզերք ունեցող պետության կողմից տարանցման իրավունքների ծավալների հստակեցում²⁷:

Այսպիսով, խորհրդաժողովի արդյունքում ստորագրված «Բաց ծովի մասին» կոնվենցիայում թեև ամրագրվեց ներմայրցամաքային պետությունների դեպի ծով հասանելիության իրավունքը, սակայն այն կրկին անգամ սահմանափակվեց փոխադարձության պայմանով: Դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի արդյունավետ իրացման ճանապարհը շարունակում էր մնալ պետությունների միջև երկկողմ համաձայնագրերի ստորագրումը, որոնց վերաբերյալ կոնվենցիան որևէ չափանիշ չէր նախատեսում: Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի իրացումը շարունակում էր կախվածության մեջ մնալ ծովեզերք ունեցող պետությունների բարի կամքի դրսևորումից: Ինչպես արդարացիորեն նշում է Վ. Գոլիցինը. «Գլխավորապես հիմք ընդունելով ծովափնյա պետությունների շահերի պաշտպանությունը՝ «Բաց ծովի մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածը փաստորեն վատթարացրել է միջազգային սովորության իրավունքի նորմի բովանդակությունը, որը երաշխավորում էր դեպի ծով հասանելիության իրավունքը համաձայնության բացակայության դեպքում»²⁸:

Հարկ է նշել, որ Խորհրդաժողովի արդյունքում «Բաց ծովի մասին» կոնվենցիայի հետ մեկտեղ ընդունվեցին ևս 3 կոնվենցիաներ՝ «Տարածքային ծովի և հարակից գոտու մասին», «Մայրցամաքային ելուստի մասին» և «Ձկնորսության և բաց ծովի կենդանի պաշարներ-

²⁷ St' u **Клименко Б. М.**, Право прохода через иностранную территорию, ИМО, Москва 1967, էջ 14-15:

²⁸ **Голицын, В. В.** Внутриконтинентальные государства и международное морское право, Междунар. отношения, Москва, 1978, ст. 21.

րի պահպանության մասին»։ Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված կարգավորումներ պարունակում է «Տարածքային ծովի և հարակից գոտու մասին» կոնվենցիան, որի 14-րդ հոդվածը ներմայրցամաքային պետություններին երաշխավորում է ծովեզերք ունեցող պետության տարածքային ծովով խաղաղ անցման իրավունքը։ Կոնվենցիան խաղաղ անցման իրավունքը բացառապես կապում էր տարածքային ծովով տարանցման իրավունքին, ինչը ենթադրում էր, որ ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը շարունակում է կախված մնալ ծովեզերք ունեցող պետության տարածքով (մայրցամաքային հատվածով) տարանցման թույլտվությունից։

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված հետագա զարգացումը կապված է ՄԱԿ-ի առևտրի և զարգացման առաջին խորհրդաժողովի հետ (ՅՈՒՆԿՏԱԴ), որը տեղի է ունեցել 1964 թվականին Ժնևում։ Խորհրդաժողովի արդյունքում ընդունվեց «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» կոնվենցիան²⁹։

Հիմք ընդունելով ներմայրցամաքային պետությունների տնտեսական զարգացման անհրաժեշտությունը՝ Կոնվենցիայի նախաբանում ամրագրվել է միմյանց փոխլրացնող և փոխկապակցված ութ սկզբունքներ։ Հիմնավորելով առևտրի նպատակով դեպի ծով հասանելիության անհրաժեշտությունը՝ սկզբունքները ամրագրում են ազատ և անսահմանափակ տարանցման հնարավորություններ ներմայրցամաքային պետությունների համար։

«Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» կոնվենցիան մեծապես նպաստել է դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի հասկացության հստակեցմանը։

²⁹ Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 2013թ. փետրվարի 26-ին։ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85990>, (հասանելի է 13.01.2021թ.)։

Կոնվենցիան բացահայտում է «դեպի ծով ելք չունեցող պետություն», «տարանցիկ փոխադրում», «տարանցիկ պետություն», «փոխադրամիջոց» հասկացությունները, մանրամասն կարգավորում է ծովեզերք ունեցող պետությունների տարածքով ապրանքների և բեռների տարանցման պայմանները: Ընդ որում, Կոնվենցիան բացառություն է անում առավելագույն բարենպաստման դրույթի գործողությունը, ինչով պայմանավորված ներմայրցամաքային պետություններին տրամադրվող արտոնությունները չեն ընկնում նշված սկզբունքի տիրույթի մեջ:

Այնուհանդերձ, Կոնվենցիան պահպանում է փոխադարձության սկզբունքը, որն իր արտացոլումն է գտել ինչպես նախաբանում, այնպես էլ կոնվենցիայի բուն տեքստում:

Ինչպես նախորդ միջազգային փաստաթղթերը, Նյու Յորքի կոնվենցիայում նույնպես, ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքը սահմանափակվում է ծովեզերք ունեցող պետությունների տարածքային ինքնիշխանության սկզբունքով, ինչը արտահայտվում է Կոնվենցիայի առաջին և հինգերորդ սկզբունքների հակասությունով:

Իր բոլոր թերություններով հանդերձ, 1965 թվականի Նյու Յորքի կոնվենցիան ներմայրցամաքային պետությունների իրավունքները երաշխավորող առաջին համապարփակ փաստաթուղթն էր, որը բացառապես նվիրված էր ներմայրցամաքային պետությունների հիմնախնդիրներին:

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային իրավունքի հետագա զարգացման համար անկյունաքարային դեր խաղաց Ծովային իրավունքի ՄԱԿ-ի 3-րդ խորհրդաժողովը, որը տեղի է ունեցել 1973-1982 թթ.: Խորհրդրդաժողովին մասնակցել են 164 պետությունների ներկայացուցիչներ և զգալի թվով դիտորդներ³⁰: Այն մինչ այդ պահը հրավիրված ամենամեծ դիվանագիտական կոնֆերանսն էր, որի ընթացքում կայացել

³⁰ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Միջազգային իրավունք, Երևան, ԵՊՀ հրատ., 2002թ., էջ 307:

է 11 նստաշրջան: Ինչպես նախորդ խորհրդաժողովներին, այս անգամ նույնպես ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման հիմնախնդիրը լուրջ տարաձայնությունների առիթ դարձավ ծովեզերք ունեցող պետությունների և ներմայրցամաքային պետությունների համար:

Պետությունների հիմնական տարաձայնությունը կապված էր դեպի ծով հասանելիության իրավունքի էության հետ: Ներմայրցամաքային պետությունները պնդում էին, որ դեպի ծով հասանելիության իրավունքը միջազգային իրավունքի համընդհանուր և իրավաբանորեն պարտադիր սկզբունք է, որը պետք է ամրագրվի նաև միջազգային ծովային իրավունքի նոր կողիֆիկացման գործընթացում: Չնայած մի շարք ծովեզերք ունեցող պետություններ սատարեցին ներմայրցամաքային պետությունների դիրքորոշմանը³¹՝ այնուամենայնիվ, ծովեզերք ունեցող պետությունների մեծ մասը դեմ արտահայտվեցին նման գաղափարին: Ծովեզերք ունեցող պետությունները, հիմք ընդունելով 1965 թվականի Նյու Յորքի կոնվենցիան, նշում էին, որ դեպի ծով հասանելիության իրավունքը պետք է գործի փոխադարձության սկզբունքի հիման վրա հարևան պետությունների միջև երկկողմ համաձայնագրերի կնքման միջոցով:³²

³¹ Տե՛ս ԽՍՀՄ ներկայացուցչի դիրքորոշումը, Third United Nations Conference on the Law of the Sea 1973-1982 Concluded at Montego Bay, Jamaica on 10 December 1982 Document:- A/CONF.62/C.2/SR.31 Summary records of meetings of the Second Committee 30th meeting (1974), p. 234, // Third United Nations Conference on the Law of the Sea, 1973-82, volume II, Summary Records of the Second Committee, Second Session: 31st meeting A/CONF.62/C.2/SR.31, (հասանելի է 23.01.2021թ.):

³² Տե՛ս Իրանի ներկայացուցչի դիրքորոշումը, Third United Nations Conference on the Law of the Sea 1973-1982 Concluded at Montego Bay, Jamaica on 10 December 1982 Document:- A/CONF.62/ SR.23 Summary Records of Plenary Meetings 23rd plenary meeting, p 72, //Third United Nations Conference on the Law of the Sea, 1973-82, volume I, Summary Records of Plenary Meetings, Second Session: 23rd plenary meeting A/CONF.62/SR.23 (հասանելի է 23.01.2021թ.): Տե՛ս Պակիստանի ներկայացուցչի դիրքորոշումը, Third United Nations Conference on the Law of the Sea 1973-1982 Concluded at Montego Bay, Jamaica on 10 December 1982 Document:- A/CONF.62/SR.35 Summary Records of Plenary Meetings 35th plenary meeting, p. 146, // Third United Nations Conference on the Law of the Sea, 1973-82, volume I,

ՄԱԿ-ի ծովային հատակի հարցերով կոմիտեի շրջանակներում ներմայրցամաքային պետությունները աշխարհագրական ոչ բարենպաստ դիրքում գտնվող պետությունների հետ համագործակցության արդյունքում մշակեցին նրանց իրավունքների ապահովմանն ուղղված հոդվածների նախագիծ, որտեղ ամբողջացված էր ներմայրցամաքային պետությունների իրավունքները երաշխավորող հիմնական սկզբունքները: Դրանք իրենց արտացոլումը գտան 1974 թվականի մարտ ամսին Ուգանդայի Կամպալա քաղաքում տեղի ունեցած նստաշրջանի արդյունքում ընդունված Հռչակագրում:³³ Հետագայում Հռչակագրում տեղ գտած դրույթները որոշակի փոփոխություններով ամրագրվեցին ՄԱԿ-ի Ծովային իրավունքի մասին 1982 թվականի կոնվենցիայում:

ՄԱԿ-ի Ծովային իրավունքի 1982թ. Կոնվենցիան կարելի է բնորոշել որպես համաշխարհային օվկիանոսի տարածությունների իրավական կարգավիճակը և իրավաբանական ռեժիմը սահմանող միջազգային ծովային իրավունքի հիմնական աղբյուր: Այն միջազգային ծովային իրավունքը կողիֆիկացնող և միաժամանակ դրա առաջընթաց զարգացումն ապահովող փաստաթուղթ է:³⁴

Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերը Կոնվենցիայում առանձնացված են 10-րդ մասում:

Կոնվենցիայի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Դեպի ծով ելք չունեցող պետություններն ունեն ծովից և դեպի ծով մուտքի իրավունք՝ սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքների, այդ թվում՝ բաց ծովի ազատությանը և մարդկության ընդհանուր ժառանգությանը վերաբերող իրավունքների իրականացման նպատա-*

Summary Records of Plenary Meetings, Second Session: 35th plenary meeting A/CONF.62/SR.35, (հասանելի է 23.01.2021թ.):

³³ Տե՛ս A/CONF.62/23 The Kampala Declaration, Third United Nations Conference on the Law of the Sea, 1973-82, volume III, Documents of the Conference, Second Session: The Kampala Declaration A/CONF.62/23, (հասանելի է 23.01.2021թ.):

³⁴ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Միջազգային իրավունք, Երևան, ԵՊՀ հրատ., 2002 թ., էջ 307:

կով: Այդ նպատակով դեպի ծով ելք չունեցող պետություններն օգտվում են տարանցիկ պետությունների տարածքներով բոլոր տրանսպորտային միջոցներով տարանցման ազատությունից:

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից ակնհայտ է, որ Կոնվենցիան բացառում է փոխադարձության սկզբունքի կիրառումը, բացի այդ, ի տարբերություն «Բաց ծովի մասին» կոնվենցիայի, այստեղ առանց երկիմաստությունների ամրագրվում է ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը: Հարկ է նշել, որ դեպի ծով հասանելիության իրավունքը Կոնվենցիան բխեցնում է միջազգային իրավունքի երկու հիմնադրություններից՝ *մարդկության ընդհանուր ժառանգության* և *բաց ծովի ազատության* սկզբունքներից:

Նշված համատեքստում պետք է մեկնաբանվի նաև վերոնշյալ հոդվածով նախատեսված տարանցիկ պետության տարածքով տարանցման ազատության բովանդակությունը: Վերոնշյալ հոդվածում տարանցման ազատությունը ներկայացվում է որպես մարդկության ընդհանուր ժառանգության և բաց ծովի ազատության սկզբունքների իրացման նպատակ, որոնցից պետք է օգտվելու իրավունք ունենան բոլոր, այդ թվում՝ ծովեզերք չունեցող պետությունները:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ներմայրցամաքային պետությունների իրավունքների ամբողջական ապահովման համար, անհրաժեշտ է պետությունների միջև երկկողմ կամ տարածաշրջանային համաձայնագրերի առկայությունը, որի մասին խոսվում է Կոնվենցիայի 125-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ *տարանցման ազատության իրականացման պայմաններն ու կարգը պետք է համաձայնեցվեն դեպի ծով ելք չունեցող շահագրգիռ պետությունների և տարանցիկ պետությունների միջև՝ երկկողմ, ենթատարածաշրջանային կամ տարածաշրջանային համաձայնագրերի միջոցով:*

Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր նախապայման էր նաև տարանցման համար մաքսատուրքերի, հարկերի կամ այլ գանձումների բա-

ցառումը: Բացի այդ, ներմայրցամաքային պետությունները կարող են փոխադարձ համաձայնությամբ ծովեզերք ունեցող պետությունների նավահանգիստներում ստեղծել անմաքս գոտիներ: Կոնվենցիան նախատեսում է նաև նավահանգիստներում ներմայրցամաքային պետությունների դրոշով նավարկող նավերի համար ռեժիմի հավասարության սկզբունքը:

ՄԱԿ-ի ծովային իրավունքի մասին կոնվենցիան ամրագրում է ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված մի շարք այլ իրավունքներ, որոնք ներառված չեն եղել ծովային իրավունքի վերաբերյալ նախկինում ընդունված կոնվենցիաներում:

Կոնվենցիայով երաշխավորվում է ներմայրցամաքային պետությունների *տարածքային ծովով խաղաղ անցման, ծովեզերք ունեցող պետությունների բացառիկ տնտեսական գոտիներում կենդանի պաշարների օգտագործման իրավունքները*: Կոնվենցիայով ամրագրվում են ներմայրցամաքային պետությունների՝ *բաց ծովում նավագնացության, թռիչքների ազատության, ստորջրյա մալուխների և խողովակաշարերի անցկացնելու ազատության, արհեստական կղզիներ կառուցելու, ձկնորսության ազատության, գիտական հետազոտություններ իրականացնելու իրավունքները*:

Բացի այդ, Կոնվենցիայի 90-րդ հոդվածով ամրագրվում է ներմայրցամաքային պետությունների նավերի՝ *իրենց դրոշի ներքո բաց ծովում նավարկելու*, իսկ 141-րդ հոդվածով՝ *ծովերի ու օվկիանոսների հատակը և ընդերքը առանց խտրականության խաղաղ նպատակներով օգտագործելու*, այդ թվում՝ *գիտական հետազոտություններ իրականացնելու իրավունքները*:

Ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել, որ Կոնվենցիայում համակարգված ձևով կողիֆիկացվեցին պետությունների՝ տասնամյակների ընթացքում ձևավորված սովորության խորմերը: Այն հանդիսանում է ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային ծովային իրավունքի պոզիվի-

տացման գործընթացի վերջնարդյունքը: Որպես 1920 թվականներին սկսած ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված միջազգային ծովային իրավունքի կոդիֆիկացման գործընթացի ավարտ՝ այն իր մեջ ներառեց և կատարելագործեց մինչ այդ պահը գոյություն ունեցող միջազգային բոլոր փաստաթղթերում ամրագրված իրավունքները:

ՄԱԿ-ի ծովային իրավունքի 1982 թվականի կոնվենցիայի ընդունումը մեծ քայլ էր ներմայրցամաքային և ծովեզերք ունեցող պետությունների իրավունքների հավասարկշռման տեսանկյունից: Այն ներմայրցամաքային պետությունների իրավունքների երաշխավորման և հետագա զարգացման հիմնաքարն է: Մինչ այս պահը այն վավերացրել են 168 երկիր՝ այդ թվում Հայաստանի Հանրապետությունը:

ЭВОЛЮЦИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ, НАПРАВЛЕННОГО НА ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ ВНУТРИКОНТИНЕНТАЛЬНЫХ ГОСУДАРСТВ: ОТ ОБЫЧАЯ К КОДИФИКАЦИИ

Артур Абовян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

Проблема обеспечения прав внутриконтинентальных государств в процессе кодификации международного морского права была выражена в подчеркнутом противостоянии между государствами, имеющими морское побережье и внутриконтинентальными государствами. Положения, направленные на обеспечение прав внутриконтинентальных государств, получили свое отражение в конвенциях, принятых по итогам конференций по международному морскому праву. В статье приводятся теории о праве доступа к морю, эволюция регламентирования международного права, направленного на обеспечение прав внутриконтинентальных государств, сравнительному анализу подвергаются конвенции, касающиеся прав внутриконтинентальных государств.

**EVOLUTION OF LEGAL REGULATION AIMED AT ENSURING THE RIGHTS
OF LANDLOCKED STATES:
FROM CUSTOM TO CODIFICATION**

Arthur Abovyan

PhD student at YSU Chair of Constitutional Law

The problem of ensuring the rights of the Landlocked States in the process of codification of the International law of the Sea was expressed in the emphasized confrontation between the Coastal States and the Landlocked States. The provisions intended to ensure the rights of Landlocked States are reflected in the conventions adopted as a result of conferences on the International law of the Sea. The article presents the theories of the right of access to the sea, the evolution of the regulation of International law so as to guarantee the rights of Landlocked States, and the comparative analysis of the conventions concerning the rights of Landlocked States.

Բանալի բառեր - Միջազգային ծովային իրավունք, ներմայրցամաքային պետություններ, դեպի ծով հասանելիության իրավունք, տարանցման իրավունք:

Ключевые слова: международное морское право, внутриконтинентальные государства, право доступа к морю, транзитное право.

Key words: international law of the Sea, Landlocked States, right of access to the sea, transit right.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(2) 2020

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 11.11.2021:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 12.25:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am